



USAID
ԱՅԵՐԻՔԵԼԻ ՆԱԼԵՆՆՅԱՆ

Ժողովրդավարական
կառավարում Կրաստանում
(G3) Նախագիծ

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՔ

Վերոնշյալ օրենքի հրատարակումը հնարավոր դարձավ ամերիկյան ժողովրդի կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության USAID-ի ցուցաբերած օգնության շնորհիվ: Սույն հրատարակությունը չի արտահայտում Ամերիկայի Միացյալ Նահանգների զարգացման գործակալության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության հայացքները

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՔ

ԲԱԺԻՆ I

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 1. Օրենքի գործունեության բնագավառը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Սույն Օրենքը սահմանում է տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց ստեղծման և գործունեության կանոնները, դրանց ֆինանսները և գույքը, հարաբերությունները քաղաքացիների, պետական իշխանության մարմինների և հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության պետական վերահսկման և ուղղակի պետական կառավարման իրականացման կանոնները:

ՀՈՂՎԱԾ 2. Տեղական ինքնակառավարման հասկացությունը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Տեղական ինքնակառավարումը ինքնակառավարվող միավորում հաշվառված Վրաստանի քաղաքացիների իրավունքն է և հնարավորությունը, իրենց կողմից ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, Վրաստանի Օրենսդրության հիման վրա վճռել տեղական նշանակության հարցեր:

2. Ինքնակառավարվող միավորը մունիցիպալիտետն է: Մունիցիպալիտետը բնակավայր է (ինքնակառավարվող քաղաք), որն ունի վարչական սահմաններ, կամ բնակավայրերի միասնականություն է (ինքնակառավարվող համայնք), որն ունի վարչական սահմաններ և վարչական կենտրոն, ունի ընտրովի տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմիններ (այսուհետ՝ մունիցիպալ կամ մունիցիպալիտետի մարմիններ) և ունի սեփական գույք, բյուջե, մուտքեր: Մունիցիպալիտետն անկախ հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

ՀՈՂՎԱԾ 3. Մունիցիպալիտետներ՝ ինքնակառավարվող քաղաք և ինքնակառավարվող համայնք **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է մունիցիպալիտետներում՝ ինքնակառավարվող քաղաքում և ինքնակառավարվող համայնքում:

2. Ինքնակառավարվող քաղաքը քաղաքային կարգի բնակավայր է, որին սույն Օրենքի համաձայն շնորհվել է կամ շնորհվում է մունիցիպալիտետի կարգավիճակ:

3. Ինքնակառավարվող համայնքը մի քանի բնակավայրերի միասնականություն է, որին սույն Օրենքի համաձայն շնորհվել է կամ շնորհվում է մունիցիպալիտետի կարգավիճակ:

ՀՈՂՎԱԾ 4. Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավոր և մունիցիպալիտետի վարչական միավոր:

1. Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավորը բնակավայրն է, որն ունի անվանում, վարչական սահմաններ, տարածք և ունի հաշվառված բնակչություն: Բնակավայրի կարգերն են. **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

ա) Գյուղը՝ բնակավայր, որի սահմաններում հիմնականում ընդգրկված են գյուղատնտեսական նշանակության հողեր և այլ բնական ռեսուրսներ, և որի ենթակառուցվածքն Էականորեն կողմնորոշված է գյուղատնտեսական գործունեության իրականացման:

բ) Ավանը՝ բնակավայր, որի տարածքում տեղակայված են արդյունաբերական ձեռնարկություններ կամ/և զբոսաշրջական և կուրորտային հաստատություններ կամ/և բուժական և սոցիալ-մշակութային հաստատություններ, և որը կատարում է տեղական տնտեսական-մշակութային կենտրոնի գործառույթներ: Ավանի ենթակառուցվածքը Էականորեն կողմնորոշված է գյուղատնտեսական գործունեության իրականացման: Բնակավայրը կարող է ավանի կարգի հատկացվել, եթե այն ինքնակառավարվող միավորի վարչական կենտրոն է կամ ունի հետագա տնտեսական զարգացման և բնակչության աճի հեռանկար:

գ) Քաղաքը՝ բնակավայր, որի տարածքում տեղակայված է արդյունաբերական ձեռնարկություններ և զբոսաշրջական, բուժական և սոցիալ-մշակութային հաստատությունների ցանց, և որը կատարում է տեղական տնտեսական-մշակութային կենտրոնի գործառույթներ: Քաղաքի ենթակառուցվածքը չի կողմնորոշված գյուղատնտեսական գործունեության: Քաղաքի կարգի կարող է հատկացվել այն բնակավայրը, որի գրանցված բնակիչների թիվը 5000-ից ավելի է: Այն բնակավայրին, որի հաշվառված բնակիչների թիվը 5000-ից պակաս է, կարող է շնորհվել քաղաքի կարգ, եթե այն ինքնակառավարվող միավորի վարչական կենտրոն է, կամ այն ունի հետագա տնտեսական զարգացման և բնակչության աճի հեռանկար, կամ այն սույն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, սահմանված է որպես ինքնակառավարվող քաղաք:

2. Բնակավայրի ստեղծման և լուծարման, բնակավայրին համապատասխան կարգի շնորհման և լուծարման, նաև բնակավայրի վարչական սահմանների փոփոխման կանոնները սահմանում է Վրաստանի Կառավարությունը:

3. Կառավարման օպտիմալացման համար մունիցիպալիտետը կարող է բաժանվել վարչական միավորների: Ինքնակառավարվող համայնքում վարչական միավորի տարածքը համընկնում է մեկ կամ մի քանի բնակավայրի տարածքներին: Ինքնակառավարվող քաղաքում վարչական միավորը բնակավայրի մաս է: **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

4. Մունիցիպալիտետի վարչական միավորի ստեղծման և լուծարման, նաև ինքնակառավարվող քաղաքի վարչական միավորի սահմանների փոփոխման մասին որոշումները մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի կամ մունիցիպալիտետի ավագանու անդամների մեկ երրորդի ներկայացմամբ, լրիվ կազմի մեծամասնությամբ, որոշումով ընդունում է մունիցիպալիտետի ավագանին:

ՀՈԴՎԱԾ 5. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքներն են Վրաստանի Սահմանադրությունը, «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան», Վրաստանի միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը, սույն Օրենքը, Վրաստանի այլ օրենսդիր և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերը:

2. Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են «Աջարիայի Ինքնավար Հանրապետության կարգավիճակի մասին» Վրաստանի սահմանադրական օրենքով, «Աջարիայի Ինքնավար Հանրապետության սահմանադրության հաստատման մասին» Վրաստանի օրգանական օրենքի և սույն Օրենքի նորմերի նախատեսմամբ:

3. Վրաստանի բռնազավթված տարածքներում տեղական ինքնակառավարման իրականացման հարցերը սահմանվում են համապատասխան տարածքներում Վրաստանի իրավասության վերականգնումից հետո:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը տարածվում է ազատ արդյունաբերական գոտիների վրա:

ՀՈԴՎԱԾ 6. Վրաստանի քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վրաստանի քաղաքացիները տեղական ինքնակառավարումն իրականացնում են Վրաստանի Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի», Վրաստանի միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի, սույն Օրենքի և Վրաստանի այլ նորմատիվ ակտերի համաձայն:

2. Վրաստանի քաղաքացիներն իրավունք ունեն սույն Օրենքով և Ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրել տեղական ինքնակառավարման մարմիններ և ընտրվել սույն մարմիններում, անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնից, քաղաքական և այլ հայացքներից, ազգային, էթնիկ և սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային վիճակից և կոչումներից:

ՀՈԴՎԱԾ 7. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման երաշխիքները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Պետության և մունիցիպալիտետի մարմինների հարաբերությունը հիմնվում է փոխհամագործակցության սկզբունքի վրա:

2. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացումն ապահովելու համար պետական իշխանության մարմինները պարտավոր են ստեղծել համապատասխան իրավական, ֆինանսատնտեսական և կազմակերպչական պայմաններ:

3. Պետական իշխանության մարմինները պարտավոր են մինչև այն հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելը, որոնք վերաբերում են սույն Օրենքով սահմանված մունիցիպալիտետի իրավասություններին, խորհրդատվություններ անցկացնել այն ոչ արտադրական (ոչ առևտրային)

իրավաբանական անձանց հետ, որոնք միավորում են երկրի մունիցիպալիտետների կեսից ավելին:

4. Մունիցիպալիտետն իրավագոր է դիմել դատարան այն վարչա-իրավական ակտերի և գործողությունների բողոքարկման համար, որոնք սահմանափակում են Վրաստանի տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

5. Մունիցիպալիտետի ավագանին Վրաստանի օրենսդրության համաձայն իրավագոր է դիմել Վրաստանի Սահմանադրական դատարան՝ Վրաստանի Սահմանադրության յոթերորդ գլխի հետ կապված օրենսդրական ակտերի սահմանադրականության հարցի քննարկման նպատակով: Վրաստանի սահմանադրական դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ որոշումը մունիցիպալիտետի ավագանին ընդունում է ամբողջական կազմի մեծամասնությամբ:

6. Եթե մունիցիպալիտետի ավագանին այլ որոշում չի ընդունել, Վրաստանի ընդհանուր իրավասության դատարաններում և Վրաստանի սահմանադրական դատարանում մունիցիպալիտետը ներկայացնում է մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը կամ նրա կողմից լիազորված անձը:

ՀՈԴՎԱԾ 8. Մունիցիպալիտետի խորհրդանիշները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետն ունի զինանշան և դրոշ: Նա կարող է ունենալ նաև այլ խորհրդանիշներ:

2. Մունիցիպալիտետի զինանշանը, դրոշը և այլ խորհրդանիշները, դրանց արտահայտության ձևերը և նկարագրությունները Վրաստանի խորհրդարանին առընթեր Ձինանշանագիտության պետական խորհրդի հետ նախնական խորհրդակցությունների հիման վրա և նրա համաձայնությամբ սահմանում է մունիցիպալիտետի ավագանին: Պարտադիր է մունիցիպալիտետի խորհրդանիշների պետական գրանցումը, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Մունիցիպալիտետի խորհրդանիշների օգտագործման կարգը սահմանվում է Վրաստանի Կառավարության նորմատիվ ակտով:

ՀՈԴՎԱԾ 9. Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն Վրաստանի պետական լեզուն է:

ԳԼՈՒԽ II

Տեղական ինքնակառավարման վարչատարածքային կազմակերպումը

ՀՈՂՎԱԾ 10. Մունիցիպալիտետի ստեղծումը և լուծարումը: Մունիցիպալիտետի վարչական կենտրոնի սահմանումը և դրա փոփոխումը:

1. Մունիցիպալիտետի ստեղծման/լուծարման հիմունքն է.

ա) Մունիցիպալիտետի բաժանումը երկու կամ ավելի մունիցիպալիտետների:

բ) երկու կամ ավելի փոխադարձաբար սահմանակից մունիցիպալիտետների միավորումը որպես մեկ մունիցիպալիտետ:

2. Վրաստանի Կառավարությունն իրավագոր է սույն Օրենքով սահմանված կարգով, սեփական նախաձեռնությամբ, մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) և համապատասխան մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) բնակչության հետ խորհրդակցելով, կամ մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) միջնորդությամբ և համապատասխան մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) բնակչության հետ խորհրդատվության հիման վրա դիմել Վրաստանի խորհրդարանին մունիցիպալիտետի ստեղծման կամ լուծարման մասին պահանջի ներկայացմամբ:

3. Մունիցիպալիտետի բաժանմամբ/մունիցիպալիտետների միավորմամբ նոր մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) ստեղծման դեպքում, մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) միջնորդությունը ներկայացվում է համապատասխան կառավարական հանձնաժողովին: Միջնորդությանը պետք է կցվի.

ա) մունիցիպալիտետի բաժանման/մունիցիպալիտետների միավորման անհրաժեշտության հիմնավորումը,

բ) մունիցիպալիտետի բաժանմամբ/մունիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) մեջ մտնող բնակավայրերի ցանկը և բնակվողների թիվը,

գ) մունիցիպալիտետի բաժանմամբ/մունիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) վարչական սահմանները և սխեմատիկ քարտեզը,

դ) մունիցիպալիտետի բաժանմամբ/մունիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) անվանումը (անվանումները),

ե) մունիցիպալիտետի բաժանմամբ/ մունիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք ինքնակառավարվող համայնքի (ինքնակառավարվող համայնքների) վարչական կենտրոնը (կենտրոնները),

զ) մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) բնակչության հետ անցկացված խորհրդատվությունն արտացոլող փաստաթղթերը,

է) սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձևակերպված մունիցիպալիտետի ավագանու գրավոր կարծիքը:

4. Մունիցիպալիտետների ավագանիներն իրավագոր են համապատասխան կառավարական հանձնաժողովին դիմել համատեղ միջնորդությամբ: Համատեղ միջնորդությանը պետք է կցվեն սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Համատեղ միջնորդության տեքստին և կցված փաստաթղթերին հավանություն են տալիս նշված մունիցիպալիտետների ավագանիները: Համատեղ միջնորդությունը ստորագրում են սույն մունիցիպալիտետների ավագանիների նախագահները:

5. Եթե մուկիցիպալիտետների միավորման մասին միջնորդությունը մուկիցիպալիտետի ավագանին ներկայացրել է, համապատասխան կառավարական հանձնաժողովը պարտավոր է խորհրդատվություններ անցկացնել այն մուկիցիպալիտետների ավագանիների և բնակչության հետ, որոնք կարող է միավորվեն:

6. Մուկիցիպալիտետի բաժանմամբ/մուկիցիպալիտետների միավորմամբ նոր մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) ստեղծման դեպքում Վրաստանի Կառավարության ներկայացմանը պետք է կցվի.

ա) մուկիցիպալիտետի բաժանման/մուկիցիպալիտետների միավորման անհրաժեշտության հիմնավորումը,

բ) մուկիցիպալիտետի բաժանմամբ/մուկիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) մեջ ընդգրկված բնակավայրերի ցանկը և բնակվողների թիվը,

գ) մուկիցիպալիտետի բաժանմամբ/մուկիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) վարչական սահմանները և սխեմատիկ քարտեզը,

դ) մուկիցիպալիտետի բաժանմամբ/մուկիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) անվանումը (անվանումները),

ե) մուկիցիպալիտետի բաժանմամբ/մուկիցիպալիտետների միավորմամբ ստեղծվելիք ինքնակառավարվող համայնքի (ինքնակառավարվող համայնքների) վարչական կենտրոնը (կենտրոնները),

զ) սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձևակերպված մուկիցիպալիտետի ավագանու գրավոր կարծիքը, դրա առկայության դեպքում,

է) մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) բնակչության հետ անցկացված խորհրդատվությունն արտացոլող փաստաթղթերը,

թ) մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) միջնորդությունը, դրա առկայության դեպքում:

7. Ինքնակառավարվող համայնքի ամբողջական անվանումը կազմվում է ինքնակառավարվող համայնքի անվանումից և ինքնակառավարվող միավորի ընդհանուր անվանումից՝ «մուկիցիպալիտետ»: Ինքնակառավարվող քաղաքի լրիվ անվանումը կազմվում է բնակավայրի կատեգորիայի անվանումից՝ «քաղաք», քաղաքի անվանումից և ինքնակառավարվող միավորի ընդհանուր անվանումից՝ «մուկիցիպալիտետ»:

8. Մուկիցիպալիտետի ստեղծման/լուծարման մասին Վրաստանի խորհրդարանի որոշումը ուժի մեջ է մտնում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նշանակման օրը, և համապատասխան մուկիցիպալիտետում ընտրությունները կանցկացվեն տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների հետ: Մինչև վերոնշյալ մուկիցիպալիտետի նորընտիր ավագանու առաջին հավաքը և մուկիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի ընտրելը համապատասխան մուկիցիպալիտետի տարածքի վրա տարածվում են մինչև ընտրությունները գոյություն ունեցած ավագանու և վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունները:

9. Վրաստանի Կառավարությունն իրավագոր է սույն Օրենքով սահմանված կարգով, սեփական նախաձեռնությամբ, մուկիցիպալիտետի ավագանու և համապատասխան մուկիցիպալիտետի բնակիչների հետ խորհրդատվության հիման վրա կամ մուկիցիպալիտետի ավագանու միջնորդությամբ և համապատասխան մուկիցիպալիտետի բնակչության հետ խորհրդատվության հիման վրա դիմել

Վրաստանի Խորհրդարանին մուկիցիպալիտետի (բացառությամբ ինքնակառավարվող քաղաքի) վարչական կենտրոնը փոխելու մասին առաջարկությամբ: Մուկիցիպալիտետի վարչական կենտրոնի որոշումը տեղի է ունենում մուկիցիպալիտետի ստեղծման ժամանակ:

10. Մուկիցիպալիտետի վարչական կենտրոնը փոխելու վերաբերյալ մուկիցիպալիտետի ավագանու միջնորդությունը ներկայացվում է համապատասխան կառավարական հանձնաժողովին: Միջնորդությանը պետք է կցվի.

ա) մուկիցիպալիտետի վարչական կենտրոնը փոխելու անհրաժեշտության հիմնավորումը,

բ) մուկիցիպալիտետի բնակչության հետ անցկացված խորհրդատվությունն արտացոլող փաստաթղթերը,

գ) սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձևակերպված մուկիցիպալիտետի ավագանու գրավոր կարծիքը,

11. Մուկիցիպալիտետի վարչական կենտրոնը փոխելու վերաբերյալ Վրաստանի Կառավարության ներկայացմանը պետք է կցվի.

ա) մուկիցիպալիտետի վարչական կենտրոնը փոխելու անհրաժեշտության հիմնավորումը,

բ) մուկիցիպալիտետի բնակչության հետ անցկացված խորհրդատվությունն արտացոլող փաստաթղթերը,

գ) սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձևակերպված մուկիցիպալիտետի ավագանու գրավոր կարծիքը, դրա առկայության դեպքում:

12. Մուկիցիպալիտետի ստեղծման և լուծարման, նաև մուկիցիպալիտետի վարչական կենտրոնի սահմանման և փոփոխման մասին որոշումները Վրաստանի Կառավարության ներկայացմամբ, որոշումով ընդունում Վրաստանի Խորհրդարանը:

ՀՈՂՎԱԾ 11. Մուկիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխումը

1. Վրաստանի Կառավարությունն իրավագոր է սույն Օրենքով սահմանված կարգով, սեփական նախաձեռնությամբ, մուկիցիպալիտետների ավագանիների և բնակչության հետ խորհրդատվության հիման վրա սույն մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) միջնորդությամբ և համապատասխան մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) բնակչության հետ խորհրդատվության հիման վրա դիմել Վրաստանի Խորհրդարանին մուկիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխման առաջարկությամբ:

2. Մուկիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխման մասին մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) միջնորդությունը ներկայացվում է համապատասխան կառավարական հանձնաժողովին: Միջնորդությանը պետք է կցվեն.

ա) մուկիցիպալիտետի վարչական սահմանները փոխելու անհրաժեշտության հիմնավորումը,

բ) մուկիցիպալիտետի նոր վարչական սահմանները և սխեմատիկ քարտեզը,

գ) մուկիցիպալիտետի (մուկիցիպալիտետների) բնակչության հետ անցկացված խորհրդատվությունն արտացոլող փաստաթղթերը,

դ) սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձևակերպված մուկիցիպալիտետի ավագանու գրավոր կարծիքը:

3. Մուկիցիպալիտետների ավագանիներն իրավագոր են համապատասխան կառավարական հանձնաժողովին դիմել համատեղ միջնորդությամբ: Համատեղ միջնորդությանը պետք է կցվեն սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Համատեղ միջնորդության տեքստին

և կցված փաստաթղթերին հավանություն են տալիս նշված մոնիցիպալիտետների ավագանիները: Համատեղ միջնորդությունը ստորագրում են այդ մոնիցիպալիտետների ավագանիների նախագահները:

4. Եթե մոնիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխման մասին միջնորդությունը մոնիցիպալիտետի ավագանին ներկայացրել է, համապատասխան կառավարական հանձնաժողովը պարտավոր է խորհրդատվություններ անցկացնել այն մոնիցիպալիտետի (մոնիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) և բնակչության հետ, որոնց հնարավոր է վերաբերի վարչական սահմանների փոփոխումը:

5. Մոնիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխման մասին Վրաստանի Կառավարության առաջարկությանը պետք է կցվեն.

ա) մոնիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխման անհրաժեշտության հիմնավորումը,

բ) մոնիցիպալիտետի նոր վարչական սահմանները և սխեմատիկ քարտեզը,

գ) մոնիցիպալիտետի (մոնիցիպալիտետների) բնակչության հետ անցկացված խորհրդատվությունն արտացոլող փաստաթղթերը,

դ) սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձևակերպված մոնիցիպալիտետի ավագանու գրավոր կարծիքը, դրա առկայության դեպքում:

ե) մոնիցիպալիտետի (մոնիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) միջնորդությունը, դրա առկայության դեպքում:

6. Մոնիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխման մասին որոշումը, Վրաստանի Կառավարության ներկայացմամբ ընդունում է Վրաստանի խորհրդարանը:

ՀՈՂՎԱԾ 12. Մոնիցիպալիտետի ավագանու հետ խորհրդատվության անցկացման կարգը

1. Մոնիցիպալիտետի ստեղծման/լուծարման, վարչական կենտրոնի սահմանման/փոփոխման և վարչական սահմանների փոփոխման մասին առաջարկությունները և մոնիցիպալիտետի (մոնիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) համապատասխան միջնորդությունը Վրաստանի Կառավարության քննարկման համար պատրաստում է համապատասխան կառավարական հանձնաժողովը:

2. Համապատասխան կառավարական հանձնաժողովը մոնիցիպալիտետի ավագանու հետ խորհրդատվության նպատակով սույն Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ կետի «ա»-«ե», «է» և «ը» ենթակետերով և 11-րդ հոդվածի 5-րդ կետի «ա», «բ» և «ե» ենթակետերով սահմանված փաստաթղթերն ուղարկում է մոնիցիպալիտետի (մոնիցիպալիտետների) ավագանուն (ավագանիներին): Մոնիցիպալիտետի ավագանին պարտավոր է ավագանու նիստին քննարկել տվյալ փաստաթղթերը և համապատասխան կառավարական հանձնաժողովին իր կարծիքը գրավոր ներկայացնել փաստաթղթերը ստանալու պահից ոչ ուշ, քան 20 օրում: Մոնիցիպալիտետի (մոնիցիպալիտետների) ավագանու (ավագանիների) հետ, որի (որոնց) միջնորդությունը նորկայացվել է համապատասխան կառավարական հանձնաժողովին, խորհրդատվություն չի անցկացվում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում մոնիցիպալիտետի ավագանուց պատասխան չստանալու դեպքում, խորհրդատվությունն անցկացված է համարվում և Վրաստանի Կառավարությունն իրավագոր է համապատասխան առաջարկությամբ դիմել Վրաստանի խորհրդարանին: Այսպիսի դեպքում մոնիցիպալիտետի ավագանուն իրավունք է վերապահվում

իր տեսակետը գրավոր ներկայացնել անմիջապես Վրաստանի Խորհրդարանին:

4. Մունիցիպալիտետի ավագանու գրավոր տեսակետը ձևակերպվում է ավագանու նիստի արձանագրությամբ: Այդ արձանագրության մեջ արտացոլվում է քննարկվելիք հարցի վերաբերյալ մունիցիպալիտետի ավագանու դիրքորոշումը և նիստի ժամանակ արտահայտված տեսակետները:

5. Մունիցիպալիտետի ստեղծման/լուծարման, վարչական կենտրոնի սահմանման/փոփոխման և վարչական սահմանների փոփոխման մասին մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) բնակչության հետ խորհրդատվության անցկացումն ապահովում է համապատասխան կառավարական հանձնաժողովը, իսկ միջնորդությունը մունիցիպալիտետի ավագանու կողմից ներկայացման դեպքում՝ համապատասխան մունիցիպալիտետը:

6. Բնակչության հետ խորհրդատվությունն անց է կացվում համապատասխան մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) բնակչության հետ հանրային քննարկման ձևով: Համապատասխան կառավարական հանձնաժողովը/մունիցիպալիտետը մինչև հարցի Վրաստանի Կառավարությանը/Վրաստանի կառավարական հանձնաժողովին քննարկման ներկայացնելը ապահովում է մունիցիպալիտետի ստեղծման/լուծարման, վարչական կենտրոնի սահմանման/փոփոխման և վարչական սահմանների փոփոխման մասին տեղեկության հանրային հրապարակում:

7. Սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված տեղեկության հանրային հրապարակում է համարվում դրա հրապարակումը տպագիր մամուլում, որը տարածվում է համապատասխան մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) տարածքում (տարածքներում) և հրապարակվում է առնվազն շաբաթը մեկ անգամ: Մունիցիպալիտետն իրավագոր է տեղեկության տպագիր մամուլում հրապարակման փոխարեն հրապարակավ հայտարարել այն:

8. Հետաքրքրված անձինք իրավագոր են սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված տեղեկության հանրային հրապարակման պահից 20-օրյա ժամկետում համապատասխան կառավարական հանձնաժողովին/մունիցիպալիտետի ավագանուն ներկայացնել սեփական տեսակետները: Հանրային քննարկման գործընթացում կարելի է համապատասխան մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) բնակչության հետ կազմակերպել հանրային քննարկումներ:

ՀՈՂՎԱԾ 13. Մունիցիպալիտետի ստեղծման, լուծարման, նրա վարչական սահմանների փոփոխման մասին որոշման բողոքարկման կարգը

Մունիցիպալիտետի ստեղծման, լուծարման, նրա վարչական սահմանների փոփոխման մասին Վրաստանի Խորհրդարանի որոշումը կարող է բողոքարկվել Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 14. Մունիցիպալիտետների գրանցումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետների մասին ընդհանուր տվյալների միասնական ցուցակագրման նպատակով ստեղծվում է մունիցիպալիտետների տվյալների համակարգային միասնականություն՝ մունիցիպալիտետների ռեեստր:

2. Մունիցիպալիտետի գրանցման տվյալներ են.

ա) մունիցիպալիտետի անվանումը,

բ) ինքնակառավարվող համայնքի մեջ մտնող բնակավայրերի անվանումները (յուրաքանչյուր բնակավայրի կարգի մատնանշմամբ),

գ) ինքնակառավարվող համայնքի վարչական կենտրոնի անվանումը,

դ) մունիցիպալիտետի որպես վճարող գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվը և գրանցման նույնականացման գաղտնագիրը,

ե) մունիցիպալիտետի վարչական սահմանները և սխեմատիկ քարտեզը:

3. Մունիցիպալիտետի՝ ըստ գրանցման տվյալների, գրանցումը, Վրաստանի արդարադատության նախարարի կողմից հաստատված կարգին համապատասխան, իրականացնում է Վրաստանի արդարադատության նախարարության կառավարման բնագավառում գործող Հանրային իրավունքի իրավաբանական անձ Հանրային ռեեստրի ազգային գործակալությունը:

ԳԼՈՒԽ III

Մունիցիպալիտետի լիազորությունները

ՀՈԴՎԱԾ 15. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակներն են.

ա) մունիցիպալիտետի սեփական լիազորությունները,

բ) մունիցիպալիտետին պատգամված լիազորությունները:

2. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունն է սույն Օրենքով սահմանված լիազորությունը, որը նա իրականացնում է անկախ և սեփական պատասխանատվությամբ:

3. Մունիցիպալիտետի պատգամված լիազորությունն է պետական /ինքնավար հանրապետության իշխանության մարմնի լիազորությունը, որը մունիցիպալիտետին փոխանցվել է Օրենքի կամ Վրաստանի օրենսդրության համաձայն կնքված պայմանագրի հիման վրա, համապատասխան նյութական և ֆինանսական ապահովմամբ:

ՀՈԴՎԱԾ 16. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Սույն հոդվածի 2-րդ կետով կետով սահմանված մունիցիպալիտետի սեփական լիազորությունները բացառիկ լիազորություններ են: Սույն Օրենքի համաձայն, մունիցիպալիտետի սեփական լիազորությունների ծավալը (շրջանակները) և իրականացման կարգը կարող է սահմանվել միայն օրենսդրական ակտի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Օրենքն ուղղակիորեն մատնանշում է Վրաստանի օրենսդրության համաձայն սեփական լիազորությունների իրականացումը կարգավորելու հնարավորություն:

2. Մունիցիպալիտետի սեփական լիազորություններն են.

ա) մունիցիպալիտետի բյուջեի նախագծի նախապատրաստումը, քննարկումը և հաստատումը, հաստատված բյուջեում փոփոխությունների ընդգրկումը, բյուջեի կատարման հաշվետվության լուծումը և գնահատումը, Վրաստանի Օրենսդրությանը համապատասխան, բյուջետային միջոցների տնօրինումը, գանձապետական գործառնությունների և բանկային գործարքների կատարումը,

բ) մունիցիպալիտետի սեփականության մեջ եղած գույքի կառավարումը և տնօրինումը սույն Օրենքով և օրենքի ոլորտում գտնվող այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով,

գ) տեղական նշանակության բնական պաշարների, այդ թվում, ջրային և անտառային

ռեսուրսների և մուլտիցիպալիտետի սեփականության մեջ եղած հողային ռեսուրսների կառավարումը, Օրենքով սահմանված կարգով,

դ) տեղական հարկերի և տուրքերի ներմուծումը և վերացումը, Օրենքով սահմանված կարգով: Դրանց տոկոսադրույքերի սահմանումը Օրենքով սահմանված քանակությունների շրջանակներում, տեղական վճարների հավաքումը,

ե) մուլտիցիպալիտետի տարածական-տերիտորիալ պլանավորումը և համապատասխան ոլորտում չափանիշների և կանոնակարգերի սահմանումը, քաղաքաշինական փաստաթղթերի, այդ թվում, հողօգտագործման գլխավոր հատակագծի, քաղաքաշինության կարգավորման պլանի, բնակավայրերի տարածքների օգտագործման և քաղաքաշինության կարգավորման կանոնակարգերի հաստատումը,

զ) մուլտիցիպալիտետի տարածքի բարեկարգումը և համապատասխան ինժեներական ենթակառուցվածքների զարգացումը, մուլտիցիպալիտետի տարածքում փողոցների, այգիների, պուրակների և այլ հասարակական վայրերի մաքրումը, տարածքի կանաչապատումը, արտաքին լուսավորման ապահովումը,

է) պինդ (կենցաղային) թափոնների հավաքումը և աղբահանությունը:

ը) ջրամատակարարման (այդ թվում, տեխնիկական ջրամատակարարման) և սանիտարական ապահովումը, տեղական նշանակության ոռոգման համակարգի զարգացումը,

թ) մուլտիցիպալիտետի կառավարման մեջ եղած նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը,

ժ) տեղական նշանակության ավտոճանապարհների կառավարումը և տեղական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային երթևեկության կազմակերպումը, ավտոտրանսպորտային միջոցների ապահովումը կայանատեղիներով և կանգնելու/ կայանելու կանոնների կարգավորումը,

ժա) մուլտիցիպալիտետի վարչական սահմաններում կանոնավոր ուղևորափոխադրման թույլտվության հատկացումը, բնակչության հասարակական տրանսպորտով սպասարկման կազմակերպումը,

ժբ) արտաքին առևտրի, ցուցահանդեսների, շուկաների և տոնավաճառների կարգավորումը,

ժգ) մուլտիցիպալիտետի տարածքում շինարարության թույլտվության հատկացումը, շինարարության հսկողության իրականացումը Վրաստանի օրենսդրական ակտերով սահմանված կարգով և սահմանված շրջանակներում,

ժդ) հանրահավաքների և ցույցերի անցկացման հետ կապված հարցերի կարգավորումը Օրենքով սահմանված կարգով,

ժե) մուլտիցիպալիտետի վարչական սահմաններում գտնվող աշխարհագրական օբյեկտների, մասնավորապես, պատմականորեն ձևավորված թաղամասի, ինքնակառավարվող քաղաքի վարչական միավորի, այս կամ այն գոտու, միկրոշրջանի, աղբյուրի, հրապարակի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, էսպլանադի (ծառուղիով պողոտայի), ճեմուղու, պուրակի, այգու, զբոսայգու, անտառային պարկի, տեղական նշանակության անտառի, գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը, Օրենքով սահմանված կարգով,

ժզ) արտաքին գովազդի տեղադրման կարգավորումը,

ժէ) ընտանի կենդանիներ պահելու կանոնների սահմանումը և անտեր կենդանիների հետ

կապված հարցերի վճռումը,

ժը) գերեզմանոցների կարգավորումը և խնամքը,

ժթ) տեղական ինքնատիպության, ստեղծագործական գործունեության և մշակութային ժառանգության պահպանումը և զարգացումը, տեղական նշանակության մշակութային հուշարձանների խնամքը և պահպանումը, վերանորոգումը և վերակառուցումը, մուսիկոլոգիայի տեսի կառավարման մեջ առկա գրադարանների, ակումբային հաստատությունների, կինոթատրոնների, թանգարանների, թատրոնների, ցուցահանդեսային դահլիճների և մարզա-առողջարարական գործունեության ապահովումը և նոր օբյեկտների կառուցումը,

ի) տեղական նշանակության օբյեկտներում սահմանափակ հնարավորություններով անձանց, երեխաների և տարեցների համար համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, այդ թվում հանրային հավաքման վայրերի և մուսիկոլոգիալ տրանսպորտի համապատասխանաբար հարմարեցման և կահավորման ապահովումը:

իա) անօթևանների ապահովումն ապաստանով և նրանց հաշվառումը:

3. Մուսիկոլոգիայի տեսի իրավագոր է սեփական նախաձեռնությամբ վճռել ցանկացած հարց, որի վճռումը Վրաստանի Օրենսդրությամբ այլ մարմնի լիազորությունների մեջ չի մտնում և չի արգելված Օրենքով:

4. Տեղական ինքնակառավարման մարմինն իրավագոր է սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով իրականացնել միջոցառումներ զբաղվածությանը նպաստման, գյուղատնտեսության, այդ թվում, գյուղատնտեսական կոոպերացիայի աջակցության և զբոսաշրջության զարգացման, սոցիալական օգնության և առողջապահության, տեղական մակարդակով կազմակերպված երիտասարդական քաղաքականության զարգացմանը նպաստման, զանգվածային մարզաձևերին նպաստման, բնապահպանության, հասարակական կրթության, գեղերային հավասարությանը նպաստման, տեղական նշանակության արխիվի վարման, առողջ կենսակերպի հաստատման, մարդու առողջության համար անվտանգ միջավայրի ստեղծման, մուսիկոլոգիայի տեսի տարածքում ներդրումներին աջակցության, նորարարական զարգացմանն աջակցելու և այլ նպատակներով:

ՀՈՂՎԱԾ 17. Լիազորությունների պատգամման կարգը և պայմանները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Պետական կամ ինքնավար հանրապետության իշխանական մարմինը կարող է մուսիկոլոգիայի տեսին փոխանցել պետական /ինքնավար հանրապետության իշխանական մարմնի այն լիազորությունները, որոնց իրականացումն ավելի արդյունավետ է տեղական մակարդակում:

2. Պետական կամ ինքնավար հանրապետության իշխանական մարմնի կողմից մուսիկոլոգիայի տեսին իրավազորությունները կարելի է պատգամել համապատասխանաբար Վրաստանի օրենսդրական ակտով կամ ինքնավար հանրապետության Օրենքով, նաև Վրաստանի կամ ինքնավար հանրապետության Օրենսդրության հիման վրա կնքված պայմանագրով, համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների փոխանցմամբ:

3. Պետական/ինքնավար հանրապետության իշխանական մարմնի լիազորությունների պայմանագրով պատգամման մասին որոշումն ընդունում է Վրաստանի / ինքնավար հանրապետության Կառավարությունը: Համապատասխան պայմանագիրը կնքվում է մուսիկոլոգիայի տեսի և համապատասխան նախարարության միջև, սույն հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների պահպանմամբ: Պայմանագիրը ստորագրում են մուսիկոլոգիայի տեսի վարչության նախագահը/քաղաքապետը և հաստատում մուսիկոլոգիայի տեսի ավագանին անդամների ընդհանուր

թվի մեծամասնությամբ: (30.07.2014 N 2589)

4. Մունիցիպալիտետն իրավազոր է պատգամված լիազորությունները, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված շրջանակներում, իրականացնել հարմարեցնելով տեղական պայմաններին:

5. Լիազորությունների պատգամման ժամանակ նույն ակտով պետք է սահմանվի այն նախարարությունը, որը կիրականացնի պատգամված լիազորությունների պետական ոլորտային վերահսկողություն:

ՀՈՂՎԱԾ 18. Պետական չափորոշիչները և տեխնիկական կանոնակարգերը մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Երկրի ողջ տարածքի հավասար սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով պետական իշխանության համապատասխան մարմիններն իրավունք ունեն մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում համապատասխան նորմատիվ ակտով սահմանել պետական չափորոշիչներ և տեխնիկական կանոնակարգեր:

ՀՈՂՎԱԾ 19. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման ձևերը և մեխանիզմները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Մունիցիպալիտետի մարմինները մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման ժամանակ Վրաստանի օրենսդրությանը համապատասխան.

- ա) ընդունում/հրապարակում են վարչա-իրավական ակտեր,
- բ) կազմում, հաստատում և իրականացնում են համապատասխան ծրագրեր, ռազմավարություններ, գործողությունների պլաններ և նախագծեր,
- գ) իրականացնում են գնումներ,
- դ) կնքում են պայմանագրեր,
- ե) ձեռք են բերում և ստեղծում մունիցիպալիտետի սեփականությունը,
- զ) տիրապետում են և տնօրինում իրենց սեփականության մեջ եղած գույքը, օգտվում են այդ գույքից, նաև պետական /ինքնավար հանրապետության և այլ անձանց գույքից,
- է) հիմնում են և վարում մասնավոր իրավունքի իրավաբանական անձեր,
- ը) վերցնում են վարկեր,
- թ) իրականացնում են համապատասխան ենթակառուցվածքի շինարարություն, ինամբ, վերականգնում, վերակառուցում և զարգացում,
- ժ) սպասարկման որակի և կառավարման արդյունավետության բարձրացման համար ապահովում են նորարարական տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում և զարգացում,
- ժա) իրականացնում են այլ միջոցառումներ:

ՀՈՂՎԱԾ 20. Մունիցիպալիտետի իրավունքը ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձի հիմնադրման և նրանում անդամագրման վերաբերյալ **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետն իր գործունեության համակարգման նպատակով իրավունք ունի, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով, հիմնադրել ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձ և անդամագրվել նրան:

2. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձն իրավունք ունի կազմակերպելու համատեղ միջոցառումներ մունիցիպալիտետի լիազորությունների ոլորտում, մունիցիպալիտետի անունից մասնակցելու տեղական ինքնակառավարման հետ կապված օրինագծերի նախնական քննարկումներին և խորհրդատվություններին, համագործակցելու պետական իշխանության մարմինների, ինքնակառավարվող միավորների միջազգային միությունների (ընկերակցությունների), նաև հարաբերություններ հաստատելու տեղական ինքնակառավարման ոլորտում համապատասխան օտարերկրյա միությունների (ընկերակցությունների) և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՈՂՎԱԾ 21. Մունիցիպալիտետների իրավունքը համատեղ գործունեության իրականացման կազմակերպման համար ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

1. Մունիցիպալիտետները սույն Օրենքով սահմանված լիազորությունների արդյունավետ իրականացման և բնակչությանը որակյալ սպասարկման մատուցման նպատակով իրավունք ունեն, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով, պայմանագրի հիման վրա հիմնադրել համատեղ արտադրական և ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձեր կամ ստեղծել ծառայություններ, որոնց կփոխանցեն իրենց լիազորություններով նախատեսված առանձին միատարր գործառույթներ՝ համապատասխան նյութական և ֆինանսական ապահովմամբ: Տվյալ իրավաբանական անձանց կառավարման, ֆինանսավորման և վերահսկման կանոնները և տվյալ իրավաբանական անձանց կառավարման, ֆինանսավորման և հսկման կանոնները և պայմանները սահմանվում են մունիցիպալիտետների միջև՝ Վրաստանի օրենսդրությանը համապատասխան կնքված պայմանագրով:

2. Համատեղ նախագծերի իրականացման նպատակով մունիցիպալիտետն իրավունք ունի այլ մունիցիպալիտետի հետ կնքել պայմանագիր՝ բյուջետային միջոցների միավորման մասին:

3. Սույն հոդվածի առաջին և 2-րդ կետերով նախատեսված պայմանագրերը ստորագրում է մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը և հաստատում մունիցիպալիտետի ավագանին անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ:

ՀՈՂՎԱԾ 22. Մունիցիպալիտետի անդրսահմանային համագործակցությունը ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

Մունիցիպալիտետն իրավագոր է համագործակցել այլ երկրների տեղական ինքնակառավարման մարմինների հետ «Վարչատարածքային միավորների կամ իշխանության մարմինների միջև անդրսահմանային համագործակցության մասին» ուղեցույց Եվրոպական կոնվենցիայի և Վրաստանի օրենսդրության համաձայն:

ԲԱԺԻՆ II

Մունիցիպալիտետի մարմինները

ԳԼՈՒԽ IV

Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմինը

ՀՈՂՎԱԾ 23. Մունիցիպալիտետի ավագանին **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմինն է կոլեգիալ վարչական մարմինը՝ մունիցիպալիտետի ավագանին:

2. Մունիցիպալիտետի ավագանին ընտրվում է 4 տարի ժամկետով, մունիցիպալիտետի տարածքում գրանցված Վրաստանի քաղաքացիների կողմից, ուղղակի ընտրությամբ, համընդհանուր, հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվերակությամբ:

3. Մունիցիպալիտետի ավագանու անդամների թիվը և ընտրության կարգը սահմանվում է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով:

ՀՈՂՎԱԾ 24. Մունիցիպալիտետի ավագանու լիազորությունները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի ավագանու լիազորություններին են պատկանում.

ա) Մունիցիպալիտետի վարչա-տարածքային կազմակերպման և նրա նույնականության սահմանման ոլորտում.

ա.ա) մունիցիպալիտետի վարչական միավորների ստեղծումը և լուծարումը, դրանց սահմանների սահմանումը,

ա.բ) մունիցիպալիտետի ստեղծման/լուծարման, վարչական կենտրոնի սահմանման/փոփոխման և վարչական սահմանների փոփոխման մասին առաջարկության ներկայացումը,

ա.գ) Վրաստանի օրենսդրության համաձայն մունիցիպալիտետի խորհրդանիշների (զինանշանի, դրոշի և այլ խորհրդանիշների) որոշումը,

ա.դ) մունիցիպալիտետի պատվավոր կոչումների և պարգևների ներմուծման և շնորհման կանոնների սահմանումը,

ա.ե) պատմականորեն ձևավորված թաղամասի, այս կամ այն գոտու, միկրոշրջանի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, Էսպլանադի, ճեմուղու, պուրակի, այգու, զբոսայգու, անտառային պարկի, տեղական նշանակության անտառի, գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը:

բ) Կազմակերպչական գործունեության բնագավառում.

բ.ա) մունիցիպալիտետի ավագանու օրակարգի հաստատումը,

բ.բ) մունիցիպալիտետի ավագանու նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունը և պաշտոնանկ անելը, (30.07.2014 N 2589)

բ.գ) մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորության ճանաչման և նրա լիազորության վաղաժամկետ դադարեցման մասին որոշման ընդունումը,

բ.դ) մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի ստեղծումը, հանձնաժողովի նախագահի ընտրությունը և պաշտոնանկ անելը, հանձնաժողովի անհատական կազմի և կանոնակարգի հաստատումը և դրանցում փոփոխությունների կատարումը,

բ.ե) մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խմբի ստեղծումը և լուծարումը, ժամանակավոր աշխատանքային խմբի անհատական կազմի հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

բ.զ) մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմի կանոնակարգի և հաստիքացուցակի հաստատումը,

բ.է) սույն Օրենքով նախատեսված դեպքերում Վրաստանի Սահմանադրական դատարանի և ընդհանուր դատարաններում մունիցիպալիտետի/ավագանու ներկայացուցչության լիազորություններ ունեցող անձի նշանակումը:

գ) Մունիցիպալիտետի գործադիր մարմինների գործունեության կարգավորման և վերահսկման ոլորտում.

գ.ա) մունիցիպալիտետի գործադիր մարմինների և այս մարմինների պաշտոնատար անձանց գործունեության վերահսկումը, նրանց հաշվետվությունների լսումը և գնահատումը,

գ.բ) սույն Օրենքին համապատասխան շրջանային վարչության/քաղաքապետարանի և դրա կառուցվածքային միավորների կանոնակարգերի և հաստիքացուցակների հաստատումը,

գ.գ) սույն Օրենքով սահմանված կարգով մունիցիպալիտետի վարչության նախագահին/քաղաքապետին անվստահության հայտարարումը:

դ) Ֆինանսա-բյուջետային բնագավառում.

դ.ա) սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական ակտերով սահմանված կարգով մունիցիպալիտետի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը, հաստատված բյուջեում փոփոխությունների կատարումը, բյուջեի կատարման վերահսկումը և բյուջեի կատարման գնահատումը,

դ.բ) Վրաստանի օրենսդրությանը համապատասխան, տեղական հարկերի և տուրքերի ներմուծումը և դրանց վերացումը,

դ.գ) սույն Օրենքով նախատեսված դեպքում, մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացմամբ, մունիցիպալիտետի անունից կնքված պայմանագրի հաստատումը, նաև այնպիսի գործարքի կնքման համար համաձայնություն տալը, որի արժեքը գերազանցում է մունիցիպալիտետի բյուջեի մուծումների 5 տոկոսը, (30.07.2014 N 2589)

դ.դ) Վրաստանի Կառավարության կողմից սահմանված առավելագույն քանակության շրջանակներում մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի պաշտոնական աշխատավարձի սահմանումը,

դ.ե) մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձանց, մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմի աշխատակիցների և մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացմամբ, շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և այլ աշխատակիցների պաշտոնական աշխատավարձերի քանակությունների սահմանումը՝ Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված հանրային ծառայողների պաշտոնների աստիճանավորման համակարգի նախատեսմամբ:

ե) Մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման բնագավառում.

ե.ա) մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացմամբ մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման կանոնների, նաև 50 տոկոսից ավելի

բաժնեմասային մասնակցությամբ ստեղծված ձեռնարկության գույքի տնօրինման կարգի սահմանումը սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով սահմանված կարգով,

ե.բ) մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացմամբ, մունիցիպալիտետի գնումների պլանի հաստատումը,

ե.գ) Վրաստանի Կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նորմատիվ գնի, մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման մեկնարկային գնի և վարձի մեկնարկային գնի սահմանումը,

ե.դ) մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացմամբ, մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման պլանի հաստատումը,

ե.ե) սույն Օրենքով սահմանված կարգով մունիցիպալիտետի գույքի պետությանը անհատույց փոխանցման վերաբերյալ որոշման ընդունումը,

ե.զ) Վրաստանի օրենսդրության համաձայն, մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա անտառային և ջրային ռեսուրսների կառավարման կարգի հաստատումը:

2. Մունիցիպալիտետի ավագանու լիազորություններին են պատկանում նաև սույն Օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածներով նախատեսված մունիցիպալիտետի այլ լիազորությունների իրականացման հետ կապված որոշումների ընդունումը, նաև սույն Օրենքով, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով իրեն շնորհված լիազորություններ:

3. Եթե սույն Օրենքը կամ Վրաստանի Օրենսդրությունը չեն սահմանում մունիցիպալիտետի սեփական կամ պատգամված լիազորությունների իրականացման համար պատասխանատու մունիցիպալիտետի մարմին, տվյալ լիազորությունն իրականացնում է մունիցիպալիտետի ավագանին կամ մունիցիպալիտետի ավագանու հանձնարարությամբ՝ մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը:

4. Մունիցիպալիտետի ավագանու լիազորությունը, որը սույն Օրենքով կամ Վրաստանի Օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված է որպես մունիցիպալիտետի ավագանու լիազորություն, չի կարող փոխանցվել այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, եթե Օրենքն անմիջականորեն չի նախատեսում դրա փոխանցման հնարավորություն:

ՀՈՂՎԱԾ 25. Նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին նիստը և հավաքը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վրաստանի ողջ տարածքում նորընտիր մունիցիպալիտետն ավագանու առաջին նիստը հրավիրում է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփումից հետո 30-օրյա ժամկետում: Մունիցիպալիտետի ավագանին սկսում է աշխատել, եթե համապատասխան ընտրական հանձնաժողովը հաստատում է (ընտրված է հայտարարում) նորընտիր մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրվելը:

2. Նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին նիստը բացվում է, եթե նրան ներկա է (գրանցվել է) նորընտիր մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին նիստը բացում է համապատասխան

ընտրական հանձնաժողովի նախագահը: Նորընտիր մունիցիպալիտետի ավագանու նիստերը մինչև մունիցիպալիտետի ավագանու նախագահի ընտրելը վարում է մունիցիպալիտետի ավագանու տարիքով ավագ անդամը:

3. Նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին հավաքը կայացած կհամարվի, եթե մունիցիպալիտետի ավագանու այն անդամների թիվը, որոնց լիազորությունը ճանաչել է մունիցիպալիտետի ավագանին, մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդն է: Այդ պահից դադարում է նախորդ գումարման ավագանու լիազորությունը:

4. Եթե մունիցիպալիտետի ավագանու անդամների թիվը, որոնց լիազորությունը ճանաչել է մունիցիպալիտետի ավագանին, մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի երկու երրորդից պակաս է, մունիցիպալիտետի ավագանու նիստը դադարեցվում է: Այս դեպքում նորընտիր մունիցիպալիտետի ավագանու հաջորդ նիստը հրավիրում է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այն օրվանից 10 -օրյա ժամկետում, երբ հնարավոր կլինի մունիցիպալիտետի ավագանու առջև բարձրացնել այնքան անձի լիազորությունների ճանաչման հարց, որքան բավական է մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի երկու երրորդը լրացնելու համար:

5. Եթե սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված ժամկետում չի հաջողվել համապատասխան քանակության մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունների ճանաչում, նշանակվում են նոր ընտրություններ:

ՀՈԴՎԱԾ 26. Մունիցիպալիտետի ավագանու գործունեության կարգը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու հերթական նիստերը ամիսը առնվազն մեկ անգամ հրավիրում է մունիցիպալիտետի ավագանու նախագահը:

2. Մունիցիպալիտետի ավագանու արտահերթ նիստ հրավիրվում է.

ա) մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի առաջարկությամբ,

բ) մունիցիպալիտետի ավագանու նախագահի նախաձեռնությամբ,

գ) մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով,

դ) մունիցիպալիտետի ավագանու խմբակցության առաջարկով,

ե) մունիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողների ընդհանուր թվի առնվազն 1 տոկոսի պահանջով:

3. Մունիցիպալիտետի ավագանու արտահերթ նիստի հրավիրման մասին պահանջի (առաջարկի) ներկայացման պահից մեկշաբաթյա ժամկետում մունիցիպալիտետի ավագանու նախագահը հրավիրում է արտահերթ նիստ: Եթե մունիցիպալիտետի ավագանու նախագահը մեկշաբաթյա ժամկետում չի հրավիրում արտահերթ նիստ, մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է հավաքվելու:

4. Մունիցիպալիտետի ավագանու անդամների ծանուցումը մունիցիպալիտետի ավագանու արտահերթ նիստի հրավիրման մասին ապահովում է մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը՝ մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով: Արտահերթ նիստին մունիցիպալիտետի ավագանու նախագահի չներկայանալու դեպքում, նիստը նախագահում է մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալը, իսկ նրա բացակայության

դեպքում՝ նիստին ներկա տարիքով ավագ մունիցիպալիտետի ավագանու անդամը:

5. Մունիցիպալիտետի ավագանու նիստը իրավագոր է, եթե նրան ներկա է մունիցիպալիտետի ավագանու լրիվ կազմի կեսից ավելին:

6. Մունիցիպալիտետի ավագանին որոշումներն ընդունում է բաց քվեարկությամբ: Գաղտնի քվեարկություն անց է կացվում միայն անձի՝ պաշտոնի ընտրելու, պաշտոնից ազատելու և անվստահության հայտարարման հարցերի վճռման ժամանակ:

ՀՈՂՎԱԾ 27. Մունիցիպալիտետի ավագանու բյուրոն (*Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից*)

1. Մունիցիպալիտետի ավագանու բյուրոն բաղկացած է մունիցիպալիտետի ավագանու նախագահից, մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալից (տեղակալներից), մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների և խմբակցությունների նախագահներից:

2. Մունիցիպալիտետի ավագանու բյուրոն.

ա) սահմանում է մունիցիպալիտետի ավագանու նիստի օրակարգի, մունիցիպալիտետի ավագանու աշխատանքային պլանի և աշխատանքային ծրագրի նախագծերը,

բ) համակարգում է մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների և ժամանակավոր աշխատանքային խմբերի աշխատանքը,

գ) քննարկում է մունիցիպալիտետի ավագանու նիստին ներկայացվելիք վարչա-իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների և ժամանակավոր աշխատանքային խմբերի եզրակացությունները և առաջարկությունները,

դ) լսում է մունիցիպալիտետի պաշտոնատար անձանց հաշվետվությունները,

ե) իրականացնում է մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով իրեն շնորհված այլ լիազորություններ:

ՀՈՂՎԱԾ 28. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովը (*Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից*)

1. Մունիցիպալիտետի ավագանիում հարցերի նախօրոք նախապատրաստման, որոշումների կատարմանը նպաստելու, շրջանային վարչության/քաղաքապետարանի, նրա կառուցվածքային միավորների և մունիցիպալիտետի կողմից հիմնադրված իրավաբանական անձանց վերահսկման նպատակով ստեղծվում են հանձնաժողովներ, որոնց թիվը չպետք է գերազանցի 5-ը:

2. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահը ընտրվում է մունիցիպալիտետի ավագանու անդամներից: Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի անդամներին, համապատասխան հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունների ներկայացուցչության և այն մունիցիպալիտետի ավագանու անդամների թվին համամասնորեն, որոնք միավորված չեն ոչ մի խմբակցությունում, հաստատում է մունիցիպալիտետի ավագանին: Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի անդամ կարող է լինել միայն մունիցիպալիտետի ավագանու անդամը: Մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովում աշխատելու, ժամանակավոր կամ հանձնաժողովի լիազորությունների ժամկետով կարելի է նաև այլ անձանց հրավիրում:

3. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների ստեղծման և գործունեության կանոնները սահմանվում են մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով, Վրաստանի

օրենսդրությանը համապատասխան:

ՀՈՐԿԱԾ 29. Մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խումբը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանին իրավագոր է որոշակի հարցերի ուսումնասիրման համար, անհրաժեշտության դեպքում ստեղծել ժամանակավոր աշխատանքային խմբեր:

2. Մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խմբի ղեկավարին և անդամներին, աշխատանքային խմբի լիազորությունների ժամկետով, որը չպետք է գերազանցի 3 ամիսը, իր կազմից ընտրում է մունիցիպալիտետի ավագանին: Ժամանակավոր աշխատանքային խմբի լիազորությունների ժամկետը կարող է երկարաձգվել մեկական ամսով: Ժամանակավոր աշխատանքային խմբի լիազորությունների ընդհանուր ժամկետը չպետք է գերազանցի 6 ամիսը:

3. Մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խմբում մունիցիպալիտետի ավագանու անդամները պետք է ընդգրկվեն մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունների ներկայացուցչությանը և այն մունիցիպալիտետի ավագանու անդամների թվին համամասնորեն, որոնք միավորված չեն ոչ մի խմբակցությունում: Մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով ժամանակավոր աշխատանքային խմբի անդամ, աշխատանքային խմբի լիազորությունների ժամկետով, խորհրդակցական ձայնի իրավունքով կարելի է նաև այլ անձանց հրավիրում:

4. Մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խմբի գործունեության կարգը սահմանվում է մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

ՀՈՐԿԱԾ 30. Մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամները կարող են միավորվել մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունում:

2. Միևնույն քաղաքական կուսակցության անդամներն իրավունք ունեն, միավորվելու միայն միևնույն խմբակցությունում (այսպիսի խմբակցություն կարող են ստեղծել նաև երկու կամ ավելի կուսակցության անդամները): Ընտրական բլոկի ներկայացմամբ ընտրված մունիցիպալիտետի ավագանու անկուսակցական անդամն իրավունք ունի միավորվել միայն տվյալ ընտրական բլոկում միավորված կուսակցությունների կողմից ստեղծված որևէ խմբակցությունում: Ընտրությունների մասնակից կուսակցության ներկայացմամբ ընտրված մունիցիպալիտետի ավագանու անկուսակցական անդամն իրավունք ունի միավորվել խմբակցությունում միայն տվյալ կուսակցության անդամների հետ:

3. Խմբակցություն ստեղծել ցանկացող մունիցիպալիտետի ավագանու անդամները կազմում են խմբակցության քաղաքական պլատֆորմ և կանոնադրություն: Մունիցիպալիտետի ավագանու անդամների միավորումը խմբակցության կարգավիճակ է ձեռք բերում գրանցման պահից: Խմբակցության ստեղծման և գործունեության կանոնները և նրա լիազորությունը սահմանվում են մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

4. Խմբակցության անդամների թիվը չպետք է լինի 3-ից պակաս:

5. Մունիցիպալիտետի ավագանու անդամը կարող է միավորվել միայն մեկ խմբակցությունում:

6. Խմբակցության ստեղծում կարելի է ինչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական հիմունքներով:

7. Թույլ չի տրվում խմբակցություններում միավորվել ազգային, կրոնական, մասնագիտական, անձնական կամ տարածքային (բնակման վայրի) նշանով:

ՀՈՂՎԱԾ 31. Մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու գործունեության կազմակերպված ապահովումն իրականացնում է մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը:

2. Մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմի ղեկավարին և աշխատակազմի ծառայողներին Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնների է նշանակում և պաշտոնից ազատում մունիցիպալիտետի ավագանու նախագահը:

ՀՈՂՎԱԾ 32. Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձինք (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձինք են.

- ա) մունիցիպալիտետի ավագանու նախագահը,
- բ) մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալը,
- գ) մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահը,
- դ) մունիցիպալիտետի ավագանու խմբակցության նախագահը:

ՀՈՂՎԱԾ 33. Մունիցիպալիտետի ավագանու նախագահը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու նախագահին իր կազմից, մունիցիպալիտետի ավագանու լիազորությունների ժամկետով, անդամների ընդհանուր թվի կեսից ավելիով ընտրում է մունիցիպալիտետի ավագանին:

2. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի թեկնածությունն անվանելու իրավունք ունի մունիցիպալիտետի ավագանու առնվազն 3 անդամ:

3. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի թեկնածուների ներկայացումից հետո մունիցիպալիտետի ավագանու նիստի նախագահը բարձրաձայնում է թեկնածուների ցուցակը և թեկնածուներից պահանջում համաձայնություն՝ քվեարկվելու ավագանու նախագահի պաշտոնին: Նիստի նախագահը քվեարկության համար կազմում է թեկնածուների միասնական ցուցակ՝ ըստ նրանց ներկայացման հերթականության:

4. Եթե մունիցիպալիտետի ավագանու նախագահի ընտրություններին 1 թեկնածու էր մասնակցում և նա չի կարողացել հավաքել ձայների անհրաժեշտ քանակ, անց են կացվում կրկնական ընտրություններ:

5. Եթե մունիցիպալիտետի ավագանու նախագահի ընտրություններին մասնակցում էր 2 թեկնածու և ոչ մեկը չի կարողացել հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն, այն թեկնածուի

համար, որն ամենից շատ ձայներ է ստացել, կրկին է անցկացվում քվեարկություն: Եթե նա այս դեպքում ևս չի հավաքում ձայների անհրաժեշտ քանակ, անց են կացվում կրկնական ընտրություններ: Քվեարկության ժամանակ ձայների հավասար բաշխման դեպքում անց են կացվում կրկնական ընտրություններ:

6. Եթե Մունիցիպալիտետի ավագանու նախագահի ընտրություններին մասնակցում էր 2-ից ավելի թեկնածու և ոչ մեկը չի կարողացել հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն, անց է կացվում ընտրությունների երկրորդ փուլ այն 2 թեկնածուների միջև, որոնք ստացել են ամենից շատ ձայներ: Երկրորդ փուլի քվեարկության ժամանակ ձայների հավասար բաշխման դեպքում անց են կացվում կրկնական ընտրություններ: Եթե երկրորդ փուլում ոչ մի թեկնածու չկարողանա հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն, այն թեկնածուի համար, որն ավել ձայն է ստացել անց է կացվում կրկնական քվեարկություն: Եթե նա այս դեպքում ևս չկարողանա հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն, անց են կացվում կրկնական ընտրություններ: Եթե ընտրությունների երկրորդ փուլ անցած թեկնածուն հանում է իր թեկնածությունը, նրա փոխարեն քվեարկության է դրվում ըստ ստացած ձայների քանակի հաջորդ թեկնածուն:

7. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի թեկնածուն իրավունք ունի, յուրաքանչյուր քվեարկությունից առաջ հանել իր թեկնածությունը:

8. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի թեկնածու միևնույն անձին անընդմեջ կարելի է ներկայացնել միայն երկու անգամ:

ՀՈԴՎԱԾ 34. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի պաշտոնանկ անելը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանին իրավագոր է պաշտոնանկ անել մունիցիպալիտետի ավագանու նախագահին:

2. Մունիցիպալիտետի ավագանու նախագահին պաշտոնանկ անելու հարցը մունիցիպալիտետի ավագանու առջև գրավոր կարող է առաջ քաշել մունիցիպալիտետի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Մունիցիպալիտետի ավագանու նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունված կհամարվի, եթե նրան կաջակցի մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան մունիցիպալիտետի ավագանին չի ընդունել որոշումը մունիցիպալիտետի ավագանու նախագահին պաշտոնանկ անելու մասին, թույլ չի տրվում մունիցիպալիտետի ավագանու նախագահին պաշտոնանկ անելու ընթացակարգը կրկին սկսել առաջիկա 3 ամսվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 35. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի լիազորությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու նախագահը.

ա) հրավիրում է, բացում, նախագահում, վարում և մունիցիպալիտետի ավագանու որոշման հիման վրա փակված հայտարարում մունիցիպալիտետի ավագանու նիստը,

բ) մունիցիպալիտետի ավագանու նիստի ընթացքում ապահովում է մունիցիպալիտետի ավագանու նիստերի դահլիճում կարգուկանոնի պահպանումը,

գ) ապահովում է Վրաստանի Օրենսդրությամբ և մոնիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված ընթացակարգերի պահպանում,

դ) կազմում է մոնիցիպալիտետի ավագանու նիստի օրակարգի նախագիծը, քննարկվելիք հարցի վերաբերյալ ելույթ ունենալ ցանկացողների ցուցակը, մոնիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով սահմանում է ելույթ ունեցողների հերթականությունը և նրանց ձայն տալիս,

ե) հարցը դնում է քվեարկության և հայտարարում քվեարկության արդյունքները,

զ) համակարգում է մոնիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների աշխատանքը,

է) ներկայացնում է մոնիցիպալիտետի ավագանին, սույն Օրենքով իրեն շնորհված լիազորությունների շրջանակներում,

ը) մոնիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների նախագահների ներկայացմամբ, մոնիցիպալիտետի ավագանու հանձնաժողովներ է հրավիրում փորձագետների և մասնագետների, նրանց հետ կնքում պայմանագրեր և խզում դրանք,

թ) ստորագրում է մոնիցիպալիտետի ավագանու որոշումները, կարգադրությունները և նիստերի արձանագրությունները,

ժ) պաշտոնների և նշանակում և պաշտոնից ազատում մոնիցիպալիտետի ավագանու աշխատակազմի ծառայողներին,

ժա) մոնիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով մոնիցիպալիտետի ավագանուն է ներկայացնում կատարված աշխատանքի մասին հաշվետվությունը,

ժբ) մոնիցիպալիտետի ավագանուն հաստատման է ներկայացնում մոնիցիպալիտետի ավագանու կանոնակարգը, մոնիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի կանոնադրությունը և մոնիցիպալիտետի ավագանու աշխատակազմի կանոնադրությունը,

ժգ) հաստատում է մոնիցիպալիտետի ավագանու աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները և պաշտոնեական հրահանգները,

ժդ) որոշումներ է ընդունում մոնիցիպալիտետի ավագանու աշխատակազմի ծառայողների խրախուսման և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկման մասին,

ժե) Վրաստանի օրենսդրությանը համապատասխան որոշում է ընդունում մոնիցիպալիտետի ավագանիում անձին որպես լոբիստ գրանցման մասին,

ժզ) իրականացնում է սույն Օրենքով, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով և մոնիցիպալիտետի ավագանու կանոնակարգով նրան շնորհված այլ լիազորություններ:

2. Մոնիցիպալիտետի ավագանու նախագահը հաշվետու է մոնիցիպալիտետի ավագանու հանդեպ:

ՀՈՂՎԱԾ 36. Մոնիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մոնիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալին մոնիցիպալիտետի ավագանու նախագահի ներկայացմամբ, իր կազմից, մոնիցիպալիտետի ավագանու լիազորությունների ժամկետով, ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներով ընտրում է մոնիցիպալիտետի ավագանին: Մոնիցիպալիտետի ավագանու նախագահն ունի մեկ տեղակալ,

իսկ եթե մունիցիպալիտետի ընտրողների թիվը գերազանցում է 100000-ը, մունիցիպալիտետի ավագանու նախագահը կարող է ունենալ երկու տեղակալ: (30.07.2014 N 2589)

2. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալի գործառույթները սահմանվում են մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

3. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալը մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով կատարում է մունիցիպալիտետի ավագանու նախագահի պարտականությունը՝ նրա կողմից լիազորությունները իրականացնել չկարողանալու դեպքում կամ նրա՝ պաշտոնից հրաժարվելու կամ պաշտոնանկ անելու ժամանակ:

4. Մունիցիպալիտետի ավագանին իրավագոր է պաշտոնանկ անել մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալին: Մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալի պաշտոնանկ անելու հարցը մունիցիպալիտետի ավագանու ամբողջ կարող են գրավոր բարձրացնել մունիցիպալիտետի ավագանու նախագահը և մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի ամսվազն մեկ հինգերորդը: Մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալի պաշտոնանկ անելու մասին որոշումը ընդունված կհամարվի, եթե նրան աջակցի մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

ՀՈԴՎԱԾ 37. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահին իր կազմից, մունիցիպալիտետի ավագանու լիազորությունների ժամկետով, ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներով ընտրում է մունիցիպալիտետի ավագանին: Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահի թեկնածուի անվանման իրավունք ունեն մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ հինգերորդը և մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունը:

2. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահը.

ա) հրավիրում է, բացում, նախագահում և վարում հանձնաժողովի նիստերը,

բ) ապահովում է Վրաստանի Օրենսդրությամբ, մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով և մունիցիպալիտետի հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ընթացակարգերի պահպանումը,

գ) կազմում է հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվելիք հարցի վերաբերյալ ելույթ ունեցողների ցուցակը, մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված կարգով սահմանում է ելույթ ունեցողների հերթականությունը և նրանց խոսք տալիս,

դ) հարցը քննարկման է դնում և հայտարարում քվեարկության արդյունքները,

ե) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

զ) գործում է հանձնաժողովի անունից,

է) հաշվետու է մունիցիպալիտետի ավագանու հանդեպ,

ը) իրականացնում է Վրաստանի Օրենսդրությամբ, մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի կանոնադրությամբ իրեն շնորհված այլ լիազորություններ:

3. Մունիցիպալիտետի ավագանին իրավագոր է պաշտոնից ազատել մունիցիպալիտետի

ավագանու հանձնաժողովի նախագահին: Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահին պաշտոնանկ անելու հարցը մունիցիպալիտետի ավագանու առջև գրավոր կարող են բարձրացնել մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, համապատասխան հանձնաժողովի կազմի կեսից ավելին և մունիցիպալիտետի ավագանու նախագահը: Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահի պաշտոնանկ անելու մասին որոշումը ընդունված կհամարվի, եթե նրան աջակցի մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

ՀՈԴՎԱԾ 38. Մունիցիպալիտետի ավագանու խմբակցության նախագահը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունը ղեկավարում է խմբակցության նախագահը, որին ընտրելու կարգը և լիազորությունը սահմանվում է մունիցիպալիտետի ավագանու խմբակցության կանոնադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 39. Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձի պաշտոնեական անհամատեղելիությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձի պաշտոնեական անհամատեղելիության հարցերը կարգավորվում են «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» Վրաստանի օրենքով:

ՀՈԴՎԱԾ 40. Մունիցիպալիտետի ավագանու անդամի կարգավիճակը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամի կարգավիճակը նրա՝ Օրենքով սահմանված իրավական վիճակն է, որն ընդգրկում է մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունը, պատասխանատվությունը, գործունեության կարգը և երաշխիքները:

2. Մունիցիպալիտետի ավագանու անդամ կարող է ընտրվել Վրաստանի քաղաքացին, որի 21 տարին լրացած է քվեարկության օրվա պահին:

3. Մունիցիպալիտետի ավագանու անդամն օգտվում է ազատ մանդատից և թույլ չի տրվում նրա ետկանչում: Մունիցիպալիտետի ավագանու անդամն իր պարտականությունների կատարման ժամանակ չի սահմանափակված ընտրողների և իրեն ներկայացնող քաղաքական միավորման կարգադրություններով և հանձնարարություններով:

4. Թույլ չի տրվում այլ անձի փոխանցել մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունները:

5. Ազատ մանդատը մունիցիպալիտետի ավագանու անդամին չի ազատում Վրաստանի Օրենսդրությամբ և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով ընտրողների հետ աշխատելու և նրանց հետ կապված պատասխանատվությունից:

6. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունն սկսվում է նրա լիազորությունների ճանաչման օրվանից և ավարտվում է նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին գումարման կամ այս անդամի լիազորությունների ժամկետի դադարեցման պես:

7. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունը, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են սույն Օրենքով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

8. Մունիցիպալիտետի ավագանու անդամը պարտավոր է լինել առնվազն մունիցիպալիտետի ավագանու մեկ հանձնաժողովի կազմի մեջ: Մունիցիպալիտետի ավագանու անդամը միևնույն ժամանակ կարող է լինել այլ հանձնաժողովի կազմում, սակայն ընդհանուր առմամբ ոչ ավելի, քան երկու հանձնաժողովում:

9. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործատուն իրավունք չունի, սահմանափակել մունիցիպալիտետի ավագանու անդամի իրավունքը մասնակցել մունիցիպալիտետի ավագանու, նրա հանձնաժողովի, խմբակցության և ժամանակավոր աշխատանքային խմբի աշխատանքներում: Աշխատանքային պայմանագիրը, որն ընդգրկում է պայմանավորվածություն զբաղվածի իրավունքի տվյալ հիմունքով սահմանափակման մասին, չեղյալ է համարվում: Թույլ չի տրվում այս հիմունքով անձին աշխատանքից ազատել, տեղափոխել ցածր վարձատրվող աշխատանքի կամ այլ տիպի խտրականություն:

ՀՈՂՎԱԾ 41. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության վարձատրությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամն իր լիազորությունն իրականացնում է պաշտոնետեական գործունեությունից չկտրվելով և անհատույց: Վարձատրվում է միայն մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձի գործունեությունը:

2. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի պաշտոնական աշխատավարձի առավելագույն քանակը սահմանվում է Վրաստանի Կառավարության որոշմամբ:

3. Մունիցիպալիտետի ավագանու անդամի՝ մունիցիպալիտետի ավագանու անդամի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը կարող են հատուցվել մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:

4. Թույլ չի տրվում մունիցիպալիտետի ավագանու անդամի ծախսերը հատուցել պարզևավճարների և հավելավճարների տեսքով:

ՀՈՂՎԱԾ 42. Մունիցիպալիտետի ավագանու անդամի պաշտոնետեական անհամատեղելիությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մունիցիպալիտետի ավագանու անդամն իրավունք չունի.

ա) լինել այլ ներկայացուցչական մարմնի անդամ,

բ) զբաղեցնել «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» Վրաստանի օրենքով նախատեսված պաշտոնատար անձի պաշտոն, բացառությամբ մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձի պաշտոնի,

գ) զբաղեցնել պաշտոն, որին անձին ընտրում է, նշանակում կամ հաստատում է Վրաստանի հորհրդարանը,

դ) զբաղեցնել պաշտոն, որին անձին նշանակում է Վրաստանի Նախագահը կամ Վրաստանի վարչապետը:

ե) զբաղեցնել պաշտոն, որին անձին ընտրում, նշանակում կամ հաստատում են Աբխազիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետության գերագույն ներկայացուցչական մարմինները,

զ) աշխատել Վրաստանի դատական իշխանության և դատախազության մարմիններում, պետական աուդիտի (հաշվետուգման) ծառայությունում, Վրաստանի ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների համակարգում,

է) լինել Վրաստանի ընտրական վարչության պաշտոնյա,

ը) աշխատել այն պետական մարմնում, որը Վրաստանի օրենսդրության համաձայն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների պետական վերահսկողություն,

թ) աշխատել մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմում և վարչությունում/ քաղաքապետարանում,

ժ) մասնակցել մունիցիպալիտետի (մունիցիպալիտետների) ձեռնարկության (ձեռնարկությունների) կառավարմանը (լինել տնօրեն, փոխտնօրեն, դիտորդական կամ տնօրենների խորհրդի անդամ և այլն), նաև լինել համապատասխան մունիցիպալիտետի բյուջեով ֆինանսավորված հաստատության տնօրեն կամ փոխտնօրեն,

ժա) աշխատել այլ երկրի հանրային ծառայությունում:

ՀՈՂՎԱԾ 43. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և ընդհատումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունը վաղաժամկետ կդադարեցվի, եթե.

ա) անձնական դիմումով հրաժարվի լիազորությունից,

բ) նրա հանդեպ օրինական ուժի մեջ է մտել վերջնական ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը կամ բաց է թողնվել դատարանի օրենքով ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի վերադաս ատյանի դատարան բողոքարկման ժամկետը,

գ) դատարանը ճանաչել է անգործունակ կամ անհետ կորած կամ հայտարարել է վախճանված,

դ) դադարեցվել է Վրաստանի քաղաքացիությունը,

ե) անհարգելի պատճառով անընդմեջ 6 ամսվա ընթացքում չի մասնակցել մունիցիպալիտետի ավագանու աշխատանքին,

զ) զբաղեցրել է սույն Օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված մունիցիպալիտետի ավագանու անդամի կարգավիճակին անհամատեղելի պաշտոն,

է) վախճանվել է:

2. Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձի լիազորությունը վաղաժամկետ կդադարեցվի նաև «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» Վրաստանի օրենքով նախատեսված պաշտոնատար անձի համար անհամատեղելի պաշտոնի զբաղեցման կամ անհամատեղելի գործունեության իրականացման դեպքում:

3. Սույն հոդվածի առաջին կետով սահմանված փաստերի մասին տեղեկատվությունը, բացառությամբ նույն կետի «ե» և «զ» ենթակետերով նախատեսված դեպքերի, մունիցիպալիտետի ավագանին ի գիտություն է առնում և ձևակերպում ավագանու նիստի արձանագրությամբ գրառումով:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերում մունիցիպալիտետի ավագանու անդամի/պաշտոնատար անձի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է համապատասխան փաստի առաջացման հաջորդ օրվանից: Մունիցիպալիտետի ավագանու անդամը լիազորություններից հրաժարվելու դեպքում այդ մասին անձնական դիմումով տեղեկացնում է

մունիցիպալիտետի ավագանու նախագահին: Նրա լիազորությունների դադարեցման պահ է համարվում համապատասխան դիմումի գրանցման հաջորդ օրը:

5. Եթե մունիցիպալիտետի ավագանու անդամը/պաշտոնատար անձը անընդմեջ 6 ամսվա ընթացքում չի մասնակցել մունիցիպալիտետի ավագանու աշխատանքին կամ խախտել է սույն Օրենքով սահմանված պաշտոնական անհամատեղելիության պահանջները, մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովը մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով պարզում է բացակայության պատճառը կամ ստուգում/պահանջում տեղեկություն պաշտոնական անհամապեղելիության փաստի որոշման համար: Եթե հաստատվի, որ բացակայության պատճառն անհարգելի է կամ մունիցիպալիտետի ավագանու անդամը/պաշտոնատար անձը խախտում է պաշտոնական անհամատեղելիության պահանջները, մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովը եզրակացություն է պատրաստում և ներկայացնում մունիցիպալիտետի ավագանու առաջիկա նիստին, որը որոշում է ընդունում մունիցիպալիտետի ավագանու անդամի/պաշտոնատար անձի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Այս որոշումն ուժի մեջ է համապատասխան ժամկետը (6 ամիսը) անցնելու /պաշտոնական անհամատեղելիության փաստը առաջանալու հաջորդ օրվանից:

6. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունը դադարեցվում է դատարանի կողմից նրա հանդեպ որպես խափանման միջոց կալանավորում կամ որպես վարչական պատիժ վարչական կալանավորում սահմանելու դեպքում: Լիազորությունների դադարեցման ժամկետը սահմանվում է համապատասխանաբար կալանավորման կամ վարչական կալանավորման տևողության ժամկետով:

7. Զրեական հետապնդման՝ արդարացնող հիմունքով դադարեցման, որպես խափանման միջոց կալանավորման չեղյալ համարելու կամ դատարանի կողմից արդարացնող դատավճռի կայացման դեպքում.

ա) վերականգնվում են մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունները, եթե չի անցել այն մունիցիպալիտետի ավագանու լիազորությունների ժամկետը, որի անդամ է նա, իսկ մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձին տրվում է չստացած աշխատավարձը:

բ) Մունիցիպալիտետի ավագանու անդամի համար, եթե անցած է այն մունիցիպալիտետի ավագանու լիազորությունների ժամկետը, որի անդամ էր նա, ձերբակալման կամ կալանավորման ժամկետը կհաշվվի մունիցիպալիտետի ավագանու անդամ լինելու ընդհանուր ժամկետի մեջ, իսկ մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձին կտրվի համապատասխան չստացած աշխատավարձը:

ՀՈՂՎԱԾ 44. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերն են.

ա) մասնակցությունը մունիցիպալիտետի ավագանու նիստերին,

բ) մունիցիպալիտետի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստումը և նախաձեռնումը,

գ) մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների, խմբակցությունների և ժամանակավոր աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցելը,

դ) մունիցիպալիտետի ավագանու հանդեպ հաշվետու մարմին/պաշտոնատար անձին

հարցումով դիմելը,

ե) ընտրողների ընդունումը, նրանց նամակների, առաջարկությունների և բողոքների քննարկումը,

զ) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված այլ ձևեր:

ՀՈՂՎԱԾ 45. Մունիցիպալիտետի ավագանու անդամի ընդհանուր լիազորությունները և պարտավորությունները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամն իրավագոր է.

ա) Հարցով դիմել մունիցիպալիտետի ավագանու հանդեպ հաշվետու մարմին, վարչության նախագահին/քաղաքապետին, այլ պաշտոնատար անձի և ստանալ պատասխան: Համապատասխան մարմինը և պաշտոնատար անձը պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում պատասխանել մունիցիպալիտետի ավագանու անդամի հարցին: Հարցի հեղինակի հետ համաձայնեցմամբ, այս ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավել, քան 10 օրով:

բ) Անխափանման հանդիպել մունիցիպալիտետի ավագանու հանդեպ հաշվետու պաշտոնատար անձանց:

գ) Անձամբ մասնակցել իր կողմից առաջադրված հարցերի քննարկմանը:

դ) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել ցանկացած տեղեկությունից, որն անհրաժեշտ է իր լիազորությունների իրականացման համար:

ե) Սահմանված կարգով մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմից պահանջել համապատասխան տեղեկությունը և կազմակերպչա-տեխնիկական ծառայությամբ ապահովում:

զ) Ներկայացնել մունիցիպալիտետի ավագանու վարչա-իրավական ակտի նախագիծը, բացառությամբ սույն Օրենքով նախատեսված դեպքերի:

է) Ներկայացնել առաջարկություն մունիցիպալիտետի ավագանու վարչա-իրավական ակտի հրապարակման մասին:

2. Մունիցիպալիտետի ավագանին պարտավոր է քննարկել սույն հոդվածի առաջին կետի «գ» ենթակետի հիման վրա, նախաձեռնման կարգով մունիցիպալիտետի ավագանու նիստին առաջադրված հարցերը:

3. Մունիցիպալիտետի ավագանու անդամը մունիցիպալիտետի ավագանու լիազորությունների վերագրված բոլոր հարցերի քննարկման ժամանակ օգտվում է վճռական ձայնի իրավունքից: Մունիցիպալիտետի ավագանու անդամն օգտվում է խորհրդակցական ձայնի իրավունքից մունիցիպալիտետի ավագանու այն մարմնի աշխատանքին մասնակցելիս, որին անդամ նա չի հանդիսանում:

4. Մունիցիպալիտետի ավագանու անդամը պարտավոր է:

ա) պահպանել Վրաստանի Սահմանադրությունը և օրենքները,

բ) մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հանդիպել քաղաքացիների հետ,

գ) մասնակցել մունիցիպալիտետի ավագանու նիստերին և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների աշխատանքներին,

դ) չտարածել և անձնական շահերի համար չօգտագործել տեղեկությունը, որը Վրաստանի օրենսդրության համաձայն պաշտպանված է հանրայնացումից:

5. Մունիցիպալիտետի ավագանու անդամն իրավունք չունի Օրենքով իրեն շնորհված լիազորությունները կամ դրանց հետ կապված հնարավորություններն օգտագործել անձնական շահերի համար: Մունիցիպալիտետի ավագանու անդամը պարտավոր է հրաժարվել մունիցիպալիտետի ավագանու նիստին այն հարցի մասին որոշման ընդունմանը մասնակցելուց և քվերակելուց, որի հանդեպ նա ունի անձնական շահ, կամ գոյություն ունի այլ հանգամանք, որը կազդի հարցի վճռման վրա:

ՀՈՐԿԱԾ 46. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունների իրականացումը մունիցիպալիտետի ավագանու նիստին **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամն իրավունք ունի մունիցիպալիտետի ավագանու նիստին.

ա) հարց դնել քննարկման,

բ) ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ մունիցիպալիտետի ավագանու լիազորություններին վերագրված այլ հարցերի մասին,

գ) մասնակցել բանավեճի, հարցեր տալ զեկուցողին և մունիցիպալիտետի ավագանու նիստի նախագահին, ստանալ պատասխան և գնահատել այն,

դ) մունիցիպալիտետի ավագանուն ծանոթացնել քաղաքացիների նամակները և դիմումները,

ե) կարծիք արտահայտել մունիցիպալիտետի ավագանու կողմից ստեղծվելիք մարմինների և այն պաշտոնատար անձանց թեկնածության մասին, որոնց ընտրում է, նշանակում, հաստատում կամ որոնց նշանակման վերաբերյալ համաձայնություն է տալիս մունիցիպալիտետի ավագանին,

զ) մասնակցել մունիցիպալիտետի բյուջեի նախագծի, բյուջեում փոփոխություններ կատարելու հարցի քննարկմանը,

է) իրականացնել Վրաստանի Օրենսդրությամբ և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով իրեն շնորհված այլ լիազորություններ,

2. Մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից մունիցիպալիտետի ավագանու նիստին իր լիազորությունների իրականացման ընթացակարգային հարցերը սահմանվում են մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

ՀՈՐԿԱԾ 47. Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունը ընտրողների հետ **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունն ընտրողների հետ ընդգրկում է.

ա) Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացում ընտրողների իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության համար,

բ) քաղաքացիների ընդունում,

գ) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքական միավորումների հետ համագործակցություն,

դ) կատարված աշխատանքի մասին ընտրողների տեղեկացում:

ԳԼՈՒԽ V

Մուկիցիպալիտետի գործադիր մարմինը

ՀՈԴՎԱԾ 48. Վարչության նախագահը/քաղաքապետը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մուկիցիպալիտետի գործադիր մարմինը և մուկիցիպալիտետի բարձրագույն պաշտոնատար անձը ինքնակառավարվող համայնքում վարչության նախագահին է, և քաղաքապետը՝ ինքնակառավարվող քաղաքում: Վարչության նախագահը/քաղաքապետը ներկայացնում է մուկիցիպալիտետը և ապահովում մուկիցիպալիտետի լիազորությունների իրականացում սույն Օրենքի, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերի և համապատասխան մուկիցիպալիտետի նորմատիվ ակտերի համաձայն:

2. Վարչության նախագահը/քաղաքապետը հաշվետու է մուկիցիպալիտետի ավագանու և բնակչության հանդեպ:

ՀՈԴՎԱԾ 49. Վարչության նախագահի/քաղաքապետի ընտրությունը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Վարչության նախագահ/քաղաքապետ ընտրվում է 4 տարի ժամկետով, ուղղակի ընտրություններով, համընդհանուր, հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվերակությամբ, «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական Օրենքով սահմանված կարգով:

2. Վարչության նախագահ/քաղաքապետ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկանից, որը Վրաստանում ապրել է առնվազն 5 տարի:

ՀՈԴՎԱԾ 50. Վարչություն/քաղաքապետարան (30.07.2014 N 2589)

Վարչությունը/քաղաքապետարանը մուկիցիպալիտետի գործադիր մարմնին ստորադասված հաստատություն է, որն ապահովում է վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների իրականացում: Վարչությունը/ քաղաքապետարանը ղեկավարում է վարչության նախագահը/ քաղաքապետը: Վարչությունը/քաղաքապետարանը բաղկացած է կառուցվածքային միավորներից: Վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորը համապատասխան կանոնակարգով սահմանված լիազորությունների շրջանակներում ապահովում է մուկիցիպալիտետի ավագանու և վարչության նախագահի/քաղաքապետի առաջադրանքների կատարում: Շրջանային վարչության/ քաղաքապետարանի կառուցվածքային միավորը կարող է ունենալ ստորաբաժանումներ, որոնք սահմանվում են շրջանային վարչության/ քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային միավորի կանոնակարգով և հաստիքացուցակով:

ՀՈԴՎԱԾ 51. Վարչության նախագահի/քաղաքապետին անվստահության հայտարարումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Վարչության նախագահին/քաղաքապետին անվտանգության հայտարարման ընթացակարգի նախաձեռնման հիմունքն է մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելի կամ մունիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 20 տոկոսի գրավոր նախաձեռնությունը՝ վարչության նախագահին/քաղաքապետին անվտանգության հայտարարման մասին:

2. Եթե վարչության նախագահին/քաղաքապետին անվտանգության հայտարարման մասին նախաձեռնությունը պատկանում է ընտրողներին, ստեղծվում է նախաձեռնող խումբ՝ առնվազն 10 անդամի կազմով: Նախաձեռնող խմբի ցուցակում պետք է նշված լինի նրա յուրաքանչյուր անդամի անունը, ազգանունը, բնակման վայրը, հաշվառման վայրը: Վարչության նախագահին/քաղաքապետին անվտանգության հայտարարման մասին նախաձեռնությունը նախաձեռնող խումբը պետք է կոնկրետ ձևակերպի: Համապատասխան նախաձեռնության վերաբերյալ դիմումը ներկայացվում է մունիցիպալիտետի ավագանուն:

3. Նախաձեռնող խմբի դիմումը և նախաձեռնող խմբի կազմը գրանցում է մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը, որը սույն Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն ապահովում է տեղեկության հանրային հրապարակում:

4. Նախաձեռնող խմբին գրանցման վկայական է տրվում գրանցման անցնելու դիմումի ներկայացման պահից 3 աշխատանքային օրվա ժամկետում: Գրանցումն իրականացնելը թույլատրելի է մերժել, եթե խախտված են սույն Օրենքի պահանջները:

5. Նախաձեռնող խումբը կարող է գրանցում իրականացնելու մերժումը ստանալու պահից 2-օրյա ժամկետում բողոքարկել այն համապատասխան շրջանային (քաղաքային) դատարանում, որը գործը քննարկում է և որոշում կայացնում 5-օրյա ժամկետում: Շրջանային (քաղաքային) դատարանի որոշումը 2-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարանում, որը որոշումը կայացնում է 5-օրյա ժամկետում: Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական է և չի բողոքարկվում:

6. Նախաձեռնող խումբը ստորագրահավաք է սկսում գրանցման վկայական ստանալու օրվանից: Ստորագրությունները հավաքվում են մունիցիպալիտետի ավագանու կողմից սահմանված ձևի թերթերի վրա: Յուրաքանչյուր այսպիսի թերթի վրա ստորագրում է ոչ ավելի, քան 50 քաղաքացի, որոնք իրենք են գրում իրենց անունը, ազգանունը, ծննդյան թվականը, ինքնությունը հավաստող վկայականի համարը, հաշվառման վայրը և ստորագրելու ամսաթիվ, ամիս, տարեթիվը: Վերոնշյալ տվյալներով լրացված յուրաքանչյուր թերթ ստորագրում է ստորագրահավաքի համար պատասխանատու անձը, որը նշում է իր հասցեն: Նրա ստորագրությունը պետք է վավերացնի նոտարական գրասենյակը կամ ավագանու աշխատակազմի համապատասխան իրավագոր անձը: Եթե ավագանին չունի սահմանված համապատասխան ձևի թերթ, նախաձեռնող խումբը սույն կետի պահանջների պահպանմամբ, ապահովում է ստորագրահավաքը:

7. Նախաձեռնող խումբը դիմումի գրանցումից ոչ ուշ, քան մեկ ամսում մունիցիպալիտետի ավագանու նախագահին է ներկայացնում վարչության նախագահին/քաղաքապետին անվտանգության հայտարարման մասին նախաձեռնության վերաբերյալ դիմումը և կցված ստորագրությունները, որոնցով հավաստվում է, որ նախաձեռնությանն աջակցում է մունիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 20 տոկոսը:

8. Նախաձեռնության սույն հոդվածի 7-րդ կետի համաձայն, մունիցիպալիտետի ավագանու նիստին քննարկման ներկայացումից կամ նրա ներկայացման համար մերժում ասելու որոշումն ընդունում է ավագանու նախագահը՝ դիմումի գրանցումից հետո 15-օրյա ժամկետում:

Նախաձեռնությունն ավագանու նիստին ներկայացնելու համար մերժում ասելը թույլատրելի է, եթե խախտված են սույն հոդվածի պահանջները: Ավագանու նախագահի մերժումը կարող է բողոքարկվել սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն:

9. Մունիցիպալիտետի ավագանու նախագահն ապահովում է նախաձեռնության՝ ավագանու նիստին քննարկման ներկայացումը սույն հոդվածի 7-րդ կետի համաձայն, դիմումի գրանցման պահից ոչ ուշ, քան 20 օրում: Եթե նախաձեռնությանը հետագա ընթացք տալուն ավագանու նախագահի մերժումը դատարանն անօրինական է ճանաչել, ավագանին նախաձեռնությունը քննարկում է դատարանի կողմից վերջնական որոշման ընդունումից հետո 5-օրյա ժամկետում:

10. Մունիցիպալիտետի ավագանու անդամների նախաձեռնությունը քննարկվում է նրա ներկայացումից ոչ ուշ, քան 10 օրում: Վարչության նախագահին/քաղաքապետին անվստահությունը հայտարարված կհամարվի, եթե նախաձեռնությանը աջակցի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Վարչության նախագահին/քաղաքապետին անվստահության հայտարարումն առաջացնում է նրա լիազորությունների դադարեցում:

11. Մունիցիպալիտետի ավագանու կողմից վարչության նախագահին/ քաղաքապետին անվստահություն չհայտարարելու դեպքում անվստահության հարցի առաջաջում թույլ չի տրվում առաջիկա 6 ամսվա ընթացքում:

12. Վարչության նախագահին/քաղաքապետին անվստահության հայտարարման ընթացակարգի նախաձեռնում և անվստահության հայտարարում թույլ չի տրվում վարչության նախագահի/քաղաքապետի ընտրելուց 6 ամսվա, նաև վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ժամկետի վերջին մեկ տարվա ընթացքում:

ՀՈՂՎԱԾ 52. Շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձինք (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձինք են.

ա) վարչության նախագահը/քաղաքապետը,

բ) վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալը,

գ) վարչության նախագահի/քաղաքապետի տեղակալը,

դ) վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը:

2. Շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց թիվը (ներառյալ վարչության նախագահը/քաղաքապետը) չպետք է գերազանցի 13-ը:

ՀՈՂՎԱԾ 53. Շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և այլ ծառայողների պաշտոնեական վարձատրությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վարչության նախագահի/քաղաքապետի պաշտոնեական վարձատրությունը սահմանվում է Վրաստանի Կառավարության որոշմամբ սահմանված առավելագույն քանակության շրջանակներում:

2. Շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և այլ ծառայողների պաշտոնեական վարձատրության քանակությունները վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացմամբ, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված հանրային ծառայողների պաշտոնների աստիճանավորման համակարգի նախատեսմամբ, սույն Օրենքի համաձայն, սահմանում է

մունիցիպալիտետի ավագանին:

ՀՈՂՎԱԾ 54. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վարչության նախագահի/քաղաքապետը.

ա) Շրջանային վարչության/քաղաքապետարանի կազմակերպչական գործունեության ոլորտում.

ա.ա) ընդհանուր ղեկավարում և համակարգում է շրջանային վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորների գործունեությունը,

ա.բ) ավագանու հաստատման է ներկայացնում շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգը և հաստիքացուցակը, նաև շրջանային վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորների կանոնակարգերը, (30.07.2014 N 2589)

ա.գ) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց,

ա.դ) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում շրջանային վարչության/քաղաքապետարանի ծառայողներին,

ա.ե) բաշխում է շրջանային վարչության/քաղաքապետարանի ծառայողների գործառույթները, հանձնարարություններ է տալիս շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և լսում նրանց հաշվետվությունները կատարված աշխատանքի մասին,

ա.զ) շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում է շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձանց լիազորությունների պատգամում, բացառությամբ սույն կետի «ա.ա»-«ա.գ», «բ.ա»-«բ.բ», «դ.ժ», «ե.գ» և «ե.թ» ենթակետերով նախատեսված լիազորությունների, նաև այն լիազորությունները, որոնք սույն Օրենքի համաձայն, ավագանու կողմից հաստատման կամ համաձայնություն տալու անհրաժեշտություն ունեն,

ա.է) որոշումներ է կայացնում շրջանային վարչության/քաղաքապետարանի ծառայողների խթանման և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,

ա.ը) հաստատում է շրջանային վարչության/քաղաքապետարանի ներքին կարգապահական կանոնները և պաշտոնեական հրահանգները:

բ) Մունիցիպալիտետի ավագանու հետ փոխհարաբերության ոլորտում.

բ.ա) տարին առնվազն մեկ անգամ, մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքի մասին, նաև ավագանու անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով ավագանուն է ներկայացնում արտահերթ հաշվետվություն,

բ.բ) սույն Օրենքին համապատասխան կազմում է և ավագանուն ընդունելու ներկայացնում վարչա-իրավական ակտերի նախագծեր,

բ.գ) ավագանու նախագահին է դիմում՝ ավագանու արտահերթ նիստի հրավիրման մասին առաջարկությամբ, ավագանու հերթական նիստին ներկայացնում լրացուցիչ քննարկվելիք հարց, իրավագոր է ներկա գտնվել ավագանու և ավագանու հանձնաժողովների բաց և փակ նիստերին,

բ.դ) ապահովում է ավագանու կողմից ընդունված վարչա-իրավական ակտերի կատարում:

գ) Ֆինանսա-բյուջետային բնագավառում.

գ.ա) կազմում է և ավագանուն հաստատման ներկայացնում մունիցիպալիտետի բյուջեի և բյուջեի մեջ ընդգրկվելիք փոփոխությունների նախագծեր, ապահովում է հաստատված բյուջեի կատարում իր լիազորությունների շրջանակներում,

գ.բ) ավագանուն հաստատելու է ներկայացնում հաշվետու տարվա բյուջեի կատարման հաշվետվությունը,

գ.գ) Վրաստանի Բյուջետային օրենսգրքին համապատասխան, ավագանու կողմից սահմանված կարգով, առանց մունիցիպալիտետի հաստատված բյուջեում փոփոխություններ անելու որոշում է ընդունում ծախսող հաստատությունների բյուջետային դասակարգման հոդվածների և գաղտնագրերի միջև գումարների բաշխման մասին,

գ.դ) ավագանուն հաստատելու է ներկայացնում Օրենքով սահմանված տեղական հարկերի և տուրքերի ներմուծման, փոփոխման և վերացման մասին որոշումների նախագծեր,

գ.ե) մունիցիպալիտետի անունից և ավագանու համաձայնությամբ վարկ է վերցնում սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական ակտերով սահմանված կարգով,

գ.զ) ավագանուն հաստատելու է ներկայացնում մունիցիպալիտետի կողմից տարվա ընթացքում իրականացվելիք գնումների պլանը, իրականացնում է գնումներ՝ Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով: (30.07.2014 N 2589)

դ) Մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման բնագավառում.

դ.ա) սույն Օրենքով և ավագանու կողմից սահմանված կարգով որոշում է ընդունում մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման մասին,

դ.բ) ավագանու համաձայնությամբ որոշումներ է ընդունում՝ մասնավոր իրավունքի արտադրական և ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց հիմնադրման, վերակառուցման, լուծարման, արտադրական և ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց հիմնադրմանը մասնակցելու և դրանցում անդամագրման, մունիցիպալիտետի բաժնեմասային մասնակցությամբ ստեղծված ձեռնարկության կապիտալում փոփոխության, արտադրական իրավաբանական անձի բաժնեմասի/բաժնետոմսերի ձեռքբերման մասին,

դ.գ) սույն Օրենքով նախատեսված դեպքերում ավագանու համաձայնությամբ որոշում է ընդունում մունիցիպալիտետի շարժական գույքի անմիջական տնօրինման կարգով, հատուցմամբ կամ անհատույց օգտվելու իրավունքով, պայմանով կամ առանց պայմանի տրամադրման մասին,

դ.դ) ավագանու համաձայնությամբ վճռում է անշարժ գույքի անմիջական տնօրինման կարգով, հատուցմամբ կամ անհատույց օգտվելու իրավունքով, պայմանով կամ առանց պայմանի տրամադրման հարցը,

դ.ե) ավագանու համաձայնությամբ իրավագոր է վճռել մունիցիպալիտետի գույքը ձեռքբերողի/օգտվելու իրավունքով ընդունողի/կառավարման իրավունքով ընդունողի պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար նրա վրա դրված/ դրվելիք կանխավճարից ազատելու հարցը,

դ.զ) ավագանու համաձայնությամբ իրավագոր է վճռել սեփականաշնորհված կամ/և օգտվելու իրավունքով տրամադրված գույքը ընդունողին՝ այս գույքի հետ կապված պայմանի (պայմանների) կատարման պարտավորությունից ազատելու հարցը, բացառությամբ ֆինանսական և ներդրումային պարտավորությունների կատարման հետ կապված պայմանների,

դ.է) սույն Օրենքի համաձայն, ավագանու համաձայնությամբ որոշում է ընդունում մունիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարման մասին,

դ.ը) ապահովում է մոնիցիպալիտետի գույքի խնամք, կառուցում, վերակառուցում և վերականգնում,

դ.թ) ավագանուն հաստատելու է ներկայացնում մոնիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման օբյեկտների ցանկը և սեփականաշնորհման պլանը,

դ.ժ) իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նրանց օգտվելու իրավունքով փոխանցված մոնիցիպալիտետի գույքի օգտագործման և գույքից օգտվելու կանոնների պահպանման մշտադիտարկում,

դ.ժա) մոնիցիպալիտետի գույքի պայմաններով աճուրդի ձևով տնօրինման դեպքում իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից համապատասխան պայմանների կատարման մշտադիտարկում:

ե) Գործադիր գործունեության այլ բնագավառներում.

ե.ա) ստորագրում է մոնիցիպալիտետի անունից կնքված պայմանագրերը և համաձայնագրերը,

ե.բ) ներկայացնում է մոնիցիպալիտետը և գործում նրա անունից պաշտոնական հարաբերությունների ժամանակ, մոնիցիպալիտետի անունից շնորհում է ներկայացուցչական լիազորություններ, այդ թվում, լիազորություններ (վստահագրեր), բացառությամբ սույն Օրենքով նախատեսված դեպքերի,

ե.գ) մոնիցիպալիտետի լիազորությունների շրջանակներում ապահովում է համապատասխան սոցիալ-տնտեսական զարգացման և այլ ծրագրերի, ռազմավարությունների և պլանների նախապատրաստում, ավագանուն հաստատելու է ներկայացում և իրականացում,

ե.դ) կազմում է և ավագանուն հաստատելու է ներկայացնում մոնիցիպալիտետի տարածական-տարածքային պլանավորման փաստաթղթեր,

ե.ե) իր լիազորությունների շրջանակներում հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր,

ե.զ) իր լիազորություններին վերագրված որոշակի հարցերի ուսումնասիրման, համապատասխան եզրակացությունների և երաշխավորությունների պատրաստման համար ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ խորհուրդներ և աշխատանքային խմբեր,

ե.է) շնորհում է մոնիցիպալիտետի պատվավոր կոչումներ և պարգևներ,

ե.ը) ապահովում է սույն Օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածներով նախատեսված մոնիցիպալիտետի այլ լիազորությունների իրականացում սույն Օրենքով, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով և ավագանու կողմից սահմանված կարգով,

ե.թ) իրականացնում է սույն Օրենքով, շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգով և ավագանու վարչա-իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

2. Վարչության նախագահը/քաղաքապետն իրավագործ է մոնիցիպալիտետի վարչական միավորում նշանակել վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացուցիչ: Վարչության նախագահի/քաղաքապետի ներկայացուցչի լիազորությունը սահմանվում է շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգով:

3. Վարչության նախագահի/քաղաքապետի կողմից անհատական հարցի վերաբերյալ որոշում ընդունելիս՝ ավագանու անդամի կողմից նրա գործունեության միջամտելն անթույլատրելի է:

ՀՈՂՎԱԾ 55. Վարչության նախագահի/քաղաքապետի պաշտոնեական անհամատեղելիությունը

(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Վարչության նախագահի/քաղաքապետի պաշտոնեական անհամատեղելիության հարցերը կարգավորվում են «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» Վրաստանի օրենքի համաձայն:

ՀՈՂՎԱԾ 56. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ընդհատման և դադարեցման հիմունքները

1. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ընդհատման հիմունքն է.

ա) դատարանի կողմից խափանման միջոցի տեսքով կալանավորման սահմանումը,

բ) դատարանի կողմից վարչական պատժի տեսքով վարչական կալանքի սահմանումը,

գ) դատարանի մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, եթե բաց չի թողնված Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով վերադաս ատյանի դատարան բողոքարկման ժամկետը,

դ) արձակուրդը,

ե) ժամանակավոր անաշխատունակությունը,

զ) նախագահական կամ ներկայացուցչական մարմինների ընտրություններին որպես թեկնածու ներկայացնելը, եթե Օրենքով այլ բան չի սահմանված,

է) լիազորությունների ընդհատման այլ դեպքեր (Օրենքին համապատասխան կամ նրա հիման վրա):

2. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորություններ դադարեցման հիմունք է.

ա) լիազորությունների ժամկետի սպառումը,

բ) լիազորություններից հրաժարումը անձնական դիմումի հիման վրա,

գ) վերջնական ատյանի դատարանի մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կամ եթե բաց է թողնվել դատարանի օրենքով ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի վերադաս ատյանի դատարան բողոքարկման ժամկետը,

դ) վախճանվելը,

ե) դատարանի կողմից անգործունակ կամ անհետ կորած ճանաչելը կամ վախճանված հայտարարելը,

զ) Վրաստանի քաղաքացիության դադարեցումը,

է) «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» Վրաստանի օրենքով նախատեսված պաշտոնատար անձին անհամատեղելի պաշտոնի զբաղեցումը կամ անհամատեղելի գործունեության իրականացումը,

ը) մունիցիպալիտետի ավագանու կողմից անվստահության հայտարարումը,

թ) սույն Օրենքի XVIII գլխով նախատեսված դեպքերը:

3. Սույն հոդվածի առաջին կետի «ա»–«ե» ենթակետերով նախատեսված դեպքերում վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների դադարեցման ժամկետը սահմանվում է համապատասխանաբար կալանավորման կամ վարչական կալանքի գործողության ժամկետով, վերադաս ատյանի դատարան բողոքարկման ժամկետով, արձակուրդի ժամկետով և ժամանակավոր անաշխատունակության ժամկետով, իսկ «զ» ենթակետով նախատեսված դեպքում՝ ընտրական

հանձնաժողովի կողմից որպես թեկնածու գրանցումից մինչև համապատասխան ընտրությունների արդյունքների ամփոփման ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին և 2-րդ կետերով սահմանված փաստերի մասին տեղեկատվությունը, բացառությամբ 2-րդ կետի «է»–«թ» ենթակետերով նախատեսված դեպքերի, մոնիցինգայլիտետի ավագանին ի գիտություն է ընդունում և ձևակերպում է ավագանու նիստի արձանագրությամբ գրառումով: Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունն ընդհատվում է/դադարում է համապատասխան փաստի առաջացման հաջորդ օրվանից: Վարչության նախագահը/քաղաքապետը անձնական դիմումով հանում է իր լիազորությունը ավագանու հանդեպ: Այսպիսի դեպքում վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունը դադարում է համապատասխան դիմումի գրանցման հաջորդ օրվանից: Պաշտոնեական անհամատեղելիության մասին որոշումն ավագանին ընդունում է սույն Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն:

5. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ընդհատման և դադարեցման դեպքում նրա պարտականությունը կատարում է վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալը:

6. Զրեական հետապնդման` արդարացնող հիմունքով դադարեցման, որպես խափանման միջոց սահմանված կալանավորման չեղյալ հայտարարման կամ դատարանի կողմից արդարացնող դատավճռի կայացման դեպքում.

ա) վերականգնվում է վարչության նախագահի/քաղաքապետի` վարչության նախագահի / քաղաքապետի լիազորությունը, եթե չի անցել նրա լիազորությունների ժամկետը և տրվում է չստացած աշխատավարձը` Վրաստանի օրենսդրության համաձայն,

բ) եթե անցել է նրա լիազորությունների ժամկետը, ձերբակալման կամ կալանավորման ժամկետը, տվյալ ժամանակը վարչության նախագահի/քաղաքապետի համար կհաշվվի վարչության նախագահ/քաղաքապետ աշխատելու ընդհանուր ժամկետում և նրան կտրվի համապատասխան չստացած աշխատավարձը:

7. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին մոնիցինգայլիտետի ավագանու որոշման օրինականության հարցը կարող է բողոքարկվել որոշումն ընդունելուց հետո 2-օրյա ժամկետում` համապատասխան շրջանային (քաղաքային) դատարան, որը գործը քննարկում է և որոշում ընդունում 2-օրյա ժամկետում: Շրջանային (քաղաքային) դատարանի որոշումը 2-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը գործը քննարկում է և որոշումը կայացնում 2-օրյա ժամկետում: Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական է և չի բողոքարկվում:

8. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում վարչության նախագահի/քաղաքապետի արտահերթ ընտրությունները նշանակվում են «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված կարգով, վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների դադարեցումից հետո ոչ շուտ, քան 9 և ոչ ուշ, քան 11 օրից: Վարչության նախագահի/քաղաքապետի արտահերթ ընտրություններն անց են կացվում վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների դադարեցման պահից ոչ ուշ, քան 50 օրից:

9. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նորընտիր վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ժամկետը սահմանվում է ավագանու լիազորությունների ժամկետով:

10. Եթե վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների դադարեցման ժամանակ մինչև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները մնացել է 1 տարուց պակաս,

վարչության նախագահի/քաղաքապետի արտահերթ ընտրություններ չեն անցկացվում:

ՀՈՂՎԱԾ 57. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալը և տեղակալը (տեղակալները) (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վարչության նախագահի/քաղաքապետը ունի առաջին տեղակալ և տեղակալ (տեղակալներ), որոնց պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում վարչության նախագահի/քաղաքապետը:

2. Ինքնակառավարվող քաղաքում քաղաքապետարանի կանոնակարգով քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնի փոխարեն կարող է սահմանվել փոխքաղաքապետի պաշտոն: Փոխքաղաքապետի պաշտոնեական կարգավիճակը հավասարվում է քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնեական կարգավիճակին:

3. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալը/տեղակալը (տեղակալները) գործառույթների բաշխման համապատասխան ղեկավարում է (ղեկավարում են) շրջանային վարչության/քաղաքապետարանի լիազորություններին վերագրված ոլորտը (ոլորտները), կազմակերպում (կազմակերպում են) և վերահսկում (վերահսկում են) մուկիցիպալիտետի վարչա-իրավական ակտերի և վարչության նախագահի/քաղաքապետի առաջադրանքների կատարումը, շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգին համապատասխան, սեփական լիազորությունների շրջանակներում հրապարակում (հրապարակում են) անհատական վարչա-իրավական ակտեր: (30.07.2014 N 2589)

4. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի (տեղակալների) լիազորությունները սահմանվում են շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգով:

ՀՈՂՎԱԾ 58. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի պաշտոնեական անհամատեղելիությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի պաշտոնեական անհամատեղելիության հարցերը կարգավորվում են «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» Վրաստանի օրենքին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 59. Շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնեական անձանց լիազորությունների ընդհատումը և դադարեցումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի լիազորությունները ընդհատվում են սույն Օրենքի 56-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված համապատասխան հիմունքի գոյության դեպքում, իսկ լիազորությունները դադարեցվում են սույն Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի «ա»–«է» ենթակետերով նախատեսված համապատասխան հիմունքի գոյության դեպքում: Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի լիազորություններն դադարեցվում են նաև նոր վարչության նախագահի/քաղաքապետ ընտրելիս (լիազորությունները սկսելիս): (30.07.2014 N 2589)

2. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի լիազորությունները դադարեցվում են նաև վարչության նախագահի/քաղաքապետի կողմից նրանց պաշտոնից ազատելու դեպքում:

3. Վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի և տեղակալի լիազորությունների դադարեցման հարցերը կարգավորվում են միայն սույն Օրենքով և սույն Օրենքի հիման վրա ընդունած մոնիցինգի պալիտեի ավագանու համապատասխան որոշմամբ: (30.07.2014 N 2589)

ՀՈԴՎԱԾ 60. Վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը տեղական ինքնակառավարման պաշտոնյա է, որին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում վարչության նախագահը/քաղաքապետը:

2. Վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը.

ա) վարում է կառուցվածքային միավորի գործունեությունը և պատասխանատու է այս միավորին հանձնարարված խնդիրների և գործառույթների կատարման համար,

բ) գործառույթները բաժանում է կառուցվածքային միավորի ծառայողներին,

գ) վարչության նախագահին/քաղաքապետին առաջարկություններ է ներկայացնում՝ կապված կառուցվածքային միավորի հաստիքային հարցերի հետ, կառուցվածքային միավորի ծառայողների խրախուսման, կարգապահական պատասխանատվության, արձակուրդի, ծառայողական գործուղման, որակավորման բարձրացման և ուսուցման մասին,

դ) սահմանում է կառուցվածքային միավորի գործունեության կազմակերպման և պլանավորման կանոնները, ձևերը և մեթոդները, կառուցվածքային միավորի ծառայողների պաշտոնեական պարտականությունները,

ե) վարչության նախագահին/քաղաքապետին ներկայացնում է կառուցվածքային միավորի կողմից պատրաստված հարցեր, առաջարկություններ և հանձնարարականներ,

զ) վարչության նախագահին/քաղաքապետին պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում կառուցվածքային միավորի կատարած աշխատանքի մասին,

է) շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգի համաձայն, իր լիազորությունների շրջանակներում հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր,

ը) հաշվետու է վարչության նախագահի/քաղաքապետի հանդեպ:

3. Շրջանային վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի գործունեության ծառայողական վերահսկողությունն իրականացնում է վարչության նախագահը/քաղաքապետը:

4. Շրջանային վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարի պաշտոնեական անհամատեղելիության, նաև լիազորությունների ընդհատման և դադարեցման հարցերը կարգավորվում են սույն Օրենքի 58-րդ և 59-րդ հոդվածների համաձայն:

ԳԼՈՒԽ VI

Մուկիցիպալիտետի մարմինների և պաշտոնատար անձանց վարչա-իրավական ակտերը

ՀՈԴՎԱԾ 61. Մուկիցիպալիտետի մարմինների և պաշտոնատար անձանց վարչա-իրավական ակտերը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մուկիցիպալիտետի ավագանին և պաշտոնատար անձինք Վրաստանի Օրենսդրությամբ շնորհված լիազորությունների շրջանակներում հրապարակում են համապատասխան վարչա-իրավական ակտեր:

2. Մուկիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչա-իրավական ակտը ավագանու որոշումն է, իսկ անհատական վարչա-իրավական ակտ է ավագանու կարգադրությունը:

3. Մուկիցիպալիտետի պաշտոնատար անձանց անհատական վարչա-իրավական ակտերն են.

ա) վարչության նախագահի/քաղաքապետի հրամանը,

բ) քաղաք թբիլիսիի մուկիցիպալիտետի կառավարության կարգադրությունը,

գ) ավագանու նախագահի հրամանը,

դ) վարչության նախագահի/քաղաքապետի առաջին տեղակալի հրամանը, վարչության նախագահի/քաղաքապետի տեղակալի հրամանը,

ե) շրջանային վարչության/քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարի հրամանը,

զ) քաղաք թբիլիսիի մուկիցիպալիտետի շրջանային վարչության նախագահի հրամանը:

4. Մուկիցիպալիտետի ավագանին վարչա-իրավական ակտ է ընդունում ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, բայց առնվազն ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդով, եթե Սույն Օրենքով այլ բան չի որոշված:

5. Եթե մուկիցիպալիտետի ավագանու կողմից այլ որոշում չի ընդունվել, վարչա-իրավական ակտի օրինականության կամ այլ հարցերի հետ կապված դատական վեճի ժամանակ մուկիցիպալիտետը դատարանում ներկայացնում է մուկիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը:

6. Մուկիցիպալիտետի վարչա-իրավական ակտերի նախապատրաստման, ընդունման, հրապարակման, գործողության, հաշվառման և կանոնակարգման կանոնները սահմանվում են սույն Օրենքով, Վրաստանի Ընդհանուր վարչական օրենսգրքով, «Նորմատիվ ակտերի մասին» Վրաստանի օրենքով, մուկիցիպալիտետի մարմինների կանոնակարգերով և այլ նորմատիվ ակտերով:

ՀՈԴՎԱԾ 62. Մուկիցիպալիտետի վարչա-իրավական ակտի բողոքարկումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մուկիցիպալիտետի մարմինների և պաշտոնատար անձանց վարչա-իրավական ակտերը բողոքարկվում են դատարանում սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենքներով սահմանված կարգով:

2. Վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձի, բացառությամբ մուկիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի, անհատական վարչա-իրավական ակտը բողոքարկվում է

վարչության նախագահի/քաղաքապետի մոտ և այնուհետև՝ դատարանում՝ Օրենքով սահմանված կարգով:

3. Եթե Մունիցիպալիտետի գործադիր մարմնի կամ շրջանային վարչության/քաղաքապետարանի պաշտոնատար անձի վարչա-իրավական ակտը հակասում է մունիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչա-իրավական ակտին կամ/և Վրաստանի Օրենսդրությանը, ավագանին անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ ընդունում է որոշում նրա՝ դատարանում բողոքարկման մասին: Այսպիսի դեպքում դատարանում ավագանին ներկայացնում է ավագանու կամ ավագանու հանձնարարությամբ ավագանու նախագահի կողմից որոշված անձը, իսկ գործադիր մարմինը/վարչությունը/քաղաքապետարանը՝ վարչության նախագահի/քաղաքապետի կողմից որոշված անձը:

ԲԱԺԻՆ III

Վրաստանի մայրաքաղաք՝ Թբիլիսի

ԳԼՈՒԽ VII

Վրաստանի մայրաքաղաքի կարգավիճակը

ՀՈՂՎԱԾ 63. Վրաստանի մայրաքաղաքը և նրա կարգավիճակը ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

1. Վրաստանի մայրաքաղաքը՝ Թբիլիսին, ինքնակառավարվող քաղաք է:

2. Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի (հետագայում՝ Թբիլիսի), որպես Վրաստանի մայրաքաղաքի, կարգավիճակը ենթադրում է Թբիլիսիի առանձնահատուկ իրավական վիճակը, որը պետական և տեղական շահերի պաշտպանության համար ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով Թբիլիսիի կառավարում:

3. Եթե սույն բաժնով այլ բան չի սահմանված, Թբիլիսիի, որպես մունիցիպալիտետի, իրավական և տնտեսական հիմունքները, մունիցիպալիտետի և նրա մարմինների /պաշտոնատար անձանց լիազորությունները և գործունեության կարգը, նաև մունիցիպալիտետի մարմինների կառուցվածքը և կազմակերպչական կազմակերպման կարգը սահմանվում է սույն Օրենքի համապատասխան գլուխներով մունիցիպալիտետի համար սահմանված կանոնակարգերով:

ՀՈՂՎԱԾ 64. Թբիլիսիի սեփական լիազորությունները ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

Թբիլիսիի սեփական լիազորություններն են.

ա) սույն Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները,

բ) անհետաձգելի բժշկական շտապ օգնությամբ ապահովումը,

գ) Վրաստանի մայրաքաղաքի սահմանված վարչական սահմաններում գտնվող բնական և մարդածին գեոտեղեկատվական միավորի, Թբիլիսիի վարչական միավորի, պատմականորեն ձևավորված թաղամասի, հատակագծման շրջանի, այս կամ այն գոտու, միկրոշրջանի, այլ տարածքային միավորի, լեռան, բլրի, կիրճի, գետի, աղբյուրի, հրապարակի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, Եսպլանադի, ճեմուղու,

խճուղու, պուրակի, այգու, զբոսայգու, անտառա-պարկի, անտառի, քաղաքային գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը,

դ) կայուն (կենցաղային) թափոնների կառավարումը:

ե) հոսող ջրերի մաքրում և օգտահանում:

ՀՈՂՎԱԾ 65. Թբիլիսիի մարմինները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Թբիլիսիում տեղական հնքնակառավարումն իրականացվում է Թբիլիսիի ներկայացուցչական մարմնի՝ Թբիլիսիի ավագանու, և Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգի՝ Թբիլիսիի քաղաքապետարանի միջոցով:

ՀՈՂՎԱԾ 66. Թբիլիսիի վարչական միավորները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի տարածքը բաժանվում է վարչական միավորների: Թբիլիսիի վարչական միավոր է շրջանը: Թբիլիսիի վարչական միավորը հնքնակառավարվող միավոր չէ:

2. Թբիլիսիի վարչական միավորի ստեղծման և լուծարման, նրա սահմանների սահմանման և փոփոխման մասին որոշումները Թբիլիսիի քաղաքապետի կամ ավագանու անդամների առնվազն մեկ երրորդի ներկայացմամբ, ավագանու անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ ընդունում է Թբիլիսիի ավագանին:

ԳԼՈՒԽ VIII

Թբիլիսիի ներկայացուցչական մարմինը

ՀՈՂՎԱԾ 67. Թբիլիսիի ավագանին (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Թբիլիսիի ավագանին Թբիլիսիի ներկայացուցչական մարմինն է, որի անդամների թիվը և ընտրության կարգը սահմանվում է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական Օրենքով:

ՀՈՂՎԱԾ 68. Թբիլիսիի ավագանու լիազորությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի ավագանու լիազորությանը, բացի սույն Օրենքով նախատեսված մոնիցինգայլիտետի ավագանու լիազորություններից, նաև պատկանում է.

ա) Թբիլիսիի կառավարության պաշտոնատար անձանց գործունեության վերահսկումը,

բ) Վրաստանի Օրենսդրության համաձայն, սույն Օրենքով նախատեսված դեպքերում Թբիլիսիի կառավարությանը վարկ վերցնելու համաձայնություն տալը,

գ) Վրաստանի մայրաքաղաքի սահմանված վարչական սահմաններում գտնվող բնական և մարդածին գետտեղեկատվական միավորի, Թբիլիսիի վարչական միավորի, պատմականորեն ձևավորված թաղամասի, հատակագծման շրջանի, այս կամ այն գոտու, միկրոշրջանի, այլ տարածքային միավորի, լեռան, բլրի, կիրճի, գետի, աղբյուրի, հրապարակի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, էսպլանադի, ճեմուղու, խճուղու, պուրակի,

այգու, զբոսայգու, անտառա-պարկի, անտառի, քաղաքային գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը,

դ) Թբիլիսիի կառավարության ներկայացմամբ, Վրաստանի օրենսդրության համաձայն, հանրային իրավունքի իրավաբանական անձի հիմնադրման, վերակառուցման և լուծարման, նաև նրա կանոնակարգի հաստատման մասին որոշումների ընդունումը,

ե) սույն Օրենքով նախատեսված դեպքում Թբիլիսիի կառավարության ներկայացմամբ, մունիցիպալիտետի անունից կնքված պայմանագրի հաստատումը, նաև այնպիսի գործարքի համար համաձայնության տալը, որի արժեքը գերազանցում է մունիցիպալիտետի բյուջեի վճարումների 5 տոկոսը, (30.07.2014 N 2589)

զ) Թբիլիսիի կառավարության ներկայացմամբ, մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման կանոնների, նաև 50 տոկոսից ավելի բաժնեմասային մասնակցությամբ ստեղծված ձեռնարկության գույքի տնօրինման կարգի սահմանումը սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գործող նորմատիվ ակտերով սահմանված կարգով,

է) Թբիլիսիի կառավարության ներկայացմամբ, մունիցիպալիտետի գնումների պլանի հաստատումը,

ը) Թբիլիսիի կառավարության ներկայացմամբ, մունիցիպալիտետի գույքի սփականաշնորհման օբյեկտների ցուցակի և սեփականաշնորհման պլանի հաստատումը,

թ) սույն Օրենքով սահմանված կարգով Թբիլիսիի կառավարության անդամի պաշտոնի նշանակմանը համաձայնություն տալը,

ժ) սույն Օրենքի 16-րդ, 17-րդ և 64-րդ հոդվածներով նախատեսված լիազորությունների իրականացման հետ կապված որոշումների ընդունումը,

ժա) սույն Օրենքով, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գործող նորմատիվ ակտերով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով նախատեսված այլ լիազորությունների իրականացում:

2. Եթե սույն Օրենքը կամ Վրաստանի Օրենսդրությունը չի սահմանում մունիցիպալիտետի սեփական կամ պատգամված լիազորությունների իրականացման համար պատասխանատու մունիցիպալիտետի մարմին, տվյալ լիազորությունը իրականացնում է Թբիլիսիի ավագանին կամ Թբիլիսիի ավագանու հանձնարարությամբ՝ Թբիլիսիի քաղաքապետը/Թբիլիսիի կառավարությունը:

3. Թբիլիսիի ավագանու այն լիազորությունը, որը սույն Օրենքով կամ Վրաստանի Օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված է, որպես Թբիլիսիի ավագանու լիազորություն, չի կարելի փոխանցել այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, եթե Օրենքն անմիջականորեն չի նախատեսում նրա փոխանցման հնարավորություն:

ՀՈՂՎԱԾ 69. Թբիլիսիի ավագանու արտահերթ նիստի հրավիրումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի ավագանու արտահերթ նիստի հրավիրման կարգը սահմանվում է սույն Օրենքի 26-րդ հոդվածով (բացառությամբ նրա 2-րդ կետի «ե» ենթակետի), սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգի նախատեսմամբ:

2. Թբիլիսիի ավագանու արտահերթ նիստը հրավիրվում է Թբիլիսիում հաշվառված առնվազն 10 000 ընտրողի պահանջով:

ՀՈՂՎԱԾ 70. Թբիլիսիի ավագանու հանձնաժողովները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Թբիլիսիի ավագանիում սույն Օրենքով սահմանված կարգով ստեղծվում է ոչ ավելի, քան 11 հանձնաժողով:

ՀՈՂՎԱԾ 71. Թբիլիսիի ավագանու նախագահի տեղակալները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Թբիլիսիի ավագանու նախագահը կարող է ունենալ առաջին տեղակալ և տեղակալներ:

2. Թբիլիսիի ավագանու նախագահի բացակայության դեպքում ավագանու նախագահի պարտականությունը կատարում է առաջին տեղակալը կամ Թբիլիսիի ավագանու նախագահի հանձնարարությամբ՝ տեղակալներից մեկը:

ԳԼՈՒԽ IX

Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգը

ՀՈՂՎԱԾ 72. Թբիլիսիի քաղաքապետարանը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Թբիլիսիի քաղաքապետարանը (Թբիլիսիի քաղաքապետ, Թբիլիսիի կառավարություն, Թբիլիսիի քաղաքապետի կառուցվածքային միավորներ և Թբիլիսիի շրջանների վարչություններ) Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգ է, որը ապահովում է Թբիլիսիի գործադիր-ձանձարձրջլլջլլ գործունեություն:

2. Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնական անձինք են՝ Թբիլիսիի քաղաքապետը, Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալը (փոխքաղաքապետը) և տեղակալը, Թբիլիսիի քաղաքապետի կառուցվածքային միավորի ղեկավարը և Թբիլիսիի շրջանային վարչության նախագահը: Թբիլիսիի քաղաքապետարանի վրա չի տարածվում սույն Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված քաղաքապետարանի պաշտոնատար անձանց քանակային սահմանափակումը:

3. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում է Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով: Եթե սույն Օրենքը կամ Վրաստանի Օրենսդրությունը չի սահմանում կոնկրետ լիազորությունների կատարման համար պատասխանատու Թբիլիսիի գործադիր մարմին, լիազորությունների բաժանումը տեղի է ունենում Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգի համաձայն:

ՀՈՂՎԱԾ 73. Թբիլիսիի քաղաքապետը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Թբիլիսիի բարձրագույն գործադիր մարմինը՝ Թբիլիսիի քաղաքապետը, Թբիլիսիի կառավարության ղեկավարն է: Թբիլիսիի քաղաքապետն ընտրվում է ուղղակի ընտրություններով, 4 տարի ժամկետով: Թբիլիսիի քաղաքապետի ընտրության կարգը սահմանվում է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական Օրենքով:

2. Թբիլիսիի քաղաքապետը.

ա) ընդհանուր ղեկավարում և համակարգում է Թբիլիսիի քաղաքապետարանի գործունեությունը,

բ) ղեկավարում է Թբիլիսիի կառավարության գործունեությունը, բաժանում է գործառույթներն իր տեղակալներին,

գ) նախագահում է Թբիլիսիի կառավարության նիստերը,

դ) կազմում է և Թբիլիսիի ավագանուն ընդունելու ներկայացնում վարչա-իրավական ակտերի նախագծերը,

ե) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում Թբիլիսիի բյուջեի, բյուջեի մեջ կատարվելիք փոփոխությունների նախագծերը և բյուջեի կատարման հաշվետվությունը,

զ) ստորագրում է Թբիլիսիի կառավարության անհատական վարչա-իրավական ակտերը,

է) մունիցիպալիտետի լիազորությունների շրջանակներում ապահովում է համապատասխան սոցիալ-տնտեսական զարգացման և այլ ծրագրերի, ռազմավարությունների և պլանների՝ Թբիլիսիի ավագանուն հաստատման ներկայացնելը,

ը) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում մունիցիպալիտետի տարածքային-տերիտորիալ պլանավորման փաստաթղթերը,

թ) հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր,

ժ) ստորագրում է մունիցիպալիտետի և Թբիլիսիի կառավարության անունից կնքված պայմանագրերը և համաձայնագրերը, իրականացնում է գնումներ Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով, (30.07.2014 N 2589)

ժա) ներկայացնում է Թբիլիսին և Թբիլիսիի կառավարությունը, պաշտոնական հարաբերությունների ժամանակ գործում է դրանց անունից, կատարում է այլ ներկայացուցչական գործառույթներ, մունիցիպալիտետի անունից շնորհում է ներկայացուցչական լիազորություններ, այդ թվում լիազորություններ (վստահագրեր), բացառությամբ սույն Օրենքով նախատեսված դեպքերի,

ժբ) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում Թբիլիսիի քաղաքապետարանի և քաղաքապետարանի կառուցվածքային միավորների կանոնակարգերը, Թբիլիսիի շրջանային վարչության և շրջանային վարչության կառուցվածքային միավորների տիպիկ կանոնակարգերը, նաև Թբիլիսիի քաղաքապետարանի և Թբիլիսիի շրջանի շրջանային վարչության հաստիքացուցակները, (30.07.2014 N 2589)

ժգ) սույն Օրենքով սահմանված կարգով պաշտոնների է նշանակում Թբիլիսիի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց, պաշտոններից ազատում Թբիլիսիի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց, պաշտոնների նշանակում և պաշտոններից ազատում Թբիլիսիի քաղաքապետարանի այլ ծառայողների, բացառությամբ սույն Օրենքի 82-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքերի, (30.07.2014 N 2589)

ժդ) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում Թբիլիսիի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և ծառայողների պաշտոնական վարձատրությունների քանակությունները, (30.07.2014 N 2589)

ժե) բաժանում է Թբիլիսիի քաղաքապետարանի ծառայողների գործառույթները, առաջադրանքներ տալիս Թբիլիսիի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և լսում նրանց հաշվետվությունները կատարված աշխատանքի մասին,

ժզ) Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում է Թբիլիսիի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց լիազորությունների պատգամում,

բացառությամբ սույն կետի «ա», «բ» և «ժթ»–«իբ» ենթակետերով նախատեսված լիազորությունների, նաև այն լիազորությունների, որոնք սույն Օրենքի համաձայն թբիլիսիի ավագանու կողմից հաստատման կամ համաձայնություն տալու անհրաժեշտություն ունեն,

ժԵ) ընդունում է որոշումներ թբիլիսիի քաղաքապետարանի ծառայողների խրախուսման և նրանց հանդեպ կարգապահական պատասխանատվության կիրառելու մասին,

ժԶ) հաստատում է թբիլիսիի քաղաքապետարանի ներքին կարգապահական կանոնները և պաշտոնեական հրահանգները,

ժԹ) թբիլիսիի ավագանուն առնվազն տարին մեկ անգամ, թբիլիսիի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվություն թբիլիսիի կառավարության և նրա կողմից կատարված աշխատանքի մասին, նաև թբիլիսիի ավագանու անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով ավագանուն ներկայացնում է արտահերթ հաշվետվություն,

Ի) թբիլիսիի ավագանու նախագահին դիմում է ավագանու արտահերթ նիստի հրավիրման մասին առաջարկությամբ, ավագանու հերթական նիստին ներկայացնում է լրացուցիչ քննարկվելիք հարց, իրավագոր է ներկա գտնվել ավագանու և ավագանու հանձնաժողովների բաց և փակ նիստերին,

Իա) շնորհում է մունիցիպալիտետի պատվավոր կոչումներ և պարգևներ,

Իբ) իր լիազորությունների մեջ մտնող որոշակի հարցերի ուսումնասիրման համար ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ խորհուրդներ և աշխատանքային խմբեր,

Իգ) իրականացնում է սույն Օրենքով և թբիլիսիի ավագանու վարչա-իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

3. Թբիլիսիի քաղաքապետը պատասխանատու է և լիազորությունից հրաժարվում է թբիլիսիի ավագանու և բնակչության առջև:

4. Թբիլիսիի քաղաքապետին անվստահության հայտարարման, նրա պաշտոնեական անհամատեղելիության և լիազորությունների ընդհատման և դադարեցման հարցերը սահմանվում են սույն Օրենքի 51-րդ, 55-րդ և 56-րդ հոդվածների համաձայն:

ՀՈՂՎԱԾ 74. Թբիլիսիի կառավարությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հրքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) կոլեգիալ գործադիր մարմին է, որը Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում ապահովում է թբիլիսիի ավագանու որոշումների կատարում:

2. Կառավարությունը բաղկացած է թբիլիսիի քաղաքապետից, նրա առաջին տեղակալից (փոխքաղաքապետից) և տեղակալներից, թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորների ղեկավարներից (բացառությամբ թբիլիսիի քաղաքապետարանի համակարգի մեջ մտնող, հսկողություն և վերահսկողություն իրականացնող վերահսկողության կառուցվածքային միավորների ղեկավարների) և թբիլիսիի շրջանների վարչությունների նախագահներից:

3. Կառավարության նիստերը նախագահում է թբիլիսիի քաղաքապետը կամ թբիլիսիի քաղաքապետի հանձնարարությամբ՝ թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալը (փոխքաղաքապետը) կամ տեղակալներից մեկը:

4. Կառավարության նիստն իրավագոր է, եթե նրան ներկա է նրա անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն ընդունվում է կառավարության նիստին ներկա գտնվողների ձայների մեծամասնությամբ:

5. Կառավարության կառուցվածքը, լիազորությունը և գործունեության կարգը սահմանվում են սույն Օրենքով, Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով և կառավարության կանոնակարգով:

ՀՈՂՎԱԾ 75. Կառավարության լիազորությունները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Կառավարությունը.

ա) Կազմակերպչական գործունեության բնագավառում.

ա.ա) համակարգում է Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորների և Թբիլիսիի շրջանների վարչությունների գործունեությունը,

ա.բ) առաջադրանքներ է տալիս կառավարության անդամներին նրա լիազորություններին վերագրված հարցերի նախապատրաստման և վճռման նպատակով,

ա.գ) կազմում է և ավագանուն հաստատելու ներկայացնում կառավարության աշխատակարգի և նրանում կատարվելիք փոփոխությունների նախագծերը,

ա.դ) իր լիազորություններին վերագրված որոշակի հարցերի ուսումնասիրման համար, համապատասխան եզրակացությունների և հանձնարարականների նախապատրաստման համար ստեղծում է հանձնաժողովներ, խորհուրդներ և այլ խորհրդատվական մարմիններ:

բ) Թբիլիսիի ավագանու հետ փոխհարաբերության բնագավառում.

բ.ա) սույն Օրենքի համաձայն կազմում է և Թբիլիսիի ավագանուն ընդունելու ներկայացնում վարչա-իրավական ակտերի նախագծեր,

բ.բ) ապահովում է Թբիլիսիի ավագանու կողմից ընդունված վարչա-իրավական ակտերի կատարում:

գ) Ֆինանսա-բյուջետային բնագավառում.

գ.ա) կազմում է և քննարկում Թբիլիսիի բյուջեի նախագիծը, իր լիազորությունների շրջանակներում ապահովում է հաստատված բյուջեի կատարում, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է պատրաստում բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին, կազմում է բյուջեի կատարման հաշվետվություն և ապահովում է նրա հրապարակայնություն,

գ.բ) Վրաստանի Բյուջետային օրենսգրքի համաձայն, Թբիլիսիի ավագանու կողմից սահմանված կարգով, առանց Թբիլիսիի հաստատվելիք բյուջեում փոփոխությունների կատարման, որոշում է ընդունում ծախսող հաստատությունների բյուջետային դասակարգման հոդվածների և գաղտնագրերի միջև գումարների բաշխման մասին,

գ.գ) մունիցիպալիտետի անունից և Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ վարկ է վերցնում սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական ակտերով սահմանված կարգով,

գ.դ) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում Օրենքով սահմանված տեղական հարկերի և տուրքերի ներմուծման, դրանց փոփոխությունների և վերացման մասին որոշումների նախագծերը,

գ.ե) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում մունիցիպալիտետի կողմից տարվա ընթացքում իրականացվելիք գնումների պլանը:

դ) Մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման բնագավառում.

դ.ա) սույն Օրենքով և Թբիլիսիի ավագանու կողմից սահմանված կարգով որոշում է ընդունում մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման մասին,

դ.բ) Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ որոշումներ է ընդունում. մասնավոր իրավունքի

արտադրական և ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց հիմնադրման, վերակառուցման և լուծարման մասին, մասնավոր իրավունքի արտադրական և ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց հիմնադրմանը մասնակցելու և դրանցում անդամագրվելու, մոնիցինգայլիտետի բաժնեմասային մասնակցությամբ ստեղծված ձեռնարկության կապիտալում փոփոխության, արտադրական իրավաբանական անձի բաժնեմասի/բաժնետոմսերի ձեռքբերման մասին,

դ.գ) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում հանրային իրավունքի իրավաբանական անձանց հիմնադրման, վերակառուցման և լուծարման մասին առաջարկությունները, նաև հանրային իրավունքի իրավաբանական անձի կանոնադրությունը (կանոնակարգը),

դ.դ) սույն Օրենքով նախատեսված դեպքերում Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ որոշում է ընդունում մոնիցինգայլիտետի շարժական գույքի ուղղակի տնօրինման կարգով, հատուցմամբ կամ անհատույց օգտվելու իրավունքով, պայմանով կամ առանց պայմանի տրամադրման մասին,

դ.ե) Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ վճռում է անշարժ գույքի ուղղակի տնօրինման կարգով, հատուցմամբ կամ անհատույց օգտվելու իրավունքով, պայմանով կամ առանց պայմանի տրամադրման մասին,

դ.զ) Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ իրավագոր է վճռել մոնիցինգայլիտետի գույքը ձեռք բերողի/օգտվելու իրավունքով ստացողի/կառավարման իրավունքով ստացողի պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար նրա վրա դրված/դրվելիք կանխավճարից ազատվելու հարցը,

դ.է) Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ իրավագոր է վճռել սեփականաշնորհված կամ/և օգտվելու իրավունքով տրամադրված գույքը ստացողի կամ գույքի հետ կապված պայմանի (պայմանների) կատարման պարտավորությունից ազատելու հարցը, բացառությամբ ֆինանսական և ներդրումային պարտավորությունների կատարման հետ կապված պայմանների,

դ.ը) սույն Օրենքի համաձայն, Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ որոշում է ընդունում մոնիցինգայլիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարման մասին,

դ.թ) ապահովում է մոնիցինգայլիտետի գույքի խնամքը, կառուցումը, վերակառուցումը և վերականգնումը,

դ.ժ) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում մոնիցինգայլիտետի գույքի սեփականաշնորհման օբյեկտների ցանկը և սեփականաշնորհման պլանը,

դ.ժա) մշտադիտարկում է իրականացնում՝ կապված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց օգտագործման իրավունքով փոխանցված մոնիցինգայլիտետի գույքի օգտագործման և գույքից օգտվելու կանոնների պահպանման հետ,

դ.ժբ) մոնիցինգայլիտետի գույքի՝ պայմաններով աճուրդի ձևով տնօրինման դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից համապատասխան պայմանների կատարման մշտադիտարկում է իրականացնում:

ե) Գործադիր գործունեության այլ բնագավառներում.

ե.ա) մոնիցինգայլիտետի լիազորությունների շրջանակներում ապահովում է համապատասխան սոցիալ-տնտեսական զարգացման և այլ ծրագրերի, ռազմավարությունների և պլանների նախապատրաստում և իրականացում,

ե.բ) կազմում է մոնիցինգայլիտետի տարածական-տարածքային պլանավորման փաստաթղթերը,

ե.գ) Թբիլիսիի ավագանուն հաստատելու է ներկայացնում տեղական քաղաքային կանոնավոր

ուղևորափոխադրման թույլտվության տրամադրման արժեքը, թույլտվության տրամադրման համար մրցույթի անցկացման և թույլտվության տրամադրման արժեքի վճարման կանոնները,

ե.դ) կազմում է և Թբիլիսիի ավագանուն հաստատելու ներկայացնում Վրաստանի մայրաքաղաքի վարչական սահմաններում տեղական քաղաքային կանոնավոր ուղևորափոխադրման նպատակով ավտոբուսների (M_2 և M_3 կարգեր) շարժման երթուղիները,

ե.ե) կազմում է և Թբիլիսիի ավագանուն հաստատելու ներկայացնում Վրաստանի տարածքի շրջանակներում ներքին կանոնավոր ուղևորափոխադրման ժամանակ մայրաքաղաքի տարածք մտնող ավտոբուսների (M_2 և M_3 կարգերի) երթևեկության երթուղիները,

ե.զ) տրամադրում է տեղական քաղաքային կանոնավոր ուղևորափոխադրման թույլտվություն,

ե.է) կազմում է և Թբիլիսիի ավագանուն հաստատելու ներկայացնում շինարարության թույլտվության էլեկտրոնային ձևով տրամադրման և անհատական վարչա-իրավական ակտի ծանոթացման կանոնները,

ե.ը) իր լիազորությունների շրջանակներում հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր,

ե.թ) ապահովում է սույն Օրենքի 16-րդ, 17-րդ և 64-րդ հոդվածներով նախատեսված մոնիցիդային տեսի այլ լիազորությունների իրականացում Վրաստանի Օրենսդրությամբ և Թբիլիսիի ավագանու կողմից սահմանված կարգով,

ե.ժ) իրականացնում է Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով, կառավարության կանոնակարգով և Թբիլիսիի ավագանու վարչա-իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՈՂՎԱԾ 76. Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալը (փոխքաղաքապետը) և տեղակալները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Թբիլիսիի քաղաքապետն ունի առաջին տեղակալ (փոխքաղաքապետ) և տեղակալներ:

2. Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալին (փոխքաղաքապետին) և տեղակալներին Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ պաշտոնների է նշանակում Թբիլիսիի քաղաքապետը: Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի) և տեղակալների պաշտոններից ազատելու հարցը վճռում է Թբիլիսիի քաղաքապետը:

3. Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի) և տեղակալների պաշտոնների նշանակման մասին համաձայնությունը Թբիլիսիի ավագանին արտահայտում է ավագանու նիստին ներկաների մեծամասնության, սակայն առնվազն ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի աջակցությամբ: Թբիլիսիի ավագանու համաձայնությունը չստանալու դեպքում Թբիլիսիի քաղաքապետն իրավազոր է 10-օրյա ժամկետում ներկայացնել սույն կամ նոր թեկնածություն: Եթե Թբիլիսիի ավագանին կրկին չի արտահայտի համաձայնություն, Թբիլիսիի քաղաքապետն իրավազոր է ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով նշանակել Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի) և տեղակալների պաշտոնակատարների:

4. Եթե Թբիլիսիի ավագանին սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված ընթացակարգով համաձայնություն չի տվել Թբիլիսիի քաղաքապետին նրա առաջին տեղակալի (փոխքաղաքապետի)/ տեղակալի նշանակման համար, Թբիլիսիի քաղաքապետը պարտավոր է առաջիկա 3 ամսվա ժամկետում Թբիլիսիի ավագանուն ներկայացնել Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի)/ տեղակալի նոր թեկնածությունը: Այսպիսի դեպքում գործում է սույն հոդվածի

3-րդ կետով սահմանված կարգը: Թբիլիսիի ավագանու համաձայնությունը չստանալու դեպքում Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի)/տեղակալի պաշտոնակատար թույլ չի տրվում նշանակել այն անձին, որը սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն մեկ անգամ արդեն կատարել է Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի)/տեղակալի պարտականություն:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ընթացակարգերը շարունակվում են մինչև Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալի (փոխքաղաքապետի) և տեղակալների նշանակումը:

6. Թբիլիսիի քաղաքապետի տեղակալը գործառույթների բաշխմանը համապատասխան ղեկավարում է Թբիլիսիի գործադիր մարմինների լիազորություններին վերագրված ոլորտները, կազմակերպում է և վերահսկում Թբիլիսիի ավագանու, քաղաքապետարանի և կառավարության որոշումների կատարումը, իր լիազորությունների շրջանակներում հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր, կատարում է Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով և կառավարության կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

7. Թբիլիսիի քաղաքապետի տեղակալների պաշտոնեական անհամատեղելիության, նրանց լիազորությունների ընդհատման և դադարեցման հարցերը սահմանվում են սույն Օրենքի 58-րդ և 59-րդ հոդվածներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 77. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորները ստեղծվում են սույն Օրենքով սահմանված կարգով, Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով կամ նրանում համապատասխան փոփոխությամբ, Կառավարության լիազորություններին վերագրված ոլորտների կառավարման և Թբիլիսիի քաղաքապետարանի գործունեության ապահովման նպատակով:

2. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարին, Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ, պաշտոնի է նշանակում Թբիլիսիի քաղաքապետը: Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարին պաշտոնանակ անելու հարցը վճռում է Թբիլիսիի քաղաքապետը: Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը պատասխանատու է և լիազորությունից հրաժարվում է Թբիլիսիի քաղաքապետի առջև:

3. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարին պաշտոնի նշանակման, պաշտոնեական անհամատեղելիության, լիազորությունների ընդհատման և դադարեցման հարցերը սահմանվում են սույն Օրենքի 76-րդ, 58-րդ և 59-րդ հոդվածների համաձայն:

4. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարն իր լիազորությունների շրջանակներում հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր: Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի լիազորությունները և կառուցվածքային միավորի ղեկավարի լիազորությունները և կառուցվածքային միավորի ենթաբաժանումները սահմանվում են համապատասխանաբար Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով և կառուցվածքային միավորի կանոնակարգով և համապատասխան հաստիքացուցակով (30.07.2014 N 2589)

ՀՈՂՎԱԾ 78. Թբիլիսիի մարմինների ֆինանսական վերահսկումը և վերահսկողությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի մարմինների գործունեության ներքին աուդիտը (հաշվետուագումը) և տեսչավորումը իրականացվում է «Պետական ներքին ֆինանսական վերահսկման մասին» Վրաստանի Օրենքին և Թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգին համապատասխան:

2. Թբիլիսիի քաղաքապետարանի ներքին աուդիտի (հաշվետուգման) ծառայության ղեկավարին անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, ավագանու լիազորությունների ժամկետով ընտրում է Թբիլիսիի ավագանին: Նրա ընտրության կարգը սույն Օրենքի համաձայն սահմանվում է Թբիլիսիի ավագանու կանոնակարգով:

ՀՈՂՎԱԾ 79. Հանրային իրավունքի իրավաբանական անձի հիմնադրումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Թբիլիսիի ավագանու կողմից հիմնադրված հանրային իրավունքի իրավաբանական անձի ղեկավարին ավագանու համաձայնությամբ պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում կառավարությունը:

2. Թբիլիսիի ավագանու նորմատիվ վարչա-իրավական ակտով ստեղծված հանրային իրավունքի իրավաբանական անձը պետական իշխանությունից և տեղական ինքնակառավարման մարմիններից առանձին կազմակերպություն է, որը կառավարության վերահսկմամբ ինքնուրույն իրականացնում է սոցիալական, կրթական, մշակութային, տնտեսական կամ/և կառավարության կողմից սահմանված այլ գործունեություն:

3. Թբիլիսիի ավագանին իրավագոր է հիմնադրել հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ շինարարության թույլտվության հատկացման, քաղաքի քաղաքաշինական զարգացման հայեցակարգի մշակման և նրա տարածական-տերիտորիալ պլանավորման վերաբերյալ համապատասխան հետազոտության անցկացման և հանձնարարականների նախապատրաստման, գույքի սեփականաշնորհման և օգտվելու իրավունքով փոխանցման գործընթացի ապահովման կամ այլ նպատակով:

4. Թբիլիսիի ավագանին իրավագոր է իր կողմից հիմնադրված հանրային իրավունքի իրավաբանական անձի հանդեպ կառավարության առաջարկությամբ սահմանել հանրային իրավունքի իրավաբանական անձի կանոնադրությամբ (կանոնակարգով) սահմանված գործունեության, ծառայության կամ/և արագացված ծառայության, այդ թվում շինարարության թույլտվության արագացված կարգով հատկացման ծառայության արժեքի չափը:

5. Թբիլիսիի ավագանու կողմից հիմնադրված հանրային իրավունքի իրավաբանական անձն իրավագոր է իրականացնել համապատասխան Օրենքով և/կամ իր կանոնադրությամբ (կանոնակարգով) նախատեսված գործունեություն:

6. Կառավարությունն իրավագոր է Թբիլիսիի ավագանուն հաստատելու ներկայացնել հանրային իրավունքի իրավաբանական անձի կողմից էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով վարչական վարույթի իրականացման, վարչա-իրավական ակտի հրապարակման և ծանոթացման կարգը և պայմանները:

7. Թբիլիսիի ավագանին կառավարության ներկայացմամբ հանրային իրավունքի իրավաբանական անձ է հիմնադրում համապատասխան գույքի փոխանցմամբ: Հանրային իրավունքի իրավաբանական անձին գույքը փոխանցվում է ուղղակի տնօրինման կարգով, անհատույց, ժամկետով կամ անժամկետ օգտագործման իրավունքով:

8. Հանրային իրավունքի իրավաբանական անձն իրավագոր է իր սեփականության մեջ եղած գույքն անհատույց փոխանցել Թբիլիսիին:

9. Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ հանրային իրավունքի իրավաբանական անձն իրավագոր է իր սեփականության մեջ առկա գույքը օգտագործման փոխանցել սույն Օրենքի XV գլխով և Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Թբիլիսիի ավագանու կողմից հիմնադրված հանրային իրավունքի իրավաբանական անձի կառավարման կարգը սահմանվում է հանրային իրավունքի իրավաբանական անձի կանոնադրությամբ (կանոնակարգով):

11. Թբիլիսիի ավագանու կողմից հիմնադրված հանրային իրավունքի իրավաբանական անձի կողմից ընդունված որոշումը բողոքարկվում է դատարանում Օրենքով սահմանված կարգով:

12. Թբիլիսիի ավագանու կողմից հիմնադրված հանրային իրավունքի իրավաբանական անձի լուծարման դեպքում, դրա հետևանքով մնացած գույքն անցնում է Թբիլիսիի սեփականության մեջ:

ԳԼՈՒԽ X

Թբիլիսիի քաղաքապետարանի տարածքային մարմինը՝ Թբիլիսիի շրջանի շրջանային վարչությունը

ՀՈՂՎԱԾ 80. Թբիլիսիի շրջանի շրջանային վարչությունը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Թբիլիսիի վարչական միավորում՝ շրջանում, ստեղծվում է Թբիլիսիի քաղաքապետարանի տարածքային մարմին՝ Թբիլիսիի շրջանի շրջանային վարչություն (այսուհետ՝ շրջանային վարչություն):

2. Շրջանային վարչությունը բաղկացած է կառուցվածքային միավորներից: Շրջանային վարչության կառուցվածքը և լիազորությունը սահմանվում է շրջանային վարչության տիպիկ կանոնակարգով:

3. Շրջանային վարչության հաստիքացուցակը, պաշտոնեական աշխատավարձի չափը և տիպիկ կանոնակարգը Թբիլիսիի քաղաքապետի ներկայացմամբ հաստատում է Թբիլիսիի ավագանին:

4. Շրջանային վարչության ղեկավարը Թբիլիսիի շրջանային վարչության նախագահն է (այսուհետ՝ շրջանային վարչության նախագահ): Շրջանային վարչության նախագահին, Թբիլիսիի ավագանու համաձայնությամբ, պաշտոնի է նշանակում Թբիլիսիի քաղաքապետը: Շրջանային վարչության նախագահի պաշտոնանկ անելու հարցը վճռում է Թբիլիսիի քաղաքապետը:

5. Շրջանային վարչության նախագահին պաշտոնի նշանակելու, պաշտոնական անհամատեղելիության, լիազորությունների ընդհատման և դադարեցման հարցերը սահմանվում են սույն Օրենքի 76-րդ, 58-րդ և 59-րդ հոդվածների համաձայն:

ՀՈՂՎԱԾ 81. Շրջանային վարչության պաշտոնատար անձինք **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Շրջանային վարչության պաշտոնատար անձինք են.

ա) շրջանային վարչության նախագահը,

բ) շրջանային վարչության նախագահի տեղակալը,

գ) շրջանային վարչության կառուցվածքային միավորի ղեկավարը:

2. Շրջանային վարչության նախագահի տեղակալին և շրջանային վարչության կառուցվածքային միավորի ղեկավարին, «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում շրջանային վարչության նախագահը:

ՀՈՐԿԱԾ 82. Շրջանային վարչության նախագահը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Շրջանային վարչության նախագահը վարում է շրջանային վարչության գործունեությունը, ապահովում է շրջանի կառավարումը, համակարգում է թբիլիսիի քաղաքապետի և կառավարության որոշումների կատարումը:

2. Շրջանային վարչության նախագահն ի պաշտոնե մտնում է կառավարության կազմի մեջ:

3. Շրջանային վարչության նախագահը.

ա) բաշխում է շրջանային վարչության անդամների գործառույթները, նախագահում է շրջանային վարչության նիստերը,

բ) «Հանրային ծառայության մասին» Վրաստանի Օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնանակ անում շրջանային վարչության պաշտոնատար անձանց և շրջանային վարչության այլ ծառայողների,

գ) ապահովում է թբիլիսիի ավագանու կողմից ընդունված վարչա-իրավական ակտերի, ծրագրերի և նախագծերի իրականացումը,

դ) թբիլիսիի քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային միավորին է ներկայացնում բյուջետային հայտը,

ե) ստորագրում է շրջանային վարչության անունից կնքված պայմանագրերը և համաձայնագրերը, ներկայացնում է շրջանային վարչությունը և պաշտոնական հարաբերությունների ժամանակ գործում է նրա անունից, կատարում այլ ներկայացուցչական գործառույթներ, իրականացնում գնումներ Վրաստանի օրենսդրությանը և թբիլիսիի նորմատիվ ակտերին համապատասխան, (30.07.2014 N 2589)

զ) իր լիազորությունների շրջանակներում հրապարակում է անհատական վարչա-իրավական ակտեր,

է) մասնակցում է Վրաստանի մայրաքաղաքի գերակայությունների փաստաթղթերի և թբիլիսիի բյուջեի նախագծի մշակմանը,

ը) պատասխանատու է շրջանին թբիլիսիի բյուջեով նախատեսված հատկացումների համապատասխանաբար վճարումների իրականացման համար,

թ) տեղեկություններ է պատրաստում թբիլիսիի բյուջեով նախատեսված հատկացումների կատարման մասին և ներկայացնում է թբիլիսիի քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային միավորին,

ժ) իրականացնում է սույն Օրենքով և թբիլիսիի քաղաքապետարանի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

4. Շրջանային վարչության նախագահը պատասխանատու է և հրաժարվում է լիազորություններից թբիլիսիի քաղաքապետի առջև:

ՀՈՐԿԱԾ 83. Շրջանային վարչության նախագահի տեղակալները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի

Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Շրջանային վարչության նախագահը կարող է ունենալ ոչ ավելի, քան 3 տեղակալ:

2. Շրջանային վարչության նախագահի տեղակալները շրջանային վարչության նախագահի կողմից գործառույթների բաշխման համապատասխան ղեկավարում են շրջանային վարչության լիազորություններին վերապահված բնագավառները, պատրաստում են և շրջանային վարչության նախագահին ներկայացնում առաջարկություններ համապատասխան բնագավառներում իրականացվելիք միջոցառումների մասին, կազմակերպում են և վերահսկում շրջանային վարչության նախագահի որոշումների կատարումը:

3. Շրջանային վարչության նախագահի բացակայության դեպքում, կամ եթե շրջանային վարչության նախագահը ժամանակավոր չի կարող կատարել իր պարտականությունը, նրա հանձնարարությամբ շրջանային վարչության նախագահի պարտականությունը կատարում է շրջանային վարչության նախագահի տեղակալներից մեկը:

ՀՈՂՎԱԾ 84. Շրջանային վարչության կառուցվածքային միավորները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Շրջանային վարչության կառուցվածքային միավորները, ըստ համապատասխան ոլորտների, կատարում են Թբիլիսիի ավագանու, Թբիլիսիի քաղաքապետի, կառավարության և շրջանային վարչության նախագահի վարչա-իրավական ակտերը և իրենց լիազորությունների շրջանակներում ղեկավարում են բնակչության սպասարկման տարբեր բնագավառներ:

2. Շրջանային վարչության կառուցվածքային միավորի գործառույթները շրջանային վարչության կանոնակարգի համաձայն սահմանվում է համապատասխան կառուցվածքային միավորի տիպիկ կանոնակարգով, որը Թբիլիսիի քաղաքապետի ներկայացմամբ հաստատում է Թբիլիսիի ավագանին:

3. Շրջանային վարչության կառուցվածքային միավորի գործունեությունը ղեկավարում է կառուցվածքային միավորի ղեկավարը:

ԲԱԺԻՆ IV

Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը

ԳԼՈՒԽ XI

**Քաղաքացիների մասնակցությունը
տեղական ինքնակառավարման իրականացմանը**

ՀՈՂՎԱԾ 85. Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության ապահովումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության ապահովման համար մուկիցիպալիտետի մարմինները, նրանց կառուցվածքային միավորները և պաշտոնատար անձինք պարտավոր են ստեղծել կազմակերպչական և նյութա-տեխնիկական

պայմաններ քաղաքացիների ընդունելության, մուկիցիպալիտետի մարմինների նիստերին քաղաքացիների մասնակցության և որոշումների ընդունման գործընթացի թափանցիկության համար: Այստեղից ելնելով՝ մուկիցիպալիտետի մարմինները, Օրենքով սահմանված կարգով.

ա) Տեղական զանգվածային լրատվամիջոցներով կամ մուկիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հրապարակում են.

ա.ա) նախաձեռնված որոշումների նախագծերը,

ա.բ) նախաձեռնված որոշումների նախագծերի քննարկման ընթացակարգերը և ժամկետները,

ա.գ) մուկիցիպալիտետի ավագանու, նաև ավագանու հանձնաժողովի նիստերի օրակարգը, անցկացման տեղը և ամսաթիվ, ամիս, տարեթիվը,

ա.դ) ընդունված նորմատիվ, նաև այլ վարչա-իրավական ակտերը, դրանց բողոքարկման ժամկետները և ընթացակարգերը,

ա.ե) որոշումների կատարման վերահսկմանը քաղաքացիների մասնակցության ժամկետները և ընթացակարգերը,

բ) ապահովում են ընդունված նորմատիվ վարչա-իրավական ակտերի Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված մատչելիություն:

ՀՈՂՎԱԾ 86. Մուկիցիպալիտետի ավագանու որոշման նախագծի նախաձեռնում խնդիրքի կարգով (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մուկիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 1 տոկոսն իրավունք ունի պատրաստել և մուկիցիպալիտետի ավագանուն ներկայացնել նորմատիվ վարչա-իրավական ակտի նախագիծ:

2. Խնդիրքի կարգով հարցը պետք է ներկայացվի գրավոր, մուկիցիպալիտետի ավագանու որոշման նախագծի տեսքով, որը պետք է ստորագրի մուկիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 1 տոկոսը:

3. Խնդիրքի կարգով ներկայացված նախագծին պետք է կցված լինի համապատասխան որոշման ընդունման անհրաժեշտության հիմնավորումը, նախագծի հեղինակի (հեղինակների) և մուկիցիպալիտետի ավագանու նիստին նշանակված զեկուցողի ով լինելը և հասցեն:

4. Օրենքով սահմանված կարգով ներկայացված խնդիրքը գրանցում է մուկիցիպալիտետի ավագանու աշխատակազմը:

5. Մուկիցիպալիտետի ավագանին պարտավոր է խնդիրքի կարգով ներկայացված նախագիծը գրանցման պահից 1 ամսվա ժամկետում քննարկել ավագանու նիստին:

6. Մուկիցիպալիտետի ավագանու նիստին խնդիրքի կարգով ներկայացված նախագծի քննարկմանը, զեկուցողի կարգավիճակով, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է նախագծի նախաձեռնողների կողմից նշանակված զեկուցողը:

ՀՈՂՎԱԾ 87. Մուկիցիպալիտետի կոլեգիալ մարմինների նիստերի հրապարակայնությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մուկիցիպալիտետի ավագանու, մուկիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների և կառավարության նիստերը հրապարակային են, բացառությամբ Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

ՀՈՂՎԱԾ 88. Մունիցիպալիտետի պաշտոնական անձի և ավագանու անդամի հրապարակային հաշվետվությունների լուսմը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողն իրավունք ունի առանց սահմանափակման մասնակցել մունիցիպալիտետի պաշտոնատար անձի և ավագանու անդամի հրապարակային հաշվետվությունների քննարկմանը:

2. Մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը և ավագանու անդամը պարտավոր են, տարին առնվազն մեկ անգամ կազմակերպել հրապարակային հանդիպում ընտրողների հետ և նրանց ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքի մասին, նաև պատասխանել հաշվետվության քննարկման ժամանակ ընտրողների կողմից առաջադրված հարցերին:

ԲԱԺԻՆ V

Մունիցիպալիտետի բյուջեն և տնտեսական հիմունքները

ԳԼՈՒԽ XII

Մունիցիպալիտետի բյուջեն

ՀՈՂՎԱԾ 89. Մունիցիպալիտետի բյուջեն **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի բյուջեն համապատասխան մունիցիպալիտետի ավագանու կողմից հաստատված, մունիցիպալիտետի գործառույթների և պարտավորությունների կատարման նպատակով ստանալիք մուտքերի, կատարվելիք մուծումների և մնացորդի փոփոխությունների միասնականությունն է:

2. Մունիցիպալիտետի բյուջեի նախագծի նախապատրաստման, ներկայացման, քննարկման, հաստատման, բյուջեում փոփոխությունների կատարման, բյուջեի կատարման, հաշվետվողականության և վերահսկման կանոնները սահմանվում են սույն Օրենքով, Վրաստանի Բյուջետային օրենսգրքով և այլ նորմատիվ ակտերով:

ՀՈՂՎԱԾ 90. Մունիցիպալիտետի բյուջեի անկախությունը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի բյուջեն անկախ է ինչպես այլ մունիցիպալիտետի, այնպես էլ ինքնավար հանրապետության հանրապետական և Վրաստանի պետական բյուջեներից:

2. Մունիցիպալիտետի բյուջեի անկախությունը պայմանավորում են սեփական մուտքերը և սեփական լիազորությունների իրականացման համար մուծումների ինքնուրույն սահմանման լիազորությունը:

ՀՈՂՎԱԾ 91. Մունիցիպալիտետի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների**

պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի հաջորդ տարվա բյուջեի նախագիծը կցված նյութերի հետ ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 15-ը մունիցիպալիտետի վարչության նախագահը/ քաղաքապետը ներկայացնում է մունիցիպալիտետի ավագանուն սույն Օրենքին և Վրաստանի Բյուջետային օրենսգրքին համապատասխան:

2. Մունիցիպալիտետի ավագանին բյուջեի նախագիծը, նրա ներկայացումից հետո 5-օրյա ժամկետում հրապարակում է հանրային քննարկման համար:

3. Մունիցիպալիտետի ավագանին հրապարակավ քննարկում է բյուջեի նախագիծը և մինչև նոր բյուջետային տարվա սկիզբը, անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշում է ընդունում մունիցիպալիտետի բյուջեի նախագծի հաստատման մասին:

4. Դիտողությունների առկայության դեպքում մունիցիպալիտետի ավագանին ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 25-ը բյուջեի նախագիծը դիտողություններով վերադարձնում է մունիցիպալիտետի վարչության նախագահին/քաղաքապետին:

5. Բյուջեի նախագծի նույն կամ ուղղված տարբերակը ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 10-ը մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը ներկայացնում է մունիցիպալիտետի ավագանուն:

6. Մունիցիպալիտետի ավագանու կողմից քննարկման ժամանակ բյուջեի նախագծում փոփոխություններ կարող են կատարվել միայն մունիցիպալիտետի վարչության նախագահի/ քաղաքապետի հետ համաձայնեցմամբ:

7. Եթե մունիցիպալիտետի ավագանին չի հաստատել մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի կողմից ներկայացված բյուջեի նախագծի ուղղված տարբերակը կամ վարչության նախագահի/քաղաքապետի կողմից ավագանու դիտողություններին չհամաձայնելու դեպքում՝ բյուջեի նախագիծը, նախնական խմբագրմամբ, մունիցիպալիտետի ավագանին իրավագոր է իր անդամների ընդհանուր թվի երեք հինգերորդով հաստատել մունիցիպալիտետի ավագանու խմբակցության կամ մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից նախաձեռնված բյուջեի նախագիծը, որում պետք է նախատեսված լինեն միայն ավագանու կողմից սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, վարչության նախագահին/ քաղաքապետին ուղարկված դիտողությունները կամ դրանց մի մասը:

8. Մինչև պլանավորվելիք տարվա սկսվելը՝ մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը չհաստատելու դեպքում մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը իրավագոր է յուրաքանչյուր գերակայության համար ամեն ամիս հատկացնել գումար ոչ ավելի, քան անցած բյուջետային տարվա հատկացումների մեկ տասներկուերորդը: Նոր բյուջետային տարին սկսվելուց 3 ամսվա ընթացքում մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը չհաստատելու դեպքում Վրաստանի Կառավարությունը սույն Օրենքով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցնում է մունիցիպալիտետի ավագանու և վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունը:

9. Տարվա բյուջեն հրապարակվում է և մատչելի է հասարակությանը:

ՀՈԴՎԱԾ 92. Մունիցիպալիտետի բյուջեի մուտքերը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի բյուջեի մուտքերը հաշվետու ժամանակամիջոցում բյուջեում ստացած դրամական միջոցների միասնականությունն է.

ա) եկամուտները,

բ) ոչ ֆինանսական ակտիվները (ոչ ֆինանսական ակտիվներով իրականացված գործառնություններից ստացած միջոցները),

գ) ֆինանսական ակտիվները (ֆինանսական ակտիվներով իրականացված գործառնություններից ստացած միջոցները, բացի մնացորդի օգտագործումից),

դ) պարտավորությունները (պարտավորություններ ստանձնելու հետևանքով ստացած միջոցները):

2. Մունիցիպալիտետի բյուջեի մուտքերը պարունակում են սեփական և ոչ սեփական մուտքեր:

3. Մունիցիպալիտետն իր լիազորությունների շրջանակներում կարող է ինքնուրույն, սեփական հայեցողությամբ օգտագործել սեփական մուտքերը:

4. Մունիցիպալիտետի բյուջեի ոչ սեփական մուտքերին են պատկանում կապիտալ, հատուկ և նպատակային տրանսֆերները, վարկը և «Դրամաշնորհների մասին» Վրաստանի Օրենքին համապատասխան ստացած դրամաշնորհը:

5. Մունիցիպալիտետի բյուջեում եկամուտների վարչարարությունը տեղի է ունենում Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 93. Տեղական հարկերի և տուրքերի սահմանումը և վարչարարության կարգը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Տեղական հարկի չափը (դրույքը) Օրենքով սահմանված կարգով սահմանում է մունիցիպալիտետի ավագանին:

2. Տեղական տուրքի չափը (դրույքը) սահմանում է մունիցիպալիտետի ավագանին:

3. Տեղական հարկերի վարչարարությունն ապահովում են հարկային մարմինները: Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված այլ եկամուտների և ոչ ֆինանսական ակտիվներով իրականացված գործառնություններից ստանալիք միջոցների ստացումն ապահովում են համապատասխան ծառայությունները, եթե Վրաստանի Օրենսդրությամբ այլ բան չի սահմանված:

4. Արգելվում է մունիցիպալիտետի տարածքում գտնվող, մունիցիպալիտետի կառավարության մեջ առկա նախադարձական դաստիարակության հանրային հաստատությունում հարկ, սակագին կամ այլ վճար ներմուծել դաստիարակչական ծառայության և սննդային ծառայության համար:

ՀՈԴՎԱԾ 94. Մունիցիպալիտետի բյուջեի համար հատկացվելիք տրանսֆերի տեսակները (30.07.2014 N 2587)

Մունիցիպալիտետի բյուջեի համար հատկացվելիք տրանսֆերի տեսակներն են.

ա) համահարթեցման տրանսֆեր,

բ) կապիտալ տրանսֆեր,

գ) նպատակային տրանսֆեր,

դ) հատուկ տրանսֆեր:

ՀՈԴՎԱԾ 95. Համահարթեցման տրանսֆեր (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Համահարթեցման տրանսֆերը մունիցիպալիտետի բյուջեին Վրաստանի պետական

բյուջեից հատկացված գումարն է:

2. Համահարթեցման տրանսֆերի նպատակն է մուկիցիպալիտետների տարբեր ֆինանսական հնարավորությունների համահարթեցումը՝ նրանց տնտեսական ներուժի նախատեսամամբ:

3. Համահարթեցման տրանսֆերով ստացած եկամուտները մուկիցիպալիտետն օգտագործում է իր հայեցողությամբ, սեփական լիազորությունների իրականացման համար:

4. Վրաստանի պետական բյուջեից մուկիցիպալիտետներին բաշխվելիք համահարթեցման տրանսֆերի հաշվարկման կարգը, բանաձևը և համահարթեցման գործակիցները որոշվում են Վրաստանի Բյուջետային օրենսգրքով:

ՀՈՂՎԱԾ 96. Մուկիցիպալիտետի բյուջեին կապիտալ տրանսֆերի հատկացման կարգը (30.07.2014 N 2587)

1. Կապիտալ տրանսֆերը հատկացվում է մի բյուջեից այլ բյուջեի նպատակային կապիտալ նախագծի իրականացման համար, և այն կապված է տրանսֆերը ստացողի ոչ ֆինանսական ակտիվների աճի հետ:

2. Մուկիցիպալիտետի բյուջեին կապիտալ տրանսֆեր կարող է տրամադրվել Վրաստանի պետական բյուջեից, իսկ մուկիցիպալիտետին, որի վարչական տարածքը գտնվում է ինքնավար հանրապետության տարածքի շրջանակներում՝ նույն կերպ՝ համապատասխան ինքնավար հանրապետության բյուջեից:

3. Վրաստանի պետական բյուջեից/ինքնավար հանրապետության բյուջեից հատկացվելիք կապիտալ տրանսֆերի ընդհանուր ծավալը որոշվում է Վրաստանի /համապատասխան ինքնավար հանրապետության Օրենսդրությամբ:

4. Կապիտալ տրանսֆերի հատկացման հիմունքն է մուկիցիպալիտետի նախաձեռնությունը: Կապիտալ տրանսֆերի հատկացման պահանջով մուկիցիպալիտետը դիմում է Վրաստանի Կառավարությանը/համապատասխան ինքնավար հանրապետության կառավարությանը կամ Վրաստանի նախարարությանը /ինքնավար հանրապետության նախարարությանը: Դիմումի մեջ պետք է հիմնավորվի կապիտալ տրանսֆերի հատկացման անհրաժեշտությունը և պետք է նշվի կապիտալ տրանսֆերի ծավալը:

5. Կապիտալ տրանսֆերի հատկացման կարգը սահմանում է Վրաստանի Կառավարությունը:

ՀՈՂՎԱԾ 97. Նպատակային տրանսֆերը ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

1. Նպատակային տրանսֆերը փոխանցվում է մի բյուջեից այլ բյուջե՝ պատգամված լիազորությունների ֆինանսական ապահովման համար:

2. Նպատակային տրանսֆերը կարող է փոխանցվել.

ա) Վրաստանի պետական բյուջեից մուկիցիպալիտետի բյուջեին:

բ) ինքնավար հանրապետության բյուջեից համապատասխան մուկիցիպալիտետի բյուջեին:

ՀՈՂՎԱԾ 98. Մուկիցիպալիտետի բյուջեին հատուկ տրանսֆերի հատկացման կարգը (վերնագիր 30.07.2014 N 2587)

1. Մուկիցիպալիտետի բյուջեին հատուկ տրանսֆեր կարող է հատկացվել Վրաստանի պետական բյուջեից, իսկ մուկիցիպալիտետին, որի վարչական տարածքը գտնվում է

ինքնավար հանրապետության տարածքի շրջանակներում՝ նույն կերպ, համապատասխան ինքնավար հանրապետության բյուջեից: Հատուկ տրանսֆերը հատկացվում է տարերային աղետների, բնապահպանական և այլ կարգի աղետների, պատերազմական գործողությունների, համաճարակների և այլ արտակարգ իրավիճակների արդյունքների (վնասի) վերացման, նաև մոնիցիցիալիտետի կողմից այլ միջոցառումների իրականացման նպատակով: (30.07.2014 N 2587)

2. Հատուկ տրանսֆերը տրամադրվում է միայն այն դեպքում, եթե սույն հոդվածի առաջին կետով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար համապատասխան մոնիցիալիտետի բյուջեի պահուստային ֆոնդը բավական չէ:

ՀՈՂՎԱԾ 99. Մոնիցիալիտետի բյուջեի պահուստային ֆոնդը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մոնիցիալիտետի բյուջեում չնախատեսված մուծումների ֆինանսավորման համար ստեղծվում է պահուստային ֆոնդ, որի ծավալը չպետք է գերազանցի տարեկան բյուջեով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի 2 տոկոսը:

2. Մոնիցիալիտետի բյուջեի պահուստային ֆոնդից գումարը մոնիցիալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի որոշման հիման վրա, որը պարունակում է տեղեկություններ գումարի չափի և նպատակայնության մասին, հատկացնում է շրջանային վարչության/քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային միավորը:

ՀՈՂՎԱԾ 100. Մոնիցիալիտետի կողմից վարկ վերցնելը և դրամաշնորհ ստանալը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մոնիցիալիտետն իրավագոր է Վրաստանի Կառավարության թույլտվությամբ, իր լիազորությունների շրջանակներում և սեփական անունից, կապիտալ ներդրման իրականացման համար, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով վերցնել վարկ/վարկային պարտավորություն իրավաբանական անձից:

2. Մոնիցիալիտետի կողմից վերցված վարկի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի մոնիցիալիտետի անցած 3 բյուջետային տարիների սեփական եկամուտների միջին տարեկան չափի 10 տոկոսը: Թույլ չի տրվում մոնիցիալիտետի սեփականության մեջ առկա գույքն օգտագործել որպես պահանջի ապահովման միջոց:

3. Մոնիցիալիտետն իրավագոր է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանվածից ավելի ծավալով վերցնել վարկ միայն պետական իշխանության մարմնից և նրա կողմից վերահսկվող հանրային իրավունքի իրավաբանական անձից:

4. Վրաստանի Կառավարության թույլտվություն է անհրաժեշտ նաև մոնիցիալիտետի կողմից այլ անձի օգտին երաշխավոր լինելը կամ որևէ այլ երաշխիքի հատկացնելը:

5. Մոնիցիալիտետն իրավագոր է Վրաստանի Կառավարության համաձայնությամբ, սեփական լիազորությունների իրականացման համար, Օրենքով սահմանված կարգով ստանալ դրամաշնորհ: Դրամաշնորհ ստանալու թույլտվություն ստանալու համար Վրաստանի Կառավարությանը միջնորդությամբ դիմում է մոնիցիալիտետի գործադիր մարմինը:

6. Վրաստանի Կառավարության թույլտվությունը տրվում է Վրաստանի Կառավարության կարգադրությամբ:

7. Սույն հոդվածի առաջին, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված որոշումները մունիցիպալիտետի անունից և մունիցիպալիտետի ավագանու նախօրոք համաձայնությամբ, սույն հոդվածով սահմանված կարգով և պայմաններով, ընդունում է և համապատասխան պայմանագրով ձևակերպում մունիցիպալիտետի գործադիր մարմինը:

ՀՈՂՎԱԾ 101. Մունիցիպալիտետի բյուջեի մուծումները

1. Մունիցիպալիտետի բյուջեի մուծումները հաշվետու ժամանակամիջոցում բյուջեից հատկացվելիք դրամական միջոցների միասնականությունը. **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

ա) ծախսեր,

բ) ոչ ֆինանսական ակտիվներ (ոչ ֆինանսական ակտիվներով իրականացված գործառնությունների համար ուղղված միջոցներ),

գ) ֆինանսական ակտիվներ (ֆինանսական ակտիվներով իրականացված գործառնությունների համար ուղղված միջոցներ, բացի մնացորդի կուտակումից),

դ) պարտավորություններ (պարտավորությունների հիմնական մասի մարման համար ուղղված միջոցներ):

2. Մունիցիպալիտետը տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների ուսուցման-վերապատրաստման համար ուղղորդում է աշխատանքային վարձատրության համար նախատեսված բյուջետային հատկացումների ընդհանուր ծավալի առնվազն 1 տոկոսը: (Ուժի մեջ մտնի 2015 թվականի հունվարի 1-ից)

ՀՈՂՎԱԾ 102. Անկախություն մուծումների ուղղությունների սահմանման ժամանակ **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Մունիցիպալիտետն անկախ է սահմանում սույն Օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար ֆինանսավորվելիք մուծումների ուղղությունները:

ՀՈՂՎԱԾ 103. Եկամուտների փոխհատուցումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Վրաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինների, նաև Աբխազիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետությունների պետական իշխանության մարմինների կողմից այնպիսի որոշման ընդունումը, որն այս որոշումն ընդունելու տարվա ընթացքում ավելացնում է մունիցիպալիտետի բյուջեի մուծումների քանակությունը կամ նվազեցնում է նրա եկամուտները, պետք է փոխհատուցվի համապատասխանաբար Վրաստանի պետական կամ ինքնավար հանրապետության հանրապետական բյուջեից:

ԳԼՈՒԽ XIII

Մունիցիպալիտետի գույքը

ՀՈՂՎԱԾ 104. Գլխի կարգավորման ոլորտը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Սույն գլուխը սահմանում է մունիցիպալիտետի գույքի կատեգորիաները, դրանց ստեղծման կարգը և գույքային իրավունքները (բացառությամբ բնական ռեսուրսների, որոնցից օգտվելը և որոնց տիրելը և տնօրինելը կարգավորված է Վրաստանի Օրենսդրությամբ), նաև մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման և օգտվելու իրավունքով փոխանցման իրավական, տնտեսական, կազմակերպչական հիմունքները և հիմնական պայմանները:

2. Սույն գլխի գործողությունը չի տարածվում.

ա) գնումով ձեռք բերված ապրանքի/ծառայության վրա, եթե գնման նպատակը ձեռք բերված ապրանքի, ծառայության հետագա բաշխումը կամ այլ կերպ տնօրինումն է,

բ) «Պետական գնումների մասին» Վրաստանի Օրենքի 101 հոդվածի 3-րդ կետի «ե» ենթակետով նախատեսված դեպքերի վրա,

գ) մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա, Վրաստանի պետական իշխանությանը, Աբխազիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետություններին, մունիցիպալիտետի կամ հանրային իրավունքի իրավաբանական անձի օգտագործման փոխանցված շենք-շինությունների վերակառուցման, վերանորոգման, ապակառուցման կամ լուծարման հետևանքով ստացած պիտանի մասերի և նյութերի օտարման և այլ կերպ տնօրինման վրա, որը այս մարմինը կամ հանրային իրավունքի իրավաբանական անձն իրականացնում է տվյալ շենք-շինությունների վերակառուցման, վերանորոգման, ապակառուցման կամ լուծարման ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ մարելու համար,

3. Վրաստանի պետական իշխանությանը, Աբխազիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետություններին, մունիցիպալիտետի կամ հանրային իրավունքի իրավաբանական անձի օգտագործման փոխանցված շենք-շինությունների վերակառուցման, վերանորոգման, ապակառուցման կամ լուծարման հետևանքով ստացած պիտանի մասերի և նյութերի օտարումը կամ այլ կերպ տնօրինումը տվյալ շենք-շինությունների վերակառուցման, վերանորոգման, ապակառուցման կամ լուծարման ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ մարելու համար այս մարմինը կամ հանրային իրավունքի իրավաբանական անձն իրականացնում է Վրաստանի Կառավարության կողմից սահմանված կարգով և պայմաններով:

ՀՈՂՎԱԾ 105. Տերմինների բացատրություն **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Սույն Օրենքի նպատակների համար նրանում օգտագործված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

ա) Տնօրինում – Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհում, օգտվելու իրավունքով փոխանցում, կառավարման իրավունքով փոխանցում կամ պետության սեփականության մեջ անհատույց փոխանցում:

բ) Սեփականաշնորհում – Մունիցիպալիտետի գույքի փոխանցում ֆիզիկական կամ/և իրավաբանական անձի սեփականության մեջ, սույն Օրենքով սահմանված ձևով և կարգով:

գ) Օգտվելու իրավունքով փոխանցում – Մունիցիպալիտետի գույքի ֆիզիկական, հանրային

կամ/և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց օգտվելու իրավունքով փոխանցում՝ սույն Օրենքով սահմանված կարգով:

դ) Կառավարման իրավունքով փոխանցում – Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա բաժնետնասերի և բաժնեթղթերի ֆիզիկական կամ/և իրավաբանական անձի փոխանցում, սույն Օրենքով սահմանված կարգով:

ե) Տնօրինման մեկնարկային արժեք – Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման, օգտվելու իրավունքով փոխանցման կամ կառավարման իրավունքով փոխանցման մեկնարկային արժեքը:

զ) Տնօրինման արժեք – Մունիցիպալիտետի գույքից օգտվելու իրավունքի արժեք:

ՀՈՂՎԱԾ 106. Մունիցիպալիտետի գույքը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի գույքը Վրաստանի Օրենսդրության համաձայն մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա բոլոր իրերը և ոչ նյութական գույքային բարիքն է:

2. Մունիցիպալիտետի գույքին են պատկանում.

ա) մունիցիպալիտետին Օրենքով վերագրված գույքը,

բ) պետության կողմից մունիցիպալիտետի սեփականության մեջ փոխանցված գույքը,

գ) ինքնավար հանրապետության կողմից համապատասխան մունիցիպալիտետի սեփականության մեջ փոխանցված գույքը,

դ) մունիցիպալիտետի կողմից Վրաստանի օրենսդրության համաձայն ստեղծված, ձեռք բերված կամ գրանցված գույքը,

3. մունիցիպալիտետի գույքը բաժանվում է երկու կարգի՝ հիմնական (չօտարված) գույք և լրացուցիչ գույք:

4. Հիմնական (չօտարված) գույքը մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման հիմունքն է: Հիմնական գույքը կարելի է օգտագործել միայն մունիցիպալիտետի հանրային գործառնությունների կատարման և լիազորությունների իրականացման համար:

5. Լրացուցիչ գույքն այն գույքն է, որը հիմնական (չօտարված) գույքի մաս չէ և որը մունիցիպալիտետը կարող է օգտագործել Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պետության կողմից մունիցիպալիտետներին փոխանցվելիք հիմնական (չօտարված) գույքի տեսակների ցանկը Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության ներկայացմամբ հաստատում է Վրաստանի Կառավարությունը:

7. Մունիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարում թույլ չի տրվում, բացառությամբ սույն Օրենքի 121-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Լրացուցիչ գույքի օտարում թույլ է տրվում սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 107. Մունիցիպալիտետին սույն Օրենքով պատկանող գույքը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Սույն Օրենքով մունիցիպալիտետին պատկանող է մունիցիպալիտետի տարածքում առկա հետևյալ գույքը.

ա) տեղական նշանակության ճանապարհները և դրանց մասերը, փողոցները, ստորգետնյա և վերգետնյա անցումները, մայրերը, լուսակիրները, արտաքին լուսավորման սարքավորումները, հրապարակները, պուրակները, ճեմուղիները, շատրվանները, զբոսայգիները, կանաչ տնկիները և ափապաշտպան կառույցները,

բ) ոչ գյուղատնտեսական նշանակության հողը, բացառությամբ.

բ.ա) մասնավոր սեփականության մեջ առակա հողի,

բ.բ) պետական գույքին կցված և պետական բաժնեմասային մասնակցությամբ գոյություն ունեցած գույքին կցված հողերի,

բ.գ) հողի, որը ենթակա է սույն կետի «բ.բ» ենթակետով սահմանված գույքին (պետական գույքը և պետական բաժնեմասային մասնակցությամբ գոյություն ունեցած գույքը) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով կցման,

գ) Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա օբյեկտներին կցված, այդ թվում, սույն կետի «ա» ենթակետով սահմանված օբյեկտներին կցված հողը,

դ) տեղական նշանակության անտառային և ջրային պաշարները,

ե) գյուղատնտեսական նշանակության հողը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

2. Մունիցիպալիտետի սեփականություն չի համարվում հետևյալ գյուղատնտեսական նշանակության հողը.

ա) մասնավոր սեփականության մեջ եղած և որպես պետական սեփականություն գրանցված գյուղատնտեսական նշանակության հողը, այդ թվում արոտավայրերը,

բ) այն չգրանցված գյուղատնտեսական նշանակության հողը, որի համար սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով ներկայացված է որպես պետական սեփականություն գրանցման մասին դիմում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերի,

գ) մունիցիպալիտետի տարածքում առկա չգրանցված գյուղատնտեսական նշանակության հողը,

դ) ընտանի կենդանիների քշելու ուղիները,

ե) 500 մետր երկարությամբ սահմանային գոտում առկա գյուղատնտեսական նշանակության հողը,

զ) պետական արգելոցների, բնության հուշարձանների, ազգային պարկերի հողերը,

է) պետական նշանակության պատմության, մշակույթի, բնության և դավանանքային-կրոնական հուշարձաններին հատկացված հողերը,

ը) պետական անտառային ֆոնդի հողը,

թ) Վրաստանի պետական և ինքնավար հանրապետության բյուջեների բյուջետային ֆինասավորման մեջ գտնվող հաստատությունների և հանրային իրավունքի իրավաբանական անձանց ուզուֆրոուկտի ձևով, օգտագործման իրավունքով փոխանցված հողերը,

ժ) պետական ջրային ֆոնդի հողը:

3. Մունիցիպալիտետն իր տարածքում առկա չգրանցված գյուղատնտեսական նշանակության հողատարածքի հանդեպ սեփական իրավունք է ձեռք բերում համապատասխան գրանցող մարմին սահմանված կարգով դիմելու և գրանցվելու հիման վրա, ինչը պետությանը չի զրկում իրավունքից, որպես պետական սեփականություն գրանցել չգրանցված գյուղատնտեսական նշանակության հողատարածքը:

4. Միևնույն հողատարածքի գրանցման վերաբերյալ դիմումով համապատասխան գրանցող մարմինն պետության և մունիցիպալիտետի կողմից միաժամանակ դիմելու դեպքում կբավարարվի ավելի վաղ գրանցված դիմումը, իսկ միևնույն օրը դիմելու դեպքում՝ մունիցիպալիտետի դիմումը:

ՀՈՂՎԱԾ 108. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գույքը պետության սեփականության մեջ անհատույց փոխանցելը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գույքը, այդ թվում, ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը, գյուղատնտեսական նշանակության հողատարածքը (շենք-շինություններով և առանց դրանց), նաև բաժնեմասերը/բաժնետոմսերը (բացառությամբ մունիցիպալիտետի սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ հիմնական (չօտարված) գույքի) պետության սեփականության մեջ անհատույց փոխանցվում է «Պետական գույքի մասին» Վրաստանի օրենքով սահմանված, գույքը կառավարողի հիմնավորված դիմումի հիման վրա, մունիցիպալիտետի ավագանու որոշմամբ:

2. Մունիցիպալիտետի ավագանին ներկայացված պահանջի շուրջ ընդունում է հիմնավորված դրական կամ բացասական որոշում: Պատասխանը գրավոր տեղեկացվում է պահանջը ներկայացնողին, այն ներկայացնելու պահից ոչ ուշ, քան 45 օրում: Եթե իրավագոր մարմինը 45-օրյա ժամկետում չի ընդունում որոշումը, գույքը կառավարողի կողմից պահանջված գույքը կհամարվի նրա սեփականության մեջ փոխանցված գույք և կգրանցվի որպես պետական սեփականություն:

ՀՈՂՎԱԾ 109. Մունիցիպալիտետի գույքի սեփականության իրավունքը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետը գույքի սեփականության իրավունքի իրականացման ժամանակ անկախ է:

2. Մունիցիպալիտետի մարմինները գույքային իրավունքների իրականացման ժամանակ պարտավոր են պահպանել մունիցիպալիտետի, որպես սեփականատիրոջ օրինական շահերը:

ՀՈՂՎԱԾ 110. Մունիցիպալիտետի կողմից գույքային իրավունքների իրականացման հիմնական սկզբունքները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի մարմինները գույքային իրավունքներն իրականացնում են մունիցիպալիտետի անունից:

2. Մունիցիպալիտետի գույքը կարող է գտնվել ինչպես մունիցիպալիտետի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

3. Մունիցիպալիտետի մարմինները մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գույքի գույքային իրավունքներն իրականացնում են, բնակչության շահերի նախատեսմամբ, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XIV

Մունիցիպալիտետի գույքի ստեղծումը

ՀՈՂՎԱԾ 111. Մունիցիպալիտետի գույքի ստեղծման աղբյուրները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Մունիցիպալիտետի գույքը ստեղծվում է.

- ա) պետական սեփականության մեջ առկա գույքի փոխանցմամբ,
- բ) սեփական բյուջեից տրամադրված միջոցներով,
- գ) այն գործարքների հետևանքով, որոնք Վրաստանի Օրենսդրությունը կապում է քաղաքացիական-իրավական արդյունքների ծագման հետ,
- դ) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով գույքի ստեղծմամբ կամ ձեռքբերմամբ:

ՀՈՂՎԱԾ 112. Պետական սեփականության մեջ առկա գույքի փոխանցում մունիցիպալիտետի սեփականության մեջ **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Մունիցիպալիտետի կողմից սույն Օրենքով սահմանված սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ գույքը պետությունն անհատույց սեփականության մեջ է փոխանցում մունիցիպալիտետին սույն Օրենքի 113-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 113. Պետական սեփականության մեջ առկա գույքի՝ մունիցիպալիտետի սեփականության մեջ անհատույց փոխանցումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Պետական սեփականության մեջ առկա գույքը մունիցիպալիտետի սեփականության մեջ է փոխանցում գույքը կառավարողը, մունիցիպալիտետի վարչության նախագահի/քաղաքապետի հիմնավորված պահանջի հիման վրա:

2. Գույքը կառավարողը սույն հոդվածի առաջին կետում նշված մարմնի կողմից ներկայացված պահանջի վերաբերյալ ընդունում է հիմնավորված որոշում և պատասխանը հայտնում է գրավոր պահանջը ներկայացնողին, դրա ներկայացման պահից 45-օրյա ժամկետում: Հիմնական (չօտարված) անշարժ գույքի փոխանցման մասին գույքի կառավարչի որոշումը ընդունելու պահից 10-օրյա ժամկետում հաստատման է փոխանցվում Վրաստանի Կառավարությանը: Եթե Վրաստանի Կառավարությունը 45-օրյա ժամկետում չի ընդունում որոշումը, պահանջված գույքը պահանջը ներկայացնողի սեփականության մեջ փոխանցված գույք կհամարվի:

3. Եթե գույքն օգտագործում են մեկից ավելի մունիցիպալիտետներ, այն սեփականության մեջ է փոխանցվում այն մունիցիպալիտետին, որի տարածքում գտնվում է տվյալ գույքը: Այսպիսի գույքի օգտագործման և խնամքի կանոնները սահմանվում են պայմանագրով, որը ստորագրում են այն մունիցիպալիտետները, որոնք օգտագործում են տվյալ գույքը:

ՀՈՂՎԱԾ 114. Պետության կողմից մունիցիպալիտետի սեփականության մեջ փոխանցված գույքի գրանցումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Պետության կողմից մունիցիպալիտետի սեփականության մեջ փոխանցված գույքը գրանցվում է Հանրային ռեեստրում գույքը կառավարողի անհատական վարչա-իրավական ակտի հիման վրա, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով, սույն Օրենքի 113-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերն ավարտվելու պահից 60-օրյա ժամկետում:

2. Հանրային ռեեստրում գրանցված գույքի գրանցման տվյալները, գրանցման տվյալների փոփոխությունները և ուղղումները հանրային են և հրապարակվում են Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XV

Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհումը և օգտագործման իրավունքով փոխանցումը

ՀՈՐԿԱԾ 115. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման և օգտվելու իրավունքով փոխանցման կարգավորումը ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման, օգտագործման և կառավարման իրավունքներով փոխանցման կանոնները, գույքի սեփականաշնորհման ժամանակ սեփականաշնորհման մեկնարկային գնի, գույքի օգտվելու իրավունքով փոխանցման ժամանակ վարձավճարի և վարձի մեկնարկային արժեքի սահմանման, նաև վճարման կանոնները սույն Օրենքի համաձայն հաստատում է Վրաստանի Կառավարությունը:

ՀՈՐԿԱԾ 116. Մունիցիպալիտետի ներկայացուցիչը գույքի տնօրինման ժամանակ ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման, կառավարման կամ օգտվելու իրավունքով փոխանցման կամ այլ կերպ տնօրինման ժամանակ մունիցիպալիտետը կարող է գործել իր ներկայացուցչի (լիազորի) միջոցով:

ՀՈՐԿԱԾ 117. Մունիցիպալիտետի գույքը ձեռքբերողը ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

1. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման ժամանակ (բացառությամբ մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գյուղատնտեսական նշանակության հողատարածքի սեփականաշնորհման) գույքը ձեռքբերողը կարող է լինել ֆիզիկական անձ կամ մասնավոր իրավունքի իրավաբանական անձ կամ այնպիսի անձանց միավորում, որի գույքի մեջ մունիցիպալիտետի կամ Վրաստանի պետական իշխանության մարմնի մասնակցության բաժինը 25 տոկոսից պակաս է:

2. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ձեռքբերող կարող է լինել Օրենքով սահմանված անձը:

ՀՈՐԿԱԾ 118. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման ձևերը ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես***

հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհումն իրականացվում է հանրային կամ էլեկտրոնային աճուրդի ձևով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի:

2. Ապահովագրման դեպք առաջանալիս՝ ապահովագրման պայմանագրով նախատեսված դեպքում մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գույքից օգտվողը շարժական գույքը ապահովագրողի սեփականության մեջ է փոխանցում նրա կողմից այս իրի արժեքի փոխհատուցման կամ վնասված իրի դիմաց նման, չվնասված իրի փոխանցմամբ, ապահովագրման պայմանագրով սահմանված պայմաններով:

ՀՈՐԿԱԾ 119. Աճուրդի հայտարարումը և կազմակերպումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Հանրային աճուրդի ձևով մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման մասին տեղեկությունը հրապարակվում է աճուրդ անցկացնող սուբյեկտի՝ աուկցիոնատորի, կայք-էջում և տեղական կամ այլ տպագիր տեղեկատվական մամուլում՝ կամ/և www.eauction.ge կայք-էջում:

2. Մունիցիպալիտետի գույքի տնօրինումը կարող է իրականացվել՝ էլեկտրոնային աճուրդի ձևով: Էլեկտրոնային աճուրդի ձևով գույքի սեփականաշնորհման դեպքում տեղեկատվությունը հրապարակվում է աճուրդ անցկացնողի կայք էջում կամ www.eauction.ge. կայք-էջում:

3. Աճուրդի ձևով մունիցիպալիտետի գույքի տնօրինման նպատակն է սեփականության/օգտագործման իրավունքի շնորհումը աճուրդի մասնակից այն անձին, որը առևտրի գործընթացում մունիցիպալիտետի գույքը տնօրինող սուբյեկտին ամենից բարձր գին կառաջարկի, իսկ եթե աճուրդը պայմաններով հայտարարվի՝ սեփականության օգտագործման իրավունքի շնորհում աճուրդի մասնակից այն անձին, որը կստանձնի հայտարարված պայմանները բավարարելու պարտավորություն, և առևտրի գործընթացում՝ մունիցիպալիտետի գույքը տնօրինող սուբյեկտին ամենաբարձր գինը կառաջարկի:

4. Աճուրդին մասնակցություն ունենալով՝ շահագրգիռ անձը ներկայացնում է իրավագոր մարմնի կողմից նախօրոք սահմանված քանակության անվերապահ և անվերադարձ բանկային երաշխիք կամ վճարում՝ կանխավճար: Կանխավճարի վճարմանն է հավասարվում շահագրգիռ անձի բանկային հաշվեհամարին եղած գումարի սառեցումը, որն աճուրդ անցկացնողի հաշվեհամարին կփոխանցվի՝ աճուրդի մասնակցի՝ աճուրդում հաղթելուն պես կամ սույն Օրենքով սահմանված աճուրդի կանոնների և պայմանների խախտման դեպքում:

5. Աճուրդում մասնակցել ցանկացողը աճուրդ անցկացնողին հայտ է ներկայացնում: Հայտի ներկայացմամբ հայտատուն հավաստում է, որ ծանոթացել է և համաձայն է աճուրդի կանոններին և պայմաններին: Հայտի մեջ նշվում են տեղեկություններ՝ աճուրդի մասնակցի մասին, մունիցիպալիտետի գույքի անվանումը, լոտի համարը, գինը և այլ տեղեկություններ:

6. Աճուրդի արդյունքները չեղյալ են համարվում, եթե աճուրդում հաղթողը.

ա) սույն Օրենքով սահմանված ժամկետում չի վճարել արժեքը,

բ) հրաժարվել է առք ու վաճառքի պայմանագիր կնքելուց:

7. Սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում աճուրդում հաղթողի կողմից ներկայացված անվերապահ և անվերադարձ բանկային երաշխիքի գումարը ամբողջությամբ փոխանցվում է համապատասխան հաշվեհամարին, իսկ վճարած կանխավճարի գումարը չի վերադարձվում՝ աճուրդի մասնակցին:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքից բացի, անվերապահ և անվերադարձ բանկային երաշխիքի/կանխավճարի գումարը նույնպես լրիվ փոխանցվում է համապատասխան բյուջե, եթե աճուրդի մասնակիցը խախտել է նորմատիվ ակտով սահմանված աճուրդի կանոնը կամ/և պայմանները:

9. Եթե իրավագոր մարմինը չեղյալ է համարել գույքի տնօրինման վերաբերյալ ընդունված որոշումը, վճարված կանխավճարի գումարը վերադարձվում է աճուրդի մասնակցին:

10. Եթե տեղի չի ունենա աճուրդի ձևով հանված մուկիցիպալիտետի գույքի տնօրինում, այս գույքի՝ փոփոխված սկզբնական արժեքով կամ/և պայմաններով, աճուրդի ձևով տնօրինման մասին որոշումը կհամարվի որպես կրկնական աճուրդ: Կրկնական աճուրդին գույքի սկզբնական արժեքը կարող է մինչև 50 տոկոս նվազել, իսկ եթե գույքն այս արժեքով աճուրդի հանելուց հետո ևս չվաճառվի, արժեքը կրկին կարող է նվազել:

11. Եթե տեղի չունենա աճուրդի ձևով հանված մուկիցիպալիտետի գույքի տնօրինում, գույքը տնօրինող սուբյեկտն իրավագոր է ընդունել որոշում այս գույքի նույն պայմաններով, ժամկետը երկարաձգված աճուրդի ձևով տնօրինման մասին:

ՀՈՐԿԱԾ 120. Մուկիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման մասին գործարքի ձևակերպումը և գործարքի չեղյալությունը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մուկիցիպալիտետի գույքի աճուրդի ձևով սեփականաշնորհման ժամանակ աճուրդում հաղթանակը հավաստող արձանագրությունը աճուրդում հաղթելու վարչական մարմնի խոստումն է:

2. Աճուրդում հաղթանակը հավաստող արձանագրությունն ընդգրկում է մուկիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման հիմնական պայմանները և կողմերի իրավունքները և պարտականությունները: Այս արձանագրության հիման վրա ձևակերպվում է առջ ու վաճառքի պայմանագիր:

3. Մուկիցիպալիտետի ձեռքբերված գույքի լրիվ արժեքի վճարումից կամ/և աճուրդի պայմանների կատարումից հետո գույքը գնողին տրվում է սեփականությունը հավաստող վկայական:

4. Մուկիցիպալիտետի սեփականաշնորհված գույքի հետ կապված վիճելի հարցի հայցային վաղեմության ժամկետը 3 տարի է:

ՀՈՐԿԱԾ 121. Մուկիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարման կարգը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մուկիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարումը հնարավոր է մուկիցիպալիտետի ավագանու համաձայնությամբ, միայն այն դեպքում, եթե այս գույքը կորցրել է իր գործառական նշանակումը:

2. Մուկիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը մուկիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարման վերաբերյալ հիմնավորված առաջարկությունը, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ, ներկայացնում է համապատասխան ավագանուն:

3. Մուկիցիպալիտետի ավագանին մուկիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարման վերաբերյալ մուկիցիպալիտետի վարչության նախագահին/ քաղաքապետին համաձայնություն տալու մասին կարգադրությունն ընդունում է իր անդամների ընդհանուր

թվի առնվազն երկու երրորդով:

ՀՈՂՎԱԾ 122. Մունիցիպալիտետի գույքի՝ օգտվելու իրավունքով փոխանցման ձևերը և կարգը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի գույքի՝ օգտվելու իրավունքով փոխանցման ժամանակ հնարավոր է Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հետևյալ ձևերի օգտագործում.

ա) հողատարածքի փոխանցում՝ ժամկետային օգտագործման՝ նրա վրա կամ տակ շինարարության թույլտվությամբ,

բ) ուզուրֆրոկտ,

գ) վարձով վերցնելը,

դ) վարձակալություն,

ե) փոխառություն,

զ) Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված օգտագործման այլ ձևեր:

2. Մունիցիպալիտետի գույքի՝ օգտվելու իրավունքով փոխանցման մասին պայմանագիրը կնքվում է մունիցիպալիտետի գործադիր մարմնի և շահագրգիռ անձի միջև:

3. Մունիցիպալիտետի գործադիր մարմնի որոշումը (անհատական վարչա-իրավական ակտը) մունիցիպալիտետի գույքի՝ օգտվելու իրավունքով փոխանցման մասին հավասարվում է սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանագրին, շահագրգիռ անձի կողմից նրան ծանոթացման պես:

4. Մունիցիպալիտետի գույքի՝ օգտագործման իրավունքով փոխանցումը տեղի է ունենում աճուրդի ձևով կամ ուղղակի տնօրինման կարգով: Մունիցիպալիտետի գույքի՝ օգտվելու իրավունքով փոխանցման մասին որոշումը մունիցիպալիտետի գործադիր մարմնին ընդունում է մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի համաձայնությամբ:

5. Ուղղակի տնօրինման կարգով մունիցիպալիտետի գույքի՝ օգտագործման իրավունքով փոխանցում կարելի է հատուցմամբ կամ անհատույց, պայմաններով կամ առանց պայմանների: Մունիցիպալիտետի գույքի՝ օգտագործման իրավունքով անհատույց փոխանցում թույլ է տրվում ոչ ավելի, քան 2 տարի ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքի:

6. Մունիցիպալիտետի գործադիր մարմնը ներկայացուցչական մարմնի համաձայնությամբ իրավագոր է մունիցիպալիտետի գույքը անհատույց ժամկետային օգտագործման, անհատույց ուզուրֆրոկտի և փոխառության ձևերով, առանց աճուրդի փոխանցել պետական և ինքնավար հանրապետության մարմիններին, այլ մունիցիպալիտետների, հանրային իրավունքի իրավաբանական անձանց (բացառությամբ քաղաքական կուսակցությունների), մունիցիպալիտետի կողմից հիմնադրված ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց և մունիցիպալիտետի 100-տոկոսանոց բաժնետոմսային մասնակցությամբ գործող ձեռնարկություններին:

ՀՈՂՎԱԾ 123. Մունիցիպալիտետին պատգամված լիազորությունների իրականացման համար գույքի օգտագործման իրավունքով փոխանցումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Պետությունը մոնիցիպալիտետին օգտագործման է փոխանցում այն գույքը, որն անհրաժեշտ է նրան պատգամված լիազորությունների իրականացման համար: Օգտագործման իրավունքով փոխանցվելիք համապատասխան գույքի սահմանումը և օգտագործման իրավունքի շնորհումը տեղի է ունեւում սույն Օրենքի և պատգամված լիազորություններ մասին պայմանագրի համաձայն:

2. Մոնիցիպալիտետին պատգամված լիազորությունների իրականացման համար փոխանցված գույքը մնում է պետական սեփականության մեջ:

3. Մոնիցիպալիտետին փոխանցված գույքի օգտագործման պայմանները սահմանվում են գույքի՝ օգտվելու իրավունքով փոխանցման մասին պայմանագրով:

ՀՈՂՎԱԾ 124. Մոնիցիպալիտետի սեփականության մեջ առկա ոչ նյութական գույքային բարիքը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մոնիցիպալիտետի սեփականության մեջ առկա ոչ նյութական գույքային բարիքին են պատկանում բաժնեմասերը և բաժնետոմսերը՝ նաև բոլոր պահանջները և իրավունքները, որոնք կարող է փոխանցել այլ անձի կամ նպատակաուղղված է նրա համար, որ դրանց սեփականատերը ստանա նյութական օգուտ՝ կամ/և նրան շնորհվի այլ անձանցից որևէ բան պահանջելու իրավունք:

2. Մոնիցիպալիտետն իրավագոր է սեփական գույքի բազայի վրա, «Արտադրողների մասին» Վրաստանի Օրենքի համաձայն հիմնադրել բաժնետիրական ընկերություն և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, նաև հիմնադրել ոչ արտադրական (ոչ առևտրային) իրավաբանական անձ:

ՀՈՂՎԱԾ 125. Բաժնեմասերի և բաժնեթղթերի տնօրինման ձևերը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Բաժնեմասերի և բաժնեթղթերի տնօրինման ձևերն են.

ա) բաժնեմասերի և բաժնեթղթերի սեփականաշնորհումը,

բ) բաժնեմասերի և բաժնեթղթերի կառավարման իրավունքով փոխանցումը:

ՀՈՂՎԱԾ 126. Բաժնեմասերի և բաժնեթղթերի աճուրդի տեսակները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Բաժնեմասերի և բաժնեթղթերի աճուրդը 2 տեսակի է՝ պայմաններով և առանց պայմանների:

ՀՈՂՎԱԾ 127. Բաժնեմասերի և բաժնեթղթերի կառավարման իրավունքով փոխանցումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Բաժնեմասերի և բաժնեթղթերի կառավարման իրավունքով փոխանցումը տեղի է ունեւում աճուրդի ձևով:

2. Մոնիցիպալիտետի բաժնեմասային մասնակցությամբ գործող ձեռնարկության գործընկերոջ/բաժնետիրոջ լիազորությունն իրականացնում է մոնիցիպալիտետի գործադիր մարմինը, որը մոնիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի համաձայնությամբ ընդունում է

որոշում պետական բաժնեմասային մասնակցությամբ ստեղծված ձեռնարկության կապիտալում մոնիցիպալիտետի գույքի, այդ թվում, բաժնեմասերի և բաժնեթղթերի, նաև դրամական ներդրումների իրականացման մասին:

ՀՈԴՎԱԾ 128. Մոնիցիպալիտետի գույքի տնօրինման հետևանքով մտից գումարները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Մոնիցիպալիտետի գույքի տնօրինման հետևանքով մտից գումարները իրավագոր մարմինն ամբողջությամբ ուղղում է համապատասխան մոնիցիպալիտետի բյուջե:

ԲԱԺԻՆ VI

Մոնիցիպալիտետի մարմինների գործունեության պետական վերահսկողությունը և աուդիտը (հաշվետուգումը): Ուղղակի պետական կառավարում

ԳԼՈՒԽ XVI

Մոնիցիպալիտետի մարմինների գործունեության պետական վերահսկողությունը

ՀՈԴՎԱԾ 129. Պետական վերահսկողության հասկացությունը և տեսակները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Պետական վերահսկողությունը գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացված գործունեություն է, որի նպատակն է մոնիցիպալիտետի մարմինների գործունեության օրինականության և պատգամված լիազորությունների պատշաճ իրականացման ապահովում:

2. Պետական վերահսկողության տեսակներն են՝ իրավական վերահսկողություն և ոլորտային վերահսկողություն:

3. Իրավական վերահսկողությունն իրականացվում է մոնիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչա-իրավական ակտերի՝ Վրաստանի Օրենսդրությանը համապատասխանության ապահովման համար:

4. Ոլորտային վերահսկողությունն ապահովում է մոնիցիպալիտետի կողմից իրեն պատգամված լիազորությունների օրինական և պատշաճ իրականացում:

ՀՈԴՎԱԾ 130. Իրավական վերահսկողության և ոլորտային վերահսկողության մարմինները (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մոնիցիպալիտետի մարմինների գործունեության իրավական վերահսկողությունն իրականացնում է Վրաստանի վարչապետը:

2. Մոնիցիպալիտետի կողմից իրեն պատգամված լիազորությունների իրականացման ոլորտային վերահսկողության մարմինը համապատասխան նախարարությունն է, որի լիազորությունների պատգամումն իրականացվել է Օրենքին համապատասխան և Վրաստանի Օրենսդրության հիման վրա կնքված պայմանագրի համաձայն:

3. Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում մոնիցիպալիտետի մարմինների

գործունեության պետական վերահսկողության մարմինը սահմանվում է Վրաստանի Կառավարության որոշմամբ:

ՀՈԴՎԱԾ 131. Պետական վերահսկողության իրականացման կարգը և սկզբունքը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Պետական վերահսկողությունն իրականացվում է Վրաստանի Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայով» և սույն Օրենքով սահմանված կարգով և դրա շրջանակներում: Թույլ չի տրվում Վրաստանի այլ նորմատիվ ակտերով պետական վերահսկողության իրականացման տարբերվող կարգ և շրջանակներ սահմանել:

2. Պետական վերահսկողությունն իրականացվում է համամասնության սկզբունքի պահպանմամբ:

3. Համամասնության սկզբունքի խախտումով իրականացված պետական վերահսկողության միջոցառման կիրառման հետևանքով մոնիցինգայլիտետին հասցված վնասը հատուցվում է Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 132. Իրավական վերահսկողություն (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Իրավական վերահսկողությունն իրականացվում է մոնիցինգայլիտետի ավագանու կողմից ընդունված նորմատիվ վարչա-իրավական ակտի հանդեպ:

2. Վրաստանի Կառավարությունը իրավագործ է նորմատիվ ակտով սահմանել մոնիցինգայլիտետի ավագանու կողմից մոնիցինգայլիտետի սեփական լիազորությունների բնագավառում ընդունելվելիք այն նորմատիվ վարչա-իրավական ակտերի ցանկը, որոնց հանդեպ չի իրականացվում իրավական վերահսկողություն:

3. Իրավական վերահսկողության մարմինն իրականացնում է մոնիցինգայլիտետի ավագանու կողմից «Վրաստանի օրենսդրական տեղեկատուում» հրապարակված նորմատիվ վարչա-իրավական ակտի փորձաքննություն և իրավական եզրակացությունն ուղարկում ակտն ընդունող մարմին: Իրավական վերահսկողության մարմինը իրավական եզրակացությունը պատրաստում է և մոնիցինգայլիտետի ավագանուն ուղարկում համապատասխան նորմատիվ վարչա-իրավական ակտի հրապարակման պահից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում: Իրավական վերահսկողության մարմինն իրավական եզրակացության մեջ մատնանշում է այն նորմերը, որոնց հակասում է մոնիցինգայլիտետի ավագանու կողմից ընդունված նորմատիվ վարչա-իրավական ակտը: Իրավական եզրակացությունը վարչա-իրավական ակտ չէ և նրա նկատմամբ չի կիրառվում Վրաստանի Ընդհանուր վարչական օրենսգրքով նախատեսված վարչական վարույթ:

4. Մոնիցինգայլիտետի ավագանու կողմից մոնիցինգայլիտետին պատգամված լիազորությունների բնագավառում ընդունված նորմատիվ վարչա-իրավական ակտի փորձաքննությունն իրականացվում է ոլորտային վերահսկողության մարմնի հետ համակարգմամբ: Իրավական վերահսկողության մարմինը մոնիցինգայլիտետին պատգամված լիազորությունների բնագավառում ընդունված մոնիցինգայլիտետի ավագանու նորմատիվ վարչա-իրավական ակտը կամ նորմատիվ վարչա-իրավական ակտի այն մասը, որը չի կարգավորում պատգամված լիազորությունների իրականացման հետ կապված հարցեր, նրա ընդունման պահից 3 աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում է համապատասխան ոլորտային վերահսկողության մարմին՝ այդ ակտի օրինականության վերաբերյալ սեփական դիտողությունների ներկայացման համար: Ոլորտային վերահսկողության

մարմինն իր եզրակացությունն ուղարկում է համապատասխան դիմումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում իրավական վերահսկողության մարմինն իրավագոր է տրամադրել իրավական եզրակացությունը: Իրավական եզրակացության բովանդակության մասին վերջնական որոշումն ընդունում է իրավական վերահսկողության մարմինը:

5. Բացասական իրավական եզրակացության դեպքում մունիցիպալիտետի ավագանին եզրակացությունը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ժամկետում իրավական վերահսկողության մարմինն է ուղարկում նորմատիվ վարչա-իրավական ակտում փոփոխություններ կատարելու կամ այս ակտի չեղյալ համարելու մասին ընդունված նորմատիվ վարչա-իրավական ակտը կամ պատճառաբանված գրավոր մերժումը:

6. Մունիցիպալիտետի ավագանու կողմից սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում իրավական եզրակացությունը ի գիտություն չառնելու կամ պատճառաբանված գրավոր մերժման դեպքում իրավական վերահսկողության մարմինն իրավագոր է համապատասխան ժամկետն անցնելուց կամ պատճառաբանված գրավոր պատասխանը ստանալու պահից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմել դատարան նորմատիվ վարչա-իրավական ակտի չեղյալ համարելու պահանջով:

7. Իրավական վերահսկողության մարմինն իրավագոր է ի գիտություն առնել և բավարար ճանաչել սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն ուղարկված մունիցիպալիտետի ավագանու պատճառաբանված գրավոր պատասխանը:

8. Եթե մունիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչա-իրավական ակտը հակասում է Վրաստանի Սահմանադրության նորմերին կամ Էական և անուղղելի վնաս է պատճառում քաղաքացիների սահմանադրական իրավունքներին և ազատություններին, իրավական վերահսկողության մարմինն իրավագոր է առանց սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետի պահպանման, անհապաղորեն դիմել դատարան նորմատիվ վարչա-իրավական ակտը չեղյալ համարելու պահանջով:

9. Մունիցիպալիտետն իրավունք ունի, նորմատիվ վարչա-իրավական ակտի կամ նրա մասը չեղյալ համարելու մասին դատարանի որոշումը Օրենքով սահմանված կարգով բողոքարկել վերադաս ատյանի դատարանում:

ՀՈԴՎԱԾ 133. Ոլորտային վերահսկողություն (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի մարմնի/պաշտոնատար անձի կողմից պատգամված լիազորությունների շրջանակներում ընդունված/հրապարակված անհատական վարչա-իրավական ակտի և մունիցիպալիտետի մարմնի գործողության վրա իրականացվում է ոլորտային վերահսկողություն:

2. Պատգամված լիազորությունների իրականացման պետական վերահսկողության ժամանակ ոլորտային վերահսկողության մարմինն իրավագոր է.

ա) ետ կանչել փաստաթուղթը կամ տեղեկությունը,

բ) ընդհատել կամ չեղյալ համարել մունիցիպալիտետի մարմնի/պաշտոնատար անձի անհատական վարչա-իրավական ակտը,

գ) տեղական ինքնակառավարումը փոխարինել:

ՀՈԴՎԱԾ 134. Փաստաթուղթ և տեղեկություն պահանջելը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման

օրվանից)

1. Պետական վերահսկողության մարմինն իրավագոր է մունիցիպալիտետի մարմնից/պաշտոնատար անձից պահանջել պետական վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ ցանկացած պաշտոնական փաստաթուղթ և տեղեկություն, այդ թվում, իրավական ակտեր և վարչական վարույթի նյութեր:

2. Մունիցիպալիտետը պարտավոր է պահանջված փաստաթուղթը և տեղեկությունը պետական վերահսկողության մարմնին մատուցել ոչ ուշ, քան պահանջելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 135. Վարչա-իրավական ակտի ընդհատումը և չեղյալ համարումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Ոլորտային վերահսկողության մարմինն իրավագոր է ստուգել մունիցիպալիտետի մարմնի/պաշտոնատար անձի կողմից պատգամված լիազորությունների բնագավառում ընդունված/հրապարակված անհատական վարչա-իրավական ակտի օրինականությունը և նպատակահարմարությունը և մունիցիպալիտետին տալ կատարման համար պարտադիր ցուցում:

2. Պատգամված լիազորությունների պատշաճ իրականացման նպատակով մունիցիպալիտետի մարմնի/պաշտոնատար անձի անհատական վարչա-իրավական ակտը կարող է չեղյալ համարվել աննպատակահարմարության դրդապատճառով, եթե այն չի համապատասխանում պետական վերահսկողության մարմնի ցուցմանը: Աննպատակահարմարության դրդապատճառով ակտը չեղյալ համարելու որոշումը պետք է հիմնավորված լինի:

3. Եթե մունիցիպալիտետը չի կատարում պետական վերահսկողության մարմնի ցուցումը այն ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ժամկետում, պետական վերահսկողության մարմինն ընդունում է որոշում մունիցիպալիտետի մարմնի/պաշտոնատար անձի կողմից պատգամված լիազորությունների բնագավառում ընդունված/հրապարակված անհատական վարչա-իրավական ակտը չեղյալ համարելու մասին:

4. Եթե մունիցիպալիտետի մարմնի/պաշտոնատար անձի անհատական վարչա-իրավական ակտը հակասում է Վրաստանի Սահմանադրության նորմերին, Էական և անուղղելի վնաս է հասցնում քաղաքացիների սահմանադրական իրավունքներին և ազատություններին կամ առաջացնում է պետական գույքի և բյուջետային միջոցների ոչ ռացիոնալ և ոչ նպատակային օգտագործում, ոլորտային վերահսկողության մարմինն իրավագոր է, առանց կատարման համար պարտադիր ցուցումներ տալու, անհապաղորեն դադարեցնել համապատասխան անհատական վարչա-իրավական ակտը:

5. Մունիցիպալիտետի մարմնից/պաշտոնատար անձն անհատական վարչա-իրավական ակտի ընդհատման պահից 10 աշխատանքային օրվա ժամկետում պետական վերահսկողության մարմնին է ուղարկում անհատական վարչա-իրավական ակտի մեջ փոփոխություններ կատարելու կամ այդ ակտը չեղյալ համարելու մասին ընդունված/հրապարակված անհատական վարչա-իրավական ակտը կամ պատճառաբանված մերժումը:

6. Սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետն անցնելուց հետո պետական վերահսկողության մարմնը որոշում է ընդունում անհատական վարչա-իրավական ակտի դադարեցման կամ չեղյալ համարելու մասին ընդունված որոշումը չեղյալ համարելու մասին:

7. Անթույլատրելի է պետական վերահսկողության կարգով չեղյալ համարել մունիցիպալիտետի

մարմնի/պաշտոնատար անձի անհատական վարչա-իրավական ակտը, որն ընդունված/ հրապարակված է «Հանրային ծառայության մասին» Վրաստանի Օրենքի կամ «Վրաստանի աշխատանքային օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի հիման վրա՝ առանց աշխատանքային իրավական հարաբերությունների կարգավորման:

8. Մունիցիպալիտետն իրավունք ունի անհատական վարչա-իրավական ակտի կամ նրա մասի չեղյալ համարելու մասին պետական վերահսկողության մարմնի որոշման օրինականության հարցը բողոքարկել դատարանում, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 136. Տեղական ինքնակառավարման փոխարինումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Եթե մունիցիպալիտետի ավագանին պատգամված լիազորությունների բնագավառում չի կատարում օրենքով սահմանված նորմատիվ վարչա-իրավական ակտ ընդունելու պարտավորությունը, ոլորտային վերահսկողության մարմինն իրավագոր է նրան տալ պարտադիր ցուցում՝ տվյալ պարտավորության կատարման վերաբերյալ:

2. Մունիցիպալիտետի ավագանին պարտավոր է պետական վերահսկողության մարմնի ցուցումը կատարել այն ստանալու պահից 30-օրյա ժամկետում:

3. Մունիցիպալիտետի ավագանու կողմից սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում պետական վերահսկողության մարմնի ցուցումը չկատարելու դեպքում պետական վերահսկողության մարմինը հրապարակում է համապատասխան նորմատիվ վարչա-իրավական ակտ, որն ուժի մեջ է մինչև մունիցիպալիտետի ավագանու կողմից համապատասխան նորմատիվ վարչա-իրավական ակտի ընդունումը:

4. Եթե մունիցիպալիտետի մարմինը չի իրականացնում սույն Օրենքով մունիցիպալիտետին պատգամված լիազորությունը, պետական վերահսկողության մարմինն իրավագոր է նրանից պահանջելու կատարել այդ պարտականությունը և վիճակն ուղղելու համար մունիցիպալիտետի համար սահմանել խելամիտ ժամկետ, առնվազն 15 աշխատանքային օր: Այս ժամկետը կարելի է երկարաձգել մունիցիպալիտետի մարմնի հիմնավորված միջնորդության հիման վրա, պետական վերահսկողության մարմնի որոշմամբ:

5. Մունիցիպալիտետի մարմինը/պաշտոնատար անձը պարտավոր է պետական վերահսկողության մարմնի պահանջին համապատասխան, պարբերաբար տեղեկություններ մատուցել ձեռնարկած միջոցների մասին:

6. Վիճակն ուղղելու համար սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետն անցնելուց հետո, եթե պետական վերահսկողության մարմինը որոշում է, որ մունիցիպալիտետը կրկին ոչ պատշաճ կերպով է իրականացնում կամ չի իրականացնում համապատասխան միջոցառումներ կամ վիճակն անհնար է ուղղել, մունիցիպալիտետին պատգամված լիազորությունն իրականացնում է պետական վերահսկողության մարմինը: Համապատասխան միջոցառումների իրականացման հետ կապված ծախսերի մարումը կիրականացնի մունիցիպալիտետը, և դրանք կհատուցվեն նպատակային տրանսֆերի ծավալից պահումով:

7. Տեղական ինքնակառավարման փոխարինումը կարող է կիրառվել մեկ անգամ կամ ժամանակավոր միջոցառման տեսքով, ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Թույլ չի տրվում տեղական ինքնակառավարման փոխարինման կիրառում մունիցիպալիտետի ավագանու լիազորությունների առաջին և վերջին 6 ամսվա ընթացքում:

8. Մունիցիպալիտետն իրավունք ունի, տեղական ինքնակառավարման փոխարինման

մասին պետական վերահսկողության մարմնի որոշման օրինականության հարցը բողոքարկել դատարանում:

ՀՈԴԿԱԾ 137. Իրավական խորհրդատվություն (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Մունիցիպալիտետի ավագանին իրավունք ունի, իրավական վերահսկողության մարմնին գրավոր դիմել իրավական խորհրդատվության խնդրանքով:

2. Իրավական խորհրդատվության մասին գրավոր դիմումին պետք է կցվի ընդունվելիք նորմատիվ վարչա-իրավական ակտի նախագիծը և նախագծի բացատրական թերթիկը:

3. Իրավական վերահսկողության մարմինը գրավոր դիմումը ստանալու պահից 15 օրվա ընթացքում պատրաստում է և մունիցիպալիտետի ավագանուն ուղարկում իրավական եզրակացություն՝ ընդունվելիք նորմատիվ վարչա-իրավական ակտի նախագծի օրինականության վերաբերյալ: Նորմատիվ վարչա-իրավական ակտի նախագծում իրավական թերությունների հայտնաբերման դեպքում իրավական եզրակացությունը պետք է պարունակի այն նորմատիվ ակտի անվանումը, որը հակասում է նախագծին նաև հանձնարարականներ իրավական թերությունների վերացման մասին:

4. Իրավական վերահսկողության մարմնի իրավական եզրակացությունը խորհրդատվական բնույթի է:

ՀՈԴԿԱԾ 138. Պետական վերահսկողության մարմնի գործունեության հանրայնությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական հնքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Պետական վերահսկողության մարմինը պարտավոր է մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը կազմել և «Վրաստանի օրենսդրական տեղեկատուի» մեջ հրապարակել վերահսկողության բնագավառում օրացուցային տարվա ընթացքում իր կողմից իրականացված գործունեության պաշտոնական հաշվետվությունը:

2. Պետական վերահսկողության մարմնի պաշտոնական հաշվետվությունը պետք է պարունակի վիճակագրական տեղեկություններ պետական վերահսկողության մարմնին մունիցիպալիտետի մարմինների / պաշտոնատար անձանց կողմից ուղարկված նորմատիվ վարչա-իրավական ակտերի, խորհրդատվության համար ուղարկված նորմատիվ ակտերի նախագծերի և պահանջված անհատական վարչա-իրավական ակտերի մասին, վերահսկողության ընթացքում դադարեցված, բողոքարկված և չեղյալ հայտարարված վարչա-իրավական ակտերի լրիվ ցանկը, նաև տեղեկատվություն պետական վերահսկողության մարմնի բողոքների վերաբերյալ դատարանի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ: Պետական վերահսկողության մարմնի պաշտոնական հաշվետվությունը կազմելու կարգը և ձևը որոշումով հաստատում է Վրաստանի Կառավարությունը:

3. Պետական վերահսկողության մարմինը պարտավոր է պաշտոնական հաշվետվությունը կազմելու պահից 15-օրյա ժամկետում այն ուղարկել Վրաստանի Կառավարությանը և Վրաստանի խորհրդարանին:

ԳԼՈՒԽ XVII

Մունիցիպալիտետի մարմինների գործունեության աուդիտը (հաշվետուագումը)

ՀՈՂՎԱԾ 139. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության օրինականության և արդյունավետության ապահովումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

Մունիցիպալիտետի մարմինների գործունեության օրինականության և արդյունավետության ապահովման նպատակով Վրաստանի օրենսդրությանը համապատասխան իրականացվում է:

- ա) պետական աուդիտ,
- բ) անկախ աուդիտ,
- գ) ներքին աուդիտ:

ՀՈՂՎԱԾ 140. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական աուդիտը, անկախ աուդիտը և ներքին աուդիտը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական աուդիտը «Պետական աուդիտի ծառայության մասին» Վրաստանի օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում իրականացնում է Պետական աուդիտի ծառայությունը:

2. Մունիցիպալիտետի ավագանու որոշմամբ, ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով հրավիրված հաշվետուագողը կարող է անցկացնել մունիցիպալիտետի մարմինների գործունեության անկախ աուդիտ: Ավագանին անկախ աուդիտի անցկացման մասին որոշումն ընդունում է իր անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով: Անկախ հաշվետուագողի հաշվետվությունը և եզրակացությունը ներկայացվում է ավագանուն, ուղարկվում է Պետական աուդիտի ծառայություն և ապահովվում հանրային հրապարակում:

3. Մունիցիպալիտետի գործադիր մարմնի և շրջանային վարչության/ քաղաքապետարանի գործունեության ներքին աուդիտն իրականացվում է «Պետական ներքին ֆինանսական հսկողության մասին» Վրաստանի օրենքին և շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգին համապատասխան: Ներքին աուդիտ իրականացնող սուբյեկտներին որոշում է ավագանին շրջանային վարչության/քաղաքապետարանի կանոնակարգով:

ԳԼՈՒԽ XVIII

Ուղղակի պետական կառավարում: Ավագանու ազատելը և նրա գործունեության ընդհատումը, ավագանու և վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

ՀՈԴՎԱԾ 141. Ավագանու ազատելը և նրա գործունեության ընդհատումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Ավագանուն ազատելը կամ նրա գործունեության ընդհատումը տեղի է ունենում Վրաստանի Սահմանադրության 73-րդ հոդվածի առաջին կետի «ժ» ենթակետով նախատեսված դեպքերում, եթե ներկայացուցչական մարմնի գործողությամբ վտանգ է ստեղծվում երկրի ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, պետական իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների իրականացմանը:

2. Վրաստանի Նախագահը Վրաստանի Կառավարության ներկայացմամբ և Վրաստանի Խորհրդարանի համաձայնությամբ հրապարակում է հրամանագիր՝ ավագանուն ազատելու կամ նրա գործունեության ընդհատման մասին:

3. Ավագանուն ազատելը կամ նրա գործունեության ընդհատումը համապատասխանաբար առաջացնում է վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ընդհատում կամ դադարեցում:

ՀՈԴՎԱԾ 142. Ավագանու և վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Ավագանու լիազորությունը վաղաժամկետ կդադարեցվի, եթե.

ա) ավագանու անդամների քանակը կեսից ավելիով պակասի,

բ) ավագանին նոր բյուջետային տարին սկսվելուց 3 ամսում չի հաստատի Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված մունիցիպալիտետի բյուջեն,

գ) ավագանին անընդմեջ 6 ամսվա ընթացքում չի հավաքվի:

2. Վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունը վաղաժամկետ դադարում է սույն հոդվածի առաջին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում: Ավագանու, վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին վճիռը որոշումով ընդունում է Վրաստանի Կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 143. Ուղղակի պետական կառավարման ներմուծումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Ուղղակի պետական կառավարման ներմուծման մասին որոշումն ընդունում է Վրաստանի Կառավարությունը:

2. Ուղղակի պետական կառավարումն իրականացնում է Վրաստանի Կառավարության կողմից նշանակված կառավարության լիազորը կամ կոլեգիալ մարմինը՝ արտակարգ վարչությունը կամ էլ սույն Օրենքի համաձայն իրավազոր պաշտոնատար անձը:

3. Ուղղակի պետական կառավարման ներմուծման հիմունքն է.

ա) ավագանուն ազատելը կամ նրա գործունեության ընդհատումը,

բ) ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը սույն Օրենքի 142-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված դեպքերում:

4. Ուղղակի պետական կառավարման ներմուծման ժամանակ մունիցիպալիտետի բյուջեն ուղղակի պետական կառավարում իրականացնող պաշտոնատար անձի/մարմնի ներկայացմամբ, որոշումով հաստատում է Վրաստանի Կառավարությունը:

ՀՈՂՎԱԾ 144. Ուղղակի պետական կառավարման իրականացումը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Ավագանուն ազատելիս կամ նրա գործունեությունը ընդհատելիս ուղղակի պետական կառավարումն իրականացնում է Վրաստանի Կառավարության կողմից նշանակված Կառավարության լիազորը կամ կոլեգիալ մարմինը՝ արտակարգ վարչությունը:

2. Սույն Օրենքի 142-րդ հոդվածի առաջին կետի «ա» և «գ» ենթակետերի հիման վրա ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման ժամանակ ուղղակի պետական կառավարումն իրականացնում է վարչության գործող նախագահը/քաղաքապետը, իսկ սույն Օրենքի 142-րդ հոդվածի առաջին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների դադարեցման ժամանակ՝ մինչև նոր վարչության նախագահի/քաղաքապետի ընտրելը Վրաստանի Կառավարությունը հենց նրան է հանձնարարում Կառավարության լիազորի լիազորությունների իրականացումը:

3. Ուղղակի պետական կառավարում իրականացնող պաշտոնատար անձը/մարմինն իրականացնում է մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորություններ: Այս պաշտոնատար անձի/մարմնի լրացուցիչ լիազորությունները և ուղղակի պետական կառավարման իրականացման կարգը սահմանվում է համապատասխան կանոնակարգով, որը որոշումով հաստատում է Վրաստանի Կառավարությունը: Ուղղակի պետական կառավարման իրականացումը Վրաստանի Կառավարության որոշումով սահմանված կարգով վերահսկում է Վրաստանի Կառավարությունը կամ Վրաստանի Կառավարության կողմից լիազորված նախարարությունը:

4. Մունիցիպալիտետի մարմիններին ազատելու, լիազորությունների ընդհատման, վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների օրինականության հարցը կարող է բողոքարկվել դատարանում, Վրաստանի օրենսդրության համաձայն:

5. Սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված որոշումները բողոքարկելու իրավունք ունի ազատված, լիազորությունը ընդհատված կամ լիազորությունը դադարեցված ավագանու անդամների առնվազն մեկ քառորդը կամ համապատասխան մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը:

ՀՈՂՎԱԾ 145. Ուղղակի պետական կառավարման իրականացման ժամկետը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Ուղղակի պետական կառավարումն իրականացվում է մինչև Տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների հետևանքով ընտրված մունիցիպալիտետի մարմինների լիազորությունների ճանաչման օրը, իսկ եթե մունիցիպալիտետի մարմինների լիազորությունների

վաղաժամկետ դադարեցումից մինչև հերթական ընտրությունները մնացել է 1 տարուց պակաս՝ մինչև հերթական ընտրությունների արդյունքում ընտրված մուկիցիպալիտետի մարմինների լիազորությունների ճանաչումը:

2. Սույն գլխով նախատեսված դեպքում ավագանուն և վարչության նախագահին/ քաղաքապետին ազատելիս կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելիս՝ ավագանին և վարչության նախագահը/քաղաքապետը կընտրվի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների ժամկետով:

ԲԱԺԻՆ VII

Երկրամասային խորհրդատվական խորհուրդ

ԳԼՈՒԽ XIX

Երկրամասային խորհրդատվական խորհրդի կարգավիճակը և լիազորությունը

ՀՈՐԿԱԾ 146. Երկրամասային խորհրդատվական խորհրդի կարգավիճակը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Երկրամասային խորհրդատվական խորհուրդը պետական լիազորին՝ նահանգապետին, առընթեր գոյություն ունեցող մուկիցիպալիտետների խորհրդատվական մարմին է, որը ստեղծվում է և գործունեություն ծավալում սույն Օրենքով սահմանված կարգով:

2. Երկրամասային խորհրդատվական խորհրդի նպատակն է ապահովել մուկիցիպալիտետի շահերի ներկայացում և նախատեսում պետական լիազորի՝ նահանգապետի, լիազորությունների իրականացման տարածքի զարգացման պլանավորման և իրականացման գործընթացում:

ՀՈՐԿԱԾ 147. Երկրամասային խորհրդատվական խորհրդի կազմը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Երկրամասային խորհրդատվական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են բոլոր համապատասխան մուկիցիպալիտետների վարչությունների նախագահները/ քաղաքապետերը, ավագանու նախագահները և ավագանու նախագահների տեղակալները:

ՀՈՐԿԱԾ 148. Երկրամասային խորհրդատվական խորհրդի լիազորությունը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

Երկրամասային խորհրդատվական խորհրդի լիազորությունն է.

ա) պետական լիազորի՝ նահանգապետի, ներկայացմամբ համապատասխան տարածքում պետության կողմից իրականացվելիք նախագծերի, ծրագրերի և դրանց նախահաշիվների քննարկումը,

բ) պետական լիազորի՝ նահանգապետի, լիազորությունների իրականացման տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության քննարկումը,

գ) համապատասխան տարածքի զարգացման պլանավորման և իրականացման

գործընթացում պետական լիազորի՝ նահանգապետի համար հանձնարարականների մշակում:

ՀՈՂՎԱԾ 149. Երկրամասային խորհրդատվական խորհրդի գործունեության կարգը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)

1. Երկրամասային խորհրդատվական խորհրդի առաջին նիստն անց է կացվում Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից 60 օրվա ժամկետում: (30.07.2014 N 2589)

2. Երկրամասային խորհրդատվական խորհրդի նիստերը հրավիրում է պետական լիազորը՝ նահանգապետը: Երկրամասային խորհրդատվական խորհուրդը հավաքվում է առնվազն 3 ամիսը մեկ անգամ:

3. Երկրամասային խորհրդատվական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նրան ներկա է խորհրդատվական խորհրդի անդամների կեսից ավելին:

4. Երկրամասային խորհրդատվական խորհրդի նիստը ձևակերպվում է խորհրդատվական խորհրդի նիստի արձանագրությամբ:

5. Երկրամասային խորհրդատվական խորհուրդը հանձնարարականն ընդունում է խորհրդատվական խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ:

6. Երկրամասային խորհրդատվական խորհրդի գործունեության կազմակերպումն ապահովում է պետական լիազորի՝ նահանգապետի, աշխատակազմը:

ԲԱԺԻՆ VIII

Անցումային և եզրափակիչ դրույթներ

ԳԼՈՒԽ XX

Անցումային դրույթներ

ՀՈՂՎԱԾ 150. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները և լիազորությունների ժամկետը

1. 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները, բացառությամբ սույն Օրենքի 152-րդ հոդվածի հիման վրա չեղյալ համարված մունիցիպալիտետների ընտրությունների, անց է կացվում 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ գոյություն ունեցած մունիցիպալիտետներում և ինքնակառավարվող քաղաքներում, նաև սույն Օրենքի 151-րդ հոդվածի առաջին կետով սահմանված ինքնակառավարվող քաղաքներում և 152-րդ հոդվածի հիման վրա ստեղծված նոր մունիցիպալիտետներում:

2. 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների ժամանակ սույն Օրենքին համապատասխան կընտրվեն մունիցիպալիտետների ավագանիներ և վարչության նախագահներ/քաղաքապետեր:

3. 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններից հետո Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններն անց են կացվում 2017 թվականի հոկտեմբերին: 2017 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները ընտրություններից 60 օր առաջ նշանակում է Վրաստանի Նախագահը՝ Վրաստանի վարչապետի վավերացմամբ: 2014 թվականին ընտրված ավագանու լիազորությունների ժամկետը սպառվում է 2017 թվականի ավագանու հերթական ընտրությունների հետևանքով ընտրված համապատասխան ավագանու լիազորությունների ճանաչման պես: 2014 թվականին ընտրված վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ժամկետը սպառվում է 2017 թվականի վարչության նախագահի/քաղաքապետի հերթական ընտրությունների հետևանքով ընտրված համապատասխան վարչության նախագահի/քաղաքապետի լիազորությունների ուժի մեջ մտնելուն պես:

ՀՈՂՎԱԾ 151. Ինքնակառավարվող քաղաքներ և մունիցիպալիտետների վարչական կենտրոններ ***(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)***

1. Ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակ «Տեղական ինքնակառավարման մասին» 2005 թվականի Վրաստանի օրգանական Օրենքով շնորհված ունեն և սույն Օրենքով շնորհվում է քաղաքներին՝ Թբիլիսիին, Ռուսթավիին, Փոթիին, Բաթումիին, Թելավիին, Օզուրգեթիին, Չուգդիդիին, Գորիին, Ամբրուլաուրիին, Սցխեթային և Ախալցխեին:

2. Մունիցիպալիտետի (բացառությամբ ինքնակառավարվող քաղաքի) վարչական կենտրոն է սահմանվում մինչև 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները եղած մունիցիպալիտետի վարչական կենտրոնը:

3. Սույն Օրենքի 152-րդ հոդվածի հիման վրա ստեղծված մունիցիպալիտետի վարչական կենտրոնները սահմանվում են սույն Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

ՀՈՂՎԱԾ 152. Մոնիցիցիալիտետների տերիտորիալ օպտիմալացումը

1. «Վրաստանի տարածաշրջանային զարգացման կառավարական հանձնաժողովի կանոնակարգի հաստատման մասին» Վրաստանի Կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի №297 որոշմամբ ստեղծված Վրաստանի տարածաշրջանային զարգացման կառավարական հանձնաժողովը (այսուհետ՝ կառավարական հանձնաժողով)։

ա) սույն Օրենքի հրապարակումից 1-ամսյա ժամկետում կազմում է մոնիցիցիալիտետների տարածքային օպտիմալացման չափանիշները,

բ) քաղաքի կատեգորիայի բնակավայրերին (Թելավիին, Օզուրգեթիին, Չուգդիդիին, Գորիին, Ամբրուաուրիին, Մցխեթային և Ախալցխեին) ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակի շնորհման հետ կապված սույն կետի «ա» ենթակետի համաձայն կազմված մոնիցիցիալիտետների տարածքային օպտիմալացման չափանիշների հիման վրա, սույն Օրենքի հրապարակումից հետո, 3-ամսյա ժամկետում պատրաստում է և Վրաստանի Կառավարությանը ներկայացնում առաջարկություններ նոր ինքնակառավարվող համայնքների ստեղծման մասին,

գ) սույն կետի «բ» ենթակետով նախատեսված աշխատանքների ավարտից հետո պատրաստում է առաջարկություններ՝ կապված այլ մոնիցիցիալիտետների տարածքային օպտիմալացման հետ և մինչև 2017 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները, ոչ ուշ, քան 1 տարի առաջ Վրաստանի Կառավարությանն է ներկայացնում առաջարկություններ այս մոնիցիցիալիտետների բաժանման մասին։

2. Սույն հոդվածի առաջին կետի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված առաջարկությունները մշակելիս՝ կառավարական հանձնաժողովը ղեկավարվում է սույն հոդվածի առաջին կետի «ա» ենթակետին համապատասխան կազմված չափանիշներով և սույն Օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով։

3. Վրաստանի Կառավարությունը սույն հոդվածի առաջին կետի «բ» և «գ» ենթակետերի հիման վրա կազմված առաջարկությունների նախատեսմամբ, սույն Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով, մոնիցիցիալիտետների ստեղծման և լուծարման մասին ներկայացմամբ դիմում է Վրաստանի Խորհրդարանին։ Սույն հոդվածի առաջին կետի «բ» ենթակետի համաձայն քաղաքի կատեգորիայի բնակավայրերին (Թելավիին, Օզուրգեթիին, Չուգդիդիին, Գորիին, Ամբրուաուրիին, Մցխեթային և Ախալցխեին) ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակի շնորհման հետ կապված համապատասխան մոնիցիցիալիտետների առանձնացման հարցը Վրաստանի Խորհրդարանում պետք է նախաձեռնված լինի կառավարական հանձնաժողովի դիմելու պահից 15-օրյա ժամկետում։

4. 2017 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններն անց են կացվում սույն Օրենքի 150-րդ հոդվածի առաջին կետով սահմանված և սույն հոդվածի առաջին կետի հիման վրա ստեղծված ինքնակառավարվող միավորներում։

ՀՈՂՎԱԾ 153. Օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված իրականացվելիք միջոցառումներ

1. Կառավարական հանձնաժողովը պատրաստում է սույն Օրենքի 152-րդ հոդվածի հիման վրա ստեղծված նոր մոնիցիցիալիտետների բյուջեները կազմելու, բյուջետային մուտքերի և մուծումների բաշխման ժամանակավոր կարգը մինչև 2014 թվականի վերջն ընկած ժամանակամիջոցի համար, նաև այս մոնիցիցիալիտետների միջև գույքի և պարտավորությունների բաշխման կարգը։

2. Սույն հոդվածի առաջին կետում նշված վարչա-իրավական ակտերի նախագծերը հաստատման են ներկայացվում Վրաստանի Կառավարությանը ոչ ուշ, քան մինչև 2014 թվականի մայիսի 31-ը։

3. Այն ինքնակառավարվող միավորներում, որոնց լուծարման հետևանքով սույն Օրենքի 151-րդ և 152-րդ հոդվածների հիման վրա նոր մուկիցիպալիտետներ են ստեղծվում, մինչև 2014 թվականի մայիսի 1-ը, սույն հոդվածի առաջին կետի համաձայն ստեղծվում է ժամանակավոր աշխատանքային խումբ: Ժամանակավոր աշխատանքային խումբը Վրաստանի Կառավարության կողմից հաստատված կանոնների հիման վրա ապահովում է մուկիցիպալիտետների միջև գույքի և պարտավորությունների բաշխման մասին առաջարկությունների պատրաստումը և ավագանուն հաստատելու ներկայացումը: Համապատասխան մուկիցիպալիտետի ավագանին որոշումն ընդունում է ոչ ուշ, քան մինչև 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները:

4. Նոր մուկիցիպալիտետների բյուջեներում մուտքերի անխափան արտացոլման նպատակով Վրաստանի ֆինանսների նախարարությունը մինչև 2014 թվականի հունիսի 1-ն իրականացնում է համապատասխան միջոցառումներ:

5. 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների արդյունքում ընտրված մուկիցիպալիտետների ավագանիների առաջին նիստը հրավիրում է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփման պահից 30-օրա ժամկետում:

6. Մինչև 2014 թվականի հունիսի 1-ը Վրաստանի ֆինանսների նախարարությունը և Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունն ապահովում են սույն Օրենքի 152-րդ հոդվածի հիման վրա ստեղծված մուկիցիպալիտետների 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններին հաջորդող շրջանի բյուջեները կազմելու ժամանակավոր կարգի նախապատրաստում և Վրաստանի Կառավարությանը հաստատման ներկայացում: Գոյություն ունեցած մուկիցիպալիտետի ավագանու լիազորությունը դադարում է նորընտիր ավագանու կամ մուկիցիպալիտետի տարածքում ստեղծված նոր մուկիցիպալիտետների ավագանիներից մեկի առաջին հավաքվելուն պես:

ՀՈԴՎԱԾ 154. Բյուջեների միջև մուտքերի սահմանազատումը

1. Վրաստանի Կառավարությունը մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը Վրաստանի նորհրդարանին քննարկման է ներկայացնում «Վրաստանի Բյուջետային օրենսգրքում փոփոխություններ ընդգրկելու մասին» օրինագիծը, որը սահմանում է մուտքերի՝ Վրաստանի պետական, Աբխազիայի և Աջարիայի ինքնավար Հանրապետությունների հանրապետական և մուկիցիպալիտետների բյուջեների միջև սահմանազատում՝ ըստ տոկոսային ցուցանիշների:

2. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված օրինագծով սահմանվում է տարբեր մակարդակի բյուջեների միջև եկամտահարկի բաշխման համամասնությունը և մեխանիզմը, նաև մուկիցիպալիտետներին տրամադրվելիք համահարթեցման տրանսֆերի ամբողջ հիմնադրամի տոկոսային հարաբերակցությունը նոմինալ ամբողջական ներքին ապրանքի հետ և համահարթեցման տրանսֆերի բաշխման համապատասխան կարգը:

3. Սույն հոդվածով նախատեսված օրինագծի նախապատրաստումն ապահովում է Վրաստանի ֆինանսների նախարարությունը:

ՀՈԴՎԱԾ 155. Ոչ ֆինանսական ակտիվների աճի ընդհանուր ծավալի որոշումը **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից) (Սույն հոդվածը գործում է մինչև 2019 թվականի հունվարի 1-ը)**

1. Բյուջետային տարվա համար պլանավորված ոչ ֆինանսական ակտիվների աճի ընդհանուր

ծավալի տոկոսային ցուցանիշը նույն բյուջետային տարվա համար պլանավորված մոնիցիպալիտետի բյուջետային մուծումների ընդհանուր ծավալում չպետք է լինի պլանավորվելիք տարվա նախորդ 3 տարիների նմանատիպ տարեկան միջին ցուցանիշից պակաս:

2. Սույն Օրենքով նախատեսված դեպքում մոնիցիպալիտետի բաժանման հետևանքով ստեղծված մոնիցիպալիտետների վրա սույն հոդվածի առաջին կետի պահանջների տարածման ժամանակ պլանավորվելիք տարվա նախորդ 3 տարվա բյուջետային մուծումների միջին ցուցանիշը հաշվարկվում է մինչև բաժանումն առկա մոնիցիպալիտետի տվյալներով:

ՀՈՂՎԱԾ 156. Տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների հաստիքային քանակի սահմանման ժամանակավոր կարգը **(Սույն հոդվածը գործում է մինչև 2019 թվականի հունվարի 1-ը)**

1. Շրջանային վարչության/քաղաքապետարանի և ավագանու աշխատակազմի հանրային ծառայողների հաստիքացուցակներով նախատեսված տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների հաստիքային թվաքանակը առնվազն 30 միավոր է: Այն չպետք է գերազանցի հանրային ծառայողների տվյալ նվազագույն թվաքանակի (30 հաստիքային միավորի), համապատասխան ավագանիում 2010 թվականի Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների ընտրությունների համար սահմանված մեծամասնական ընտրատարածքների քանակի և ինքնակառավարվող միավորում հաշվառված յուրաքանչյուր 500 ընտրողի հաշվով 1 հաստիքային միավորի ավելացմամբ ստացած գումարը (Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարումից հետո 120-րդ օրը)

2. Մոնիցիպալիտետի արտահաստիքային ծառայողների թվաքանակը չպետք է գերազանցի շրջանային վարչության/քաղաքապետարանի և ավագանու աշխատակազմի հանրային ծառայողների հաստիքային թվաքանակի 10 տոկոսը: Այն ինքնակառավարվող միավորներում, որտեղ հանրային ծառայողների հաստիքային թվաքանակի 10 տոկոսը 5 միավորից պակաս է, հնարավոր է արտահաստիքային ծառայողների թիվն ավելացնել մինչև 5 միավոր: **(Ուժի մեջ մտնի 2015 թվականի հունվարի 1-ից)**

3. Շրջանային վարչության/քաղաքապետարանի և ավագանու աշխատակազմի հանրային ծառայողների աշխատանքային վարձատրության ծախսերը չպետք է գերազանցեն մոնիցիպալիտետի բյուջեով նախատեսված ծախսերի 25 տոկոսը: **(Ուժի մեջ մտնի 2015 թվականի հունվարի 1-ից)**

4. Սույն հոդվածի առաջին–3-րդ կետերի գործողությունը չի տարածվում ինքնակառավարվող քաղաք Թբիլիսիի վրա, նաև Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մոնիցիպալիտետների վրա: **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարումից հետո 120-րդ օրը)**

ՀՈՂՎԱԾ 157. Տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների ուսուցումը

Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունը կկազմի տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների շարունակական ուսուցման համակարգի զարգացման մասին առաջարկություններ և ոչ ուշ, քան մինչև 2014 թվականի մայիսի 1-ը դրանք քննարկման կներկայացնի Վրաստանի Կառավարությանը:

ՀՈՂՎԱԾ 158. Նորաստեղծ մուկիցիպալիտետների նյութա-տեխնիկական ապահովումը

1. Սույն Օրենքի 152-րդ հոդվածի հիման վրա ստեղծված մուկիցիպալիտետների մարմինների տեղակայումը (անհրաժեշտության դեպքում նրանց համապատասխան շինությունների փոխանցում, նոր շենքերի կառուցում, համապատասխան մուկիցիպալիտետի սեփականության մեջ առկա շինությունների վերանորոգման-վերականգնման աշխատանքների անցկացում) և նյութա-տեխնիկական բազայով կահավորումն ապահովում է Վրաստանի Կառավարությունը:

2. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված աշխատանքների կատարման համար, իրենց լիազորությունների շրջանակներում, Վրաստանի Կառավարության որոշումով համապատասխան միջոցառումներ են իրականացնում Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների, Վրաստանի ֆինանսների և Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունները:

ՀՈՂՎԱԾ 159. Մուկիցիպալիտետի տարածքում ենթակառուցվածքի զարգացման ապահովումը **(սույն հոդվածը գործում է մինչև 2018 թվականի հունվարի 1-ը)**

Մուկիցիպալիտետի կողմից սեփական լիազորությունների իրականացման ապահովման նպատակով մուկիցիպալիտետի նախաձեռնությամբ և Վրաստանի Կառավարության հանձնարարությամբ համապատասխան պետական գերատեսչությունն իրավագոր է իրականացնել մուկիցիպալիտետի կողմից սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային նախագծեր:

ՀՈՂՎԱԾ 160. Մուկիցիպալիտետների վարչական սահմանների որոշման համար քարտեզագրական նյութերի նախապատրաստման ապահովում

Վրաստանի արդարադատության նախարարությունը.

ա) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը Վրաստանի Կառավարությանը հաստատման ներկայացնելի մուկիցիպալիտետների վարչական սահմանների որոշման կարգի սահմանման մասին Վրաստանի Կառավարության որոշման նախագիծը,

բ) Նույն հոդվածի «ա» ենթակետով սահմանված նպատակով մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը Վրաստանի Կառավարությանը հաստատման ներկայացնելի համապատասխան պետական նպատակային ծրագիրը:

ՀՈՂՎԱԾ 161. Իրավական ակտերի գործողությունը անցումային ժամանակաշրջանում **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մինչև սույն Օրենքի 151-րդ հոդվածի առաջին կետի և 152-րդ հոդվածի հիման վրա ստեղծված մունիցիպալիտետների մարմինների կողմից համապատասխան նորմատիվ ակտերի ստանալը, այս մունիցիպալիտետների վարչական տարածքներում գործում են այն ինքնակառավարվող միավորների վարչա-իրավական ակտերը, որոնց բաժանման հետևանքով ստեղծվել են նոր մունիցիպալիտետները:

2. Մինչև քաղաք Թբիլիսիի ավագանու կողմից համապատասխան նորմատիվ ակտերի ստանալը, իրավաբանական ուժը պահպանում են քաղաք Թբիլիսիի քաղաքապետի և քաղաք Թբիլիսիի Կառավարության նորմատիվ ակտերը:

ՀՈՂՎԱԾ 162. Մունիցիպալիտետներին գյուղատնտեսական նշանակության հողերի փոխանցման ժամկետները

Վրաստանի արդարադատության նախարարությունը, Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքի նախարարությունը, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունը և Վրաստանի ֆինանսների նախարարությունը մինչև 2017 թվականի հունվարի 1-ը կկազմեն մունիցիպալիտետներին գյուղատնտեսական նշանակության հողերի փոխանցման ժամկետներն արտացոլող համապատասխան ժամանակացույց ու կարգ և դրանք հաստատման կներկայացնեն Վրաստանի Կառավարությանը:

ՀՈՂՎԱԾ 163. Մունիցիպալիտետի կողմից խմելու ջրով մատակարարման և կոյուղու համակարգը սպասարկող ծառայությունների ապահովման լիազորությունների իրականացման պայմանները **(Ուժի մեջ մտնի 2014 թվականի Տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից)**

1. Մունիցիպալիտետը սույն Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի «ը» ենթակետով նախատեսված լիազորությունների շրջանակներում խմելու ջրով մատակարարման և կոյուղու համակարգի սպասարկումն ապահովում է համապատասխան լիցենզանտ մասնավոր իրավունքի սուբյեկտների միջոցով այն բնակավայրերում, որտեղ համապատասխան լիցենզանտ մատակարարը չի իրականացնում խմելու ջրով մատակարարում և կոյուղու համակարգի ծառայություն:

2. Մունիցիպալիտետի, Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարման կարգավորող հանձնաժողովի և մատակարարող մասնավոր իրավունքի սուբյեկտի միջև իրավական

հարաբերությունների պայմանները սույն Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի «ը» ենթակետով նախատեսված լիազորությունների շրջանակներում սահմանվում են համապատասխան օրենսդրական ակտով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված օրենսդրական ակտի նախագիծը մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը պատրաստում է Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքի նախարարությունը և այն Վրաստանի Խորհրդարանին է ներկայացնում Վրաստանի Կառավարությունը: (30.07.2014 N 2589)

ՀՈԴՎԱԾ 163¹. Մունիցիպալիտետում հրդեհային անվտանգության և արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքի պահպանության ապահովման ժամանակավոր կարգը (30.07.2014 N 2585 տարածվի 2014 թվականի հուլիսի 3-ից ծագած իրավական հարաբերությունների վրա)

1. Մինչև 2015 թվականի հունվարի 10-ը մունիցիպալիտետում հրդեհային անվտանգության և արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքի պահպանությունն ապահովում է մունիցիպալիտետը: Տվյալ լիազորությունը մունիցիպալիտետն իրականացնում է, որպես մունիցիպալիտետի սեփական լիազորություն, Վրաստանի Օրենսդրության համաձայն:

2. «Մունիցիպալիտետների բաժանման և ինքնակառավարվող համայնքների՝ մունիցիպալիտետների ստեղծման մասին» Վրաստանի Խորհրդարանի 2014 թվականի ապրիլի 4-ի №2205-Ու որոշման համաձայն բաժանված մունիցիպալիտետներում սույն հոդվածի առաջին կետով սահմանված լիազորությունների բաժանման հետևանքով լուծարված մունիցիպալիտետի վարչական սահմանների շրջանակներում իրականացնում է միայն համապատասխան ինքնակառավարվող քաղաքը:

3. Սույն հոդվածի առաջին կետով սահմանված լիազորություններն իրականացնող մունիցիպալիտետի համապատասխան կառուցվածքային միավորում/կառուցվածքային միավորի ստորաբաժանման մեջ զբաղված ծառայողների վրա չի տարածվում սույն Օրենքի 156-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված մունիցիպալիտետի ծառայողների հաստիքային քանակի սահմանափակումը, իսկ մունիցիպալիտետի համապատասխան կառուցվածքային միավորի ղեկավարի վրա՝ սույն Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պաշտոնատար անձանց քանակի սահմանափակումը:

ՀՈՐՎԱԾ 164. Տեղական ինքնակառավարման իրականացումը Վրաստանի բռնազավթված տարածքներում (30.07.2014 N 2585 տարածվի 2014 թվականի հուլիսի 3-ից ծագած իրավական հարաբերությունների վրա)

1. Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մունիցիպալիտետներում 2006 թվականի Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների ընտրությունների հետևանքով ստեղծված տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում, վարչությունները և ինքնակառավարվող միավորների տարածքային մարմինները, լիազորությունն իրականացնում են մինչև տվյալ տարածքներում Վրաստանի իրավասության վերականգնումը և Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը:

2. Եթե սույն հոդվածով այլ բան չի նախատեսված, Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մունիցիպալիտետների լիազորությունները, դրանց մարմինների կառուցվածքը, գործունեության կարգը և լիազորությունները սահմանվում է սույն Օրենքով: Ինքնակառավարվող միավորի տարածքային մարմնի լիազորությունները սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանվում են մունիցիպալիտետի շրջանային վարչության կանոնակարգով: Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մունիցիպալիտետների ավագանիները չունեն իրավունք, ստեղծել ինքնակառավարվող միավորների նոր տարածքային մարմիններ, իսկ վարչության նախագահները՝ իրավունք, նշանակել իրենց ներկայացուցիչներին:

3. Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և մունիցիպալիտետների մարմիններն իրավունք ունեն, այլ ինքնակառավարվող միավորների տարածքում, որտեղ բնակեցված են այն բռնի վերաբնակեցված անձինք՝ փախստականները, որոնք մշտապես ապրում էին Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մունիցիպալիտետների տարածքներում, իրականացնել իրենց սեփական և պատգամված լիազորություններով նախատեսված միայն այն միջոցառումները, որոնք անմիջապես կապված են տվյալ անձանց օգնության և նրանց սոցիալական և կենցաղային պայմանների բարելավման հետ՝ մինչև նրանց մշտական բնակման վայրեր տեղափոխվելը:

4. Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մունիցիպալիտետների վարչությունների նախագահների պաշտոնների ընտրելու և պաշտոններից ազատելու ժամանակ կիրառվում է սույն Օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով սահմանված մունիցիպալիտետի ավագանու նախագահի պաշտոնին ընտրելու և պաշտոնից ազատելու կանոնները, եթե սույն հոդվածով տարբերվող ընթացակարգեր չեն սահմանված:

5. Մունիցիպալիտետի վարչության նախագահին պաշտոնի ընտրելու կամ պաշտոնից ազատելու մասին որոշումն ընդունում է համապատասխան մունիցիպալիտետի ավագանին իր անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Վարչության նախագահի թեկնածու կարող է լինել համապատասխան մունիցիպալիտետի ավագանու անդամը, բացառությամբ ավագանու

պաշտոնատար անձի, կամ ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկան հասակից, որը Վրաստանում ապրել է առնվազն 5 տարի, և որը մինչև ընտրությունների նշանակման օրը վերջին 2 տարվա ընթացքում մշտապես ապրում էր Վրաստանում և համապատասխան մոնիցիցիայալիտետից հարկադրաբար վերաբնակեցված անձը՝ փախստականը:

6. Մոնիցիցիայալիտետի ավագանու անդամի, որն ընտրվել է մոնիցիցիայալիտետի վարչության նախագահ, ավագանու անդամի լիազորությունն ընդհատվում է: Տվյալ անձի՝ ավագանու անդամի լիազորությունը վերականգնվում է վարչության նախագահի լիազորությունների դադարեցման դեպքում, համապատասխան փաստի արձանագրման հաջորդ օրվանից, ինչը մոնիցիցիայալիտետի ավագանին ի գիտություն է առնում և ձևակերպում արձանագրությամբ գրանցման ձևով:

7. Սույն հոդվածի ուժի մեջ մտնելու պահից մոնիցիցիայալիտետի ավագանին իրավագոր է ընտրել նոր վարչության նախագահ: Այլ դեպքում մոնիցիցիայալիտետի համապատասխան պաշտոնատար անձի լիազորությունը երկարաձգվում է սույն հոդվածի առաջին կետով սահմանված ժամկետով կամ սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ մինչև մոնիցիցիայալիտետի վարչության նախագահի ընտրելը:

8. Ախալգորիի, Էրեդվիի, Քուրթայի, Թիդվիի և Աժարայի մոնիցիցիայալիտետների վարչությունների նախագահների հանդեպ չի կիրառվում սույն Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի «ը» ենթակետով նրանց վերապահված լիազորությունների դադարեցման հիմունքը:

ՀՈՂՎԱԾ 165. Օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված իրականացվելիք այլ միջոցառումներ

1. Վրաստանի Կառավարությունը.

ա) Մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը ապահովի մոնիցիցիայալիտետի վարչական սահմաններում գտնվող աշխարհագրական օբյեկտների անվանումների կարգի հաստատումը:

բ) Մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը, Վրաստանի խորհրդարանին առընթեր գործող Չինանշանագիտության խորհրդի հետ նախօրոք խորհրդատվությունների հիման վրա ապահովի մոնիցիցիայալիտետի գինանշանի, դրոշի և այլ խորհրդանիշների որոշման և կիրառության կանոնների սահմանում:

գ) Մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը ապահովի մոնիցիցիայալիտետի գույքի սեփականաշնորհման, օգտագործման և կառավարման իրավունքներով փոխանցման կարգերի, գույքի սեփականաշնորհման մեկնարկային սեփականաշնորհման գնի, գույքի օգտվելու իրավունքով փոխանցման կամ վարձի մեկնարկային գնի սահմանման, նաև վճարումների կանոնների հաստատում:

դ) Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պատրաստի և Վրաստանի խորհրդարանին ներկայացնի օրինագիծ տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների

մասնակցության լրացուցիչ ձևերի ստեղծումն ապահովելու նպատակով:

ե) Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը պատրաստի և Վրաստանի Խորհրդարանին ներկայացնի օրինագիծ տեղական նշանակության բնական պաշարների, այդ թվում ջրային և հողային ռեսուրսների, սահմանման նպատակով:

2. Վրաստանի Կառավարությունը մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ապահովի պետական և մունիցիպալիտետի լիազորությունների լրիվ սահմանազատման համար համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում, նաև անհրաժեշտության դեպքում, մունիցիպալիտետին լիազորությունների պատգամման նպատակով համապատասխան ոլորտների սահմանում և Վրաստանի Խորհրդարանին օրենսդրական ակտի նախագծի ներկայացում:

3. Վրաստանի արդարադատության նախարարությունը մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը ապահովի ըստ գրանցման տվյալների մունիցիպալիտետի գրանցման, գրանցման տվյալների նորացման և հրապարակման կարգի հաստատումը:

4. Մունիցիպալիտետների ավագանիները 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից 6 ամսվա ժամկետում ապահովեն իրենց նորմատիվ ակտերի համապատասխանեցում սույն Օրենքի հետ:

ԳԼՈՒԽ XXI
Եզրափակիչ դրույթներ

ՀՈԴՎԱԾ 166. Օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված ուժը կորցրած նորմատիվ ակտեր

1. 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից ուժը կորցրած հայտարարվի.

ա) «Տեղական ինքնակառավարման մասին» Վրաստանի օրգանական օրենքը (Վրաստանի օրենսդրական տեղեկատու, №2, 09.01.2006, հոդ. 12,

բ) «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության պետական վերահսկողության մասին» Վրաստանի օրենքը (Վրաստանի օրենսդրական տեղեկատու, №22, 19.06.2007, հոդ. 194),

գ) «Վրաստանի մայրաքաղաքի՝ Թբիլիսիի մասին» Վրաստանի օրենքը (Խորհրդարանի տեղեկագրեր, №11-12, 14.03.1998, էջ. 42):

դ) «Տեղական ինքնակառավարվող միավորի գույքի մասին» Վրաստանի օրենքը (Վրաստանի օրենսդրական տեղեկատու, №15, 19.04.2005, հոդ. 101):

2. Սույն Օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած հայտարարվեն «Տեղական ինքնակառավարման մասին» 2005 թվականի Վրաստանի օրգանական օրենքի (Վրաստանի օրենսդրական տեղեկատու, №2, 09.01.2006, հոդ. 12) 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածները:

3. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված օրենսդրական ակտերի ուժը կորցրած հայտարարելու օրվանից իրավաբանական ուժը պահպանում են դրանց հիման վրա հրապարակված օրենքի յուրտում գտնվող նորմատիվ վարչա-իրավական ակտերը, մինչև այս ակտերի՝ իրավագործ մարմինների կողմից Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով չեղյալ համարելը:

ՀՈԴՎԱԾ 167. Օրենքի գործարկման կարգը

1. Սույն Օրենքը, բացառությամբ սույն Օրենքի առաջին–3-րդ հոդվածների, 4-րդ հոդվածի առաջին և 3-րդ կետերի, 5–րդ- 9-րդ, 14–րդ- 149-րդ, 151-րդ, 155-րդ, 156-րդ, 161-րդ և 163-րդ հոդվածների, ուժի մեջ մտնի հրապարակման պես:

2. Սույն Օրենքի առաջին–3-րդ հոդվածները, 4-րդ հոդվածի առաջին և 3-րդ կետերը, 5–րդ- 9-րդ, և 14-րդ -100-րդ հոդվածները, 101-րդ հոդվածի առաջին կետը, 102-րդ–149-րդ, 151-րդ, 155-րդ, 161-րդ և 163-րդ հոդվածները ուժի մեջ մտնեն 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարման օրվանից:

3. Սույն Օրենքի 156-րդ հոդվածի առաջին և 4-րդ կետերը ուժի մեջ մտնեն 2014 թվականի Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների արդյունքների պաշտոնապես հայտարարելուց 120-րդ օրը:

4. Սույն Օրենքի 156-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը և 101-րդ հոդվածի 2-րդ կետը ուժի մեջ մտնեն 2015 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն Օրենքի 155-րդ և 156-րդ հոդվածները գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը, իսկ 159-րդ հոդվածը՝ 2018 թվականի հունվարի 1-ը:

Վրաստանի Նախագահ
Քուբաիսի,
2014 թվականի 5 փետրվարի
№1958-Ոս

Գիորգի Մարգվելաշվիլի